


ԱՐՏԱՎԴԻ ԱԽԳԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՇՏՊԱՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԱԿԳԸ

9 (47.925)

գր-7

Հ - 77

Հայոց ժամանակակից մասնագիւղ հանդիպութիւն  
Հայոց և Ազգի խոհեմայական մշակութային  
Հայոց և Ազգի խոհեմայական մշակութային  
Հայոց և Ազգի խոհեմայական մշակութային

## Արտաւազդ Աւագեան


առօսութ բրածութիւն

առօսութ բրածութ Ո զրու և պահանջան թիւնացաւ հայութիւն  
առօսութ բրածութ առօսութ առօսութ հայութիւն  
առօսութ բրածութ առօսութ առօսութ հայութիւն  
առօսութ բրածութ առօսութ առօսութ հայութիւն

# ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԱՎԳԸ

Գ Իրատարակչութիւն

Ռ. Առաքելյան պատճեն և արձունագրութիւն հնար 1965թ.



Երեւան - 2005

1888

Նուիրում եմ խարբերդից լուսահողի ծնողներին՝

Սիրայէլի ու Ազմիի խնկելի յիշատակին:

Հեղինակ

## Անձում դրաստող

### Արտավազդ Աւագեան

Հայաստան. պաշտպանել հայրենիքը և ազգը (Բ հրատարակչութիւն  
- Երևան, «Նախիջենան» հրատ., 2005.- 140 էջ:

Արտավազդ Աւագեանը Սփիլիքի այն գործիչներից է, որոնք ճշմար-  
տուրինն ասելու արարքը խիզախօրէն զառում են «Երկրի հեղինակու-  
թինը պահելու» շինծու, ուստի մողուցմուն «հայրենասիրութիւնից»:

Երկրի հեղինակութիւնը պահելու և բարձրացնելու մէկ եղանակ ու  
ճամփայ կայ Արտավազդ Աւագեանի նմանների համար՝ Հայաստանը  
աշխարհի առաջադէմ երկրների շարքում տեսնելը:

Գրոյլում ամփոփուած յօդուածները, որոնց մեծ մասը տպագրուել  
է Սփիլիքի անգիտակեզր մամուլում, մի քանիսը նաև հայաստանեան  
թերթերում, յատկապէս երիտասարդ սերնդին ցոյց են տալիս, թէ դրսի և  
ներսի ինչ ուժեր են մեզ խանգարում հասնելու մեր նպատակներին:

## Որդերությանասուային ք

© Ա. Աւագեան, 2005թ.  
© «Նախիջենան», 2005թ.

NAKHJEVAN Publishing House

Ժողով - 2005



Ա. Աւագեանը ծնողների եւ եղօր, Զաւենի հետ, 1955թ.

ԶԳՈՒՇԱՑԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ԲԱՆԱՀԻՐ ՔՈ	
ՄԵԿ ԱՇԽԱՐԺԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ -----	7
ՀԱՅԱՍՏԱՆ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	10
ՄՈՒՋ ՈՅՁԵՐ -----	14
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ	
ԱՐԵՏԱՑՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ -----	20
ՀԱՅԱՍՏԱՆ - ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ -----	25
ՀԱՅԱՍՏԱՆ - ԿԱՏԱՐԻ ԳՐՈՅ	
ՀԱՅԵՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՎ ԴԵՄ -----	32
ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ -----	37
ՄԱՐԴՈՒ ԻՐՎԱՎՈՒՔՆԵՐԸ -----	39
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՉԱՐԺԱՅԻՆ ԽՈՐՃՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ -----	42
ՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՏՆԵՏԵՍՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ -----	48
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔԱՌՉՊԱՆԱՍԱՆ ՆԱԽԱՐԵԱԼՆԵՐԸ -----	51
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ -----	54
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՅ -----	57
ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 13 ՏԱՐԻ -----	62

ՄԱՍՈՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՈՐՄԱԿԻՐՈՒԵՐԻ) ԱԼՐԱՅ	
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ-----	69
ՀԱՅԱՍՏԱՆ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՅՈԳԵԿՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ -----	74
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԵԳՎԱՄԱԾ -----	79
ՕՐԵՆՔԸ -----	80
ԲՐԵԱՆ ԼԻՏՈՎԿԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ -----	92
ԱՄԵՆ ՈՐ ՊԵՏք Է ԻՄԱՍԱ ԱՐՏՎՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՃՈՒ ՄԱՍԻՆ -----	107
ՄԻԱՅՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ -----	118

ԲՐԱՅԱՆԱԿՈՒՅԹԻՆ	
ՀԵՄՆԻ ԽՐԱՄՈՒՐՈՒ ՀԱՅՈՒՍԱՍՈՍԱ	
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	7
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	11
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	13
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	14
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	15
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	16
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	17
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	18
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	19
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	20
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	21
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	22
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	23
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	24
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	25
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	26
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	27
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	28
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	29
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	30
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	31
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	32
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	33
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	34
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	35
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	36
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	37
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	38
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	39
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	40
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	41
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	42
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	43
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	44
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	45
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	46
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	47
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	48
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	49
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	50
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	51
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	52
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	53
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	54
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	55
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	56
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	57
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	58
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	59
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	60
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	61
ՀԱՅՈՒՐ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԾՈՒՅԹ	62

**ԶԳՈՒՇԱՑԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵԱՍԱՉԻՐ ՔՈ**

**ՄԵԿ ԱՇԽԱՐԴՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԵՐԻՆ**

Հայերիս անհրաժեշտ է ոչ միայն հասկանանք միասնության հոյժ կարևոր նշանակությունը հայոց պետականության գոյատևման համար, այլ նաև տեսմենք այն ուժեղը, որոնք առաջնորդում են աշխարհի հզոր ներքի արտաքին քաղաքանությունը, որը կարող է իր ազդեցությունն ունենալ Հայաստանի վրա:

Անցած ուրաքանչ տարիների ընթացքում մեծ տերությունները ավելի ու ավելի են միջամտել այլ երկրների գործերին՝ աստիճանաբար վերածվելով համաշխարհային ոստիկանների: Նրանք ստեղծել են «Նոր Աշխարհակարգ», ինչպես Պարսից ծոցի պատերազմի ժամանակ հայտարարեց ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բրուչը:

«Նոր Աշխարհակարգի» իրական իմաստը բոլոր պետությունների սերտաճումն է մեկ պետության համաշխարհային տնտեսական իշխանություն հաստատելու համար: Ազատ և անկախ պետությունները անեծք են Նոր Աշխարհակարգի կողմնակիցների համար: Միջազգային և տարածաշրջանային հաստատությունները միահյուսվելով մեկ ընդհանուր համաշխարհային կենտրոնի մեջ, հիմք կհանդիսանան, որ պեսզի պետությունները կառավարվեն մեկ «համաշխարհային կառավարության» կողմից, որը իր վերջնական խորը կունենա աշխարհի գործերում արտահայտելով հզորների շահերը: Թույլ երկրների կենսական շահերը կստոր ողափեն հզոր երկրների շահերին: Մեծ տերությունները կփորձեն վերջիններին ուժով համոզել, որ իրենց արմատական շահերը նաև ցանկացած այլ երկրի շահերն են:

Նոր Աշխարհակարգի ժամանակ միջազետական սահմանները կդառնան անտեղի, տարածքային վեճերը կընկալվեն որպես անցյալի մնացորդ և Նոր Աշխարհի անվտանգության համար սպառնալիք: Ժողովուրդների ազգային գիտակցությունը միաշխարհական զաղափարախոսությամբ թույլացնելու նպատակով «Նոր Աշխարհակարգի» պաշտպանները կմշակեն քաղաքանություններ և կծեռնարկեն քայլեր, որոնք պիտի քողարկվեն «զորալիզմ» և «ինտերնացիոնալիզմ» զաղափարների անվան տակ: Կիսուընդոտվի ազգային պետությունների ստեղծումը և կիրախուսվի քազմազգ երկրների ծևափորումը: Այդինի երկրներում կընդունվեն այնպիսի նոր օրենքներ, որոնք կիրախուսեն և նույնիսկ կարագացնեն ժողովուրդների ծովովը այն նապատակով, որ ոչ մի երնիկ խումբ չհավակնի որևէ տարածքի՝ պատմական կամ ժողովր-

դագրական հիմքի վրա: Որքան թիշ լինեն պիտույքունները, այնքան հեշտ կլինի դեկավարել աշխարհը: Որքան թիշ էքնիկ խմբեր և փորքամասնություններ գոյություն ունենան, այնքան ավելի թիշ կլինեն ազգամիջյան հակամարտությունները: Ինչքան շատ լեզուներ և մշակույթներ ծովական կամ անհետանան, այնքան ավելի հեշտ կլինի գրադարձ ձեռնարկատիրական գործունեությամբ և վաճառել միանման ապրանքատեսակներ ամրող աշխարհում:

Միջազգային հաղորդակցության համակարգերը, որոնք դեկավարում են նոյն «գլորավ» ուժերը, նույնպես աշխատում են այդ ողջությամբ: Ազային ազատագրական և ինքնորոշման նպատակաուղղված ճնշված և փոքր ժողովուրդների շարժումները կրնկալվեն որպես «նոր չարիք», որի դեմ միջազգային հանրությունը պիտի պայքարի մեծ տերությունների գլխավորությամբ: Սա հաստատվել է ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Մայլեն Օլբրայի հայտարարություններով: Նա հայտարարեց, որ «ՆԱՏՕ-ն նոր թշնամի ունի. պետությունների աղքատության, սահմանային խնդիրների և էքնո-ազգայնականության հետևանքով առաջացած անկախությունը»:

Քաղաքականություն մշակող հաստատությունների մի ամրող քանակ պատրաստ է ազգային ազատագրական պայքարը սահմանելու որպես «էքնիկ հակամարտություն»: Նրանք կանխամտածված հակադրվում և միջամտում են ազգային-ազատագրական պայքարներին՝ ծգտերով անկայունացնել իրադրությունը և նվազագույնի հասցնել հակամարտության հետևանքով ուժեղ և անկախ պետությունների առաջացման հնարավորությունները: Դա սպառնալիք կլիներ նրանց համաշխարհային տիրապետությանը: Դա կարող էր նշանակել աշխարհի հզորների կողմից օգնություն այն երկրներին, որոնք իրենց վիճելի սահմաններում ունեն սահմանային խնդիր և հատկապես ազգային-ազատագրական պայքար: Պետությունների տարածքային ամրողականությունը պահպանելու պատրիվակով իրականացվող այս քաղաքականությունը կարող է իրականացնել նաև նոր արյունահետությունների: ի վճառ իրենց ազատության համար պայքարող ժողովուրդների:

Աշխարհի այս ձևափոխությունը արագացավ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ ստեղծվեց « ժողովուրդների ապագայով մտահոգված» հարյուր հոգիանոց ինժեներների մի խումբ, որի առաջին գործը եղավ Վերսայի հաշտության պայմանագիրը: Այս խումբը ձևափորեց «Միջազգային Հարաբերությունների ինստի-

տուտի» միջուկը, որը հետագայում հիմնեց Նյու Յորքի «Արտաքին հարաբերությունների խորհուրդ» և Լոնդոնի «Միջազգային Գործերի Թագավորական ինստիտուտ» մասնաճյուղերը: Այդ ժամանականից ի վեր, այս համակարգը, որ ներկայացնում է հզոր տնտեսական և քաղաքական շահեր, վերածվել է այսօրվա Յորի խմբի և ներկայումս փորձում է Ռուսաստանին եւս ներքաշել իր մեջ որպես ութերորդ անդամ: Խշխանության այս կենտրոնացումը իրագործվել է Միավորված Ազգերի Կազմակերպության միջոցով: ՄԱԿ-ը ցուցադրաբար ստեղծվեց այն պատրանքով, թե վերջ պիտի դնի պատերազմներին(այդ դեպքում ինչո՞ւ բացատրել Կորեայի, Վիետնամի, Արգենտինայի, Պարսից ծոցի, Սոմալիի և Բունիայի պատերազմները): Դեռ ավելին՝ ՆԱՏՕ-ն, որի անդամ է Թուրքիան, վերածվել է ՄԱԿ-ի իրավապահ քայլ: Սրանով կարելի է բացարել Յորի խմբի կողմից և Թուրքիային, և Ազրբեջանին ցույց տրվող օգնությունը:

Յորի խումբը ներառում է հետևյալ երկրները՝ Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Կանադա, Շապոնիա և ԱՄՆ:

Այս Նոր Աշխարհակարգում հայ ժողովրդի կենսական շահերը պաշտպանելու համար Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները ավելի ու ավելի հզոր ժողովուրդների կարիք ունեն: աջակցված ժողով տնտեսությամբ, բնակչության աճով և ազգային զարգացման աջակցությամբ:

### 1997թ. Մեպտեմբեր

Արտավազդ Ավագյան,  
Անդրանիկ Պետրոսյան

Armenian Reporter, 1997, 13 september  
«Նախիջևան», 2004 թ. հունվար, թիվ 26

Արդեն 11 տարի է, ինչ Հայաստանը անկախ է: Սակայն զարմանալի չէ՝ միքե, որ ավելի քան մի տասնամյակ անկախությունից հետո է երկիրն իր կրթած եւ աշխատունակ ժողովրդով դեռևս գտնվում է տնտեսական տագնապի մեջ:

Ճիշտ է որ Հայաստանը շրջափակված երկիր է, սակայն անկախ այլ իրողությունից՝ մի ժողովրդ տնտեսական բարվոր վիճակը կախում ունի առավելապես իր դեկավարության խելացի եւ դրական ընթացքից. դեկավարություն, որը ոչ միայն տոգորված լինի հայրենասիրությամբ և զոհաբերության ոգով, այլ նաև տեղյակ լինի իր քաղաքացիների տագնապների եւրիշանը եւ խորին:

Դեռևս 1991-ից նորաստեղծ անկախ Հայաստանի անփորձ դեկավարները տեղյակ չեն, թէ որոնք էին այն հիմնական կովանները, որոնցով պիտի ստեղծվեր առողջ տնտեսական վիճակ: Եթե ժողովրդին տրված լիներ իր հոգսերը հոգալու կատարյալ ազատություն, ապա տնտեսությունը ծաղկած կլիներ անկասկած: Միայն ազատ ժողովուրդները կարող են ստեղծել հարատև բարգավաճություն:

Միայն ազատ ժողովուրդները կարող են ստեղծել այնպիսի պետություն, որտեղ այլ բարգավաճությունը նենգործեն չկաշկանդի անօրեն տուրքերով և չխափանվի կառավարության կաշառառու պաշտոնյաների կողմից:

Ազգային տևական բարորություն ստեղծելու շատ կարևոր մի ազդակ է ապահով և պար եշտ դրամական համակարգ ունենալը՝ հիմնված 100 տոկոսով ուկու պաշարի վրա: Եթե ժողովուրդը ուկի ունի և կամ ապահովությունը, որ ըստ պահանջել հարկին կարող է ազատորեն իր պետական բորբագանքը փոխել ուկու, ապա այլ ժողովուրդը ունի այն, ինչ որ կոչում են «վերոյի ուժը» այսինքն՝ իր քաղաքական առաջնորդների կասկածելի դրամական գործառնությունների վրա արգելք դնելու վերոյի հնարավորություն և իրավունք:

-՞Վ ում պիտի վերահսկի:

Թորադրամը ուկի փոխարինելու կարելիության պակասի հետևանքով երկրի քաղաքական դեկավարները կարող են ժողովրդին հեշտորեն ստրկացնել:

Հարցի բուն եւրիշուն այն է, թէ ո՞վ ում է վերահսկում քաղաքական ներկացները ժողովուրդին, թէ՞ ժողովուրդը քաղաքագետներին:

Ծակատագրական սխալ էր Հայաստանի ուկու հանքերի շահագործումը հանձնել օտարներին:

Հանրապետական վարչածեր մարդու կողմից ստեղծված կառավարության ամենակատարյալ պետական եղանակն է: Հանրապետությունը պահպան է իր սահմանադրության վրա, որը կառավարման երեք գիշատիք բաժանմունքներին՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին ապահովում է հավասար, բայց իրարից անկախ գործառնություն: Այլ խորպով իշխանության այս երեք թերից որևէ մեկը ենթակա չէ մասին: Օրենսդրական պետը է ժողովովի կողմից ընտրվի տեղական շրջանակներում՝ առանց միջամտության: Ոչ մի անհատ իրավունք կարող ունենալ ինքնական որոշելու ազգի ճակատագիրը:

Այսօր ինչ որ տեղի է ունենում Հայաստանի տնտեսական բնագավառում, միայն անհատական ազահության հարց չէ: Դա շատ ավելի ժամանակշիռ երևույթ է: Հայաստանը իր տնտեսությունը կարգի բերելու համար այնպիսի աղբյուրներից է ֆինանսական փոխառությունները ընդունում, որոնք միայն երևութափեն են շատ հրապուրիչ և դյուրամատչեցին. մինչդեռ իրականում խիստ վտանգավոր են, քանի որ նպատակագրված են շահագործելու և կեղեցելու երկրի արդյունաբերությունը:

Այդ օգնությունները տրվում են ոչ միայն Միջազգային Դրամական հիմնադրամին և Համաշխարհային Բանկին որոշակի տոկոսներ վճարելու պայմանով, այլև հասուկ նախանշված բնագավառների մեջ օգտագործելու պարտավորությամբ. ազդակներ, որոնք միջոցներ են՝ քանդելու ժամանակուրդների տնտեսությունները: Ֆինանսական օգնության դիմաց երկրին պարտադրված հիշատակած և չիշատակված խիստ ծանր պայմաններն այնպիսին են, որ կասեցնում են երկրի առաջընթացը: Օրինակ՝ կառավարությանը պարտադրում են, որ երկրի հասուրաքանչյուրների վրա այլ աղբյուրները քայլայող ու կազմալուծող տուրքեր ունի: Շարտարակիտական ծեռնարկությունների, զյուղատնտեսության և փոքր անհատական ծեռնարկությունների վրա դրված բարձր ու խելացի հարկերը պատճառ են դառնում, որ նրանք գոյատևել չկարողանան և զոհ դառնան միջազգային (օրինակ՝ Չորջ Սորոսին պատկանող) հիմնարկություններին, որոնք այլ գործառություններին տիրանում են չնշին գմբերվ, բայց արդյունքից կորզում են առյուծի բաժինը:

Կառավարությունն իր հերթին Համաշխարհային Բանկից և Միջազգային Դրամական հիմնադրամից շարունակում է գումարներ մուրալ՝ իշխանությունն իր ծեռքին պահելու եւ երկրի կառավարելու համար, մինչդեռ տնտեսությունը շարունակում է լճանալ:

## Արտագաղթի մեկ այլ ազդակ

Արտարին ֆինանսավորման մեկ այլ աղետաբեր հետևանք է օտար մշակույթների և բարբերի պատվաստումը նորաստեղծ պետության մեջ: Օտար մշակույթի և բարբերի ներքափանցումն ապահովում են երկրում կրթական և մարդասիրական հիմնարկներ հիմնադրելու միջոցով: Դրանք երիտասարդ մուտքորականությանը մղում են ավելի ու ավելի շատ արտագաղթելու աշխարհի տարրեր երկրներ: Հայաստանում գոյություն ունեն հայկական կրթական բարձր մակարդակի բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտական հիմնարկներ՝ գիտահետազոտական ինստիտուտներ: Դրանք կարիք ունեն միայն ֆինանսական օգնության և նման օժանդակություն ստանալու դեպքում ի վիճակի են երիտասարդ սերնդին կրթելու առավելագեն հայկական նկարագրով՝ միաժամանակ ապահովելով հայ գիտնականի և ուսանողի կապն ու գործ ակցությունը աշխարհի հետ: Կարծ ասած՝ Համաշխարհային Դրամատան և Միջազգային Դրամական հիմնադրամի արիետականորեն առաջադրած շինուափություններն ու հատկացումները առաջացրին լճացած տնտեսություն: Դա հայ մշակույթի վրա օտար ազդեցության հետ միացած՝ հանգեցրեց այսպես կոչված «ուղեղների արտահանման», ինչը տկարացրեց նորաստեղծ անկախ Հայաստանը:

Այս ամրողի բուն նպատակը, վերջին հաշվով, հայկական ողու և հայ ազգի ծրագրված քայլայումն է, երկրի բնակչության պակասեցումը և Հայաստանը «Միջազգային մի հողամաս» դարձնելը:

Վիճակը ողբերգականորեն ծանր է այն իմաստով, որ եթե կառավարությունը մերժի ընդունել Միջազգային Դրամական հիմնադրամի և Համաշխարհային Դրամատան հատկացումները, ապա այդ ուժերը կարող են երկիրը կանգնեցնել այդ նոյն ֆինանսական առյութներից դրամական օժանդակություն ստացող դրացի որևէ երկրի կողմից պատերազմ սանձազեցնելու վտանգի առաջ:

Պետք է ընդգծել, որ երբ Հայաստանի կառավարությունը անկարող է լինում ետ վերադարձնել փոխառությունը, պարտատերերը սպառնում են կասեցնել նոր հատկացումների տրամադրություն: Սակայն «սպառնալիքներից» որոշ ժամանակ անց՝ պարտատերերը հանկարծ այսպես կոչված «մարդասիրական» մոտեցում են ցուցաբերություն, նորից համաձայնում են ֆինանսական ներարկումներ կատարել՝ բայց այս անգամ ուղակի պարտադրելով նոր փոխառությունները օգտագործել վարկատու

կազմակերպությունների որոշած նպատակների համար:

Օթքավայի համարանի պլոտեսոր Միքայել Կոսիդովսկին այս կացությունը ամբողջովին լուսաբանող մի հոդվածով հանգամանորեն և մանրամասնությամբ բացատրում է, թե ինչպես Միջազգային Դրամական հիմնադրամը և Համաշխարհային Դրամատունը հմտորեն ծրագրում և վարպետորեն գործադրում են այս կամ այն երկրի տնտեսական և ընկերային կառուցվածքի վիլոգումը՝ այդ երկիրը հասցնելով ստրկական վիճակի:

Ցանկացողները պլոտեսոր Միքայել Կոսիդովսկու հոդվածն ամրող ջորյամբ կարող են կարդալ հետևյալ վեբայցով՝ [web: http://www.emperors-clothes.com/articles/chuss/instru.htm](http://www.emperors-clothes.com/articles/chuss/instru.htm)

## Մի քանի վիճակագրական հաստատումներ

1. Միջազգային Դրամական հիմնադրամը չի բաջակայում ճարտարագիտական խոշոր ձեռնարկների հիմնումը Հայաստանում: Դրա պերճախոս օրինակը Հայաստանում «Զեներալ Սորորզի» և «Միցորիշի» գործարանների մասնաճյուղեր հիմնելու ծրագիրն էր, որը ենթադրում է, շնորհական ամերիկյան արտաքին գործերի նախարարության կողմից:

2. Արդյո՞ք Հայաստանը իր ճակատագրի տնօրինումը ախտի զիջի համաշխարհային ոչ ընտրյալ մի դիվանակալության, որի նպատակն է ենթադրականորեն շարունակել մեր երկրին պարտադրել այն քաղաքականությունը, որն արդեն երկրում առաջացրել է համատարած տնտեսական քառու:

Կամ՝ արդյո՞ք Հայաստանը պիտի կարողանա իրեն վերապահված իրավունքով ընտրելու մի այնպիսի կառավարություն, որը իշխանություն ունենա միջազգային ֆինանսական կապիտալիզմի անդորր շահագործումից պաշտպանելու իր ժողովուրդը և իր երկրի բնական հարստությունները:

Armenian Reporter, 2001, 8 december

## ՍՈՒԹ ՈՅԺԵՐ

Աշխարհիս պատմոթեան ամբողջ տեսողութեան գտնուած են ամբողջատիրական ոյժեր, որոնք խանգարած են մարդոց հանգիստը՝ անկայունութիւն առաջացուցած են միջազգային յարաբերութիւններուն մէջ, և ստեղծած՝ պատերազմներ եւ անասուուած (արէխտական- Ծանօթ. խմբ.) ու գաղտնի ընկերակցութիւններ: Հետեւարածայր աստիճանի կարեւոր է հապանցիկ ակնարկով մը ջանք ընել աւելի յստակորեն հասկնալու համաշխարհայնացման (գլորալիզացիոն) շարժումը ներկայ աշխարհի մէջ:

Քննարկութիւն մը Հիսիսային Ափրիկէի մէջ կատարուած պեղումներու արդինքին, պիտի յայտնաբերէ գոյութիւնը Քրիստոնէական քարզաւած քաղաքակրութեան մը: Այդ շրջանի տիրապէտող դէմքն էր Սուրբ Օգոստինոս Հայրապետը: Խսլամական կրօնի ծագումէն եւր (632 թուին) խսլամական հորդաներ արշաւեցին Քարքէն, և սուրբ ոյժով գրաւեցին զայն 752 թ.ին. անոնք աւերնցին նաեւ Քիլամդական Քրիստոնէայ Կայսրութեան մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը (այժմ Իսրայելու):

Համաշխարհայնացման գօրութիւնը ու «համաշխարհային մէկ կառավարութիւն»ի տեսիլը նորություն չեն: Դարերու ընթացքին գտնուած են անհատներ որոնք ունեցած են նման տեսիլներ, սակայն, ասոնք չեն իրականացած մինչեւ 1760 թուականը, երբ այն գոյութեան եկալ Տիր Իլլիմինարի (The ILluminati) անոնի տակ: Իլլիմինարի-ն եղաւ յիացումը ծնունդով Հրեայ Ադամ Ուէյշոփի (Adam Weishaupt) որ ընդունելով կարոլիկութիւնը՝ միանգամայն եղաւ Յիսուսական (Jesuit), ու իր դասախոս պաշտօնավարեց Պատրիոյ Ինկուլքատ համալսարանի մէջ՝ ուսուցանելով եկեղեցական կանոնագրութիւն: 1770-ին ան իրաժարեցաւ քրիստոնէութեան ու այնուհետեւ պաշտօնի կոչուեցաւ Ռոշիլներու (Rothchild's) դրամատան կողմէ՝ նախաձեռնելու և կազմակերպելու Տիր Իլլիմինարի-ի (Կեղծ Լուսակիրը): Ան ամրողացուց այս գործը 1 Մայիսի, 1776-ին: «Ծրագիրը»՝ որ ներշնչուած էր կարգ մը արմատական վիլխովայութիւններէն, և ուսուցուած խորհրդաւոր ու գաղտնիմաց տանիմարքացիի մը կողմէ՝ Քոլմըր անունով. Ադամ Ուէյշոփի կատարելագործեց կազմակերպչական կառոյց մը, որ պիտի դեկավարէր հակարիխատոնէական և հակամիապետական-յարձակողական շարժումը՝ համաշխարհային տարածքով՝ այն ակնկալութիւնով որ

անոնց անկումէն եւր Իլլիմինարին պիտի տիրէր աշխարհի: Նիու նոր թայմզ թերթին 23 Յունուարի, 2000 թուակիրին մէջ երեցաւ երկարապատում յօդուած մը «Տիեզերքի Տէքերը» վերտառութեամբ՝ Ռոշիլներու Տուն-ի մասին: Ըստ յօդուածագիրին, Ռոշիլները 15 տարիներ տնտեսական նեցուկ կանգնեցան Ֆրանսական Յեղափոխութեան մէջ կուող երկու հակընդոքէմ կողմերու ուղմիկներուն: 1964թուին, ան իշխեց Անգլիոյ դրամատնային դրութեան վրայ, ու պարտադրեց ինք-զինք Քրիստոնէայ Եւրոպայի վրան, ու կառավարութիւնները իրարու դէմ հանեց իր տնտեսական ոյժին միջոցաւ:

Ռոշիլներու Տունը նաև ֆինանսաւորեց Քարլ Մարքսի սկսած շարժումը 1848 թուին, ու միջոց դարձաւ Համայնավարութեան՝ ամբողջ աշխարհի վրայ տարածուելուն: Ան ֆինանսաւորեց նաեւ մոր ոյժերը՝ եւ կեղծուատիր միջոցներու դիմելով ատելութիւն սփուեց ժամանակակից Ռուսական իշխանութիւններու դէմ: 1917 թուին անոնք սպաննեցին Զարը, անոր կինը, չորս դուստրերը ու մանչ զաւակը, նաեւ միլիոնաւոր քրիստոնէաներ՝ արինահելութեան և բշուառութեան մատնելով Ռուսիան՝ յաջորդ 65 տարիներուն: 1920թուին այդ մոր ոյժերը իրենց հակակշոնին տակ առնելով Ռուսիան, միացան Թուրքիոյ մոր ոյժերուն հետ ու գրաւեցին պատմական Հայաստանի պատկանող հողերը՝ մեծ պետութիւններու խլացուցիչ լուրթեան մէջ:

Սուր ոյժերը, զորոնք գոյութեան թերաւ Ադամ Ուէյշոփը, ժամանակի ընթացքին հող գտաւ նաեւ Ամերիկեան նոր հանրապետութեան մէջ անոր կազմաւորման տարիներուն: 1791-ին Ռոշիլները կարուցան մենաշնորհի տիրանալ Ամերիկայի դրամատնային ցանցին մէջ: Մենաշնորհի այս համաձայնագիրը վերջ գտաւ 1811 թուին, որուն յաջորդեց 1812 թուի Անգլիա և Սիացեալ Նահանգներ պատերազմը, որուն նպատակն էր պարտադրել Սիացեալ Նահանգներու, որ ընդունի շարունակութիւնը 20 տարուայ անձնական երկրորդ դրամատան: 1828-ին, Էնտրի ներքըն Սիացեալ Նահանգներու նախագահ ընտրելով յայտարարեց՝ ըսելով. թէ «Ես չեմ հաւատար որ ազգային դրամատուն ունենալը օրինութիւն է, այլ անէծք մը՝ հանրապետութեան մը համար»: Երբ ան ընտրուեցաւ երկրորդ շրջանի մը համար, ան բացարձակական մերժեց վաւերացնել 2-րդ դրամատան գործարարութիւնը 10 Յուլիս, 1832-ին: Մինչեւ 1861, գոյութիւն չուներ անձնական մենաշնորհեալ դրամատուն, որուն հետեւանքով Սիացեալ Նահանգներ բարգաւաճեցաւ առանց պարտի: 1722-ին սկսեալ, մեծ թիւն գերիներ ներածուեցան Ա. Խորարիլսէն Զարլըսթ, և Հարաւային

Քերըլայնա, որը ժամանակի ընթացքին պատճառ դարձաւ Քաղաքացիական պատերազմի՝ վայրագործին սփռելով Ամերիկայի տարածքին վրայ: Խսպան-Ամերիկեան պատերազմը ճամբայ բացաւ առաջին անգամ ըլլարով՝ միջազգայնականներու մուտքին, որոնք պարտադրեցին ամերիկայի, որ միշրճուէր արտաքին պատերազմներու մէջ: Անկէ ի վեր, Ամերիկայի համար սկզբունքային դարձաւ ուրիշ ազգերու եւ երկիրներու գործերուն միջամուխ դառնալը՝ հակառակ ճօրծ Ռաշինկը ազգարարութիւններուն: Ռաշինկը ըմբռնեց թէ ուրիշ ազգերու ներքին գործերուն միջամուխ ըլլալը կրնար խիստ աղետալի ըլլալ հետագային՝ Ամերիկեան Հանրապետութեան համար:

Անցնող 100 տարիներու ընթացքին «Քարի Ամերիկա»-ն փխուսած է ու դարձած ազգ մը՝ մեծամասնութեամբ Քրիստոնեայ, սակայն ապակրօն մարդկայնապաշտ: Անիկա կորսնցուցած է հասարակաց անգիր օրէնքի դրութիւնը՝ հիմնուած Քրիստոսի օրէնքներուն վրայ, ու որդեգրած է օրէնքի դրութիւն մը, որ կը բխի անհատական զգացումներէ եւ դատումներէ: Գոյութիւն ունէր նախապէս մաքրակրօն կեանք մը Աստուծոյ ենթակայ, ամերիկեան պատմութեան առաջին հարիւր տարիներուն ընթացքին:

Ալեքսիզ Տո Թորլվիլ (Alexis De Tocqueville) ֆրանսացի դիւանագէտ նը, ճամբրորդել եար Ամերիկայի տարածքին՝ անոր պատմութեան սկզբնական շրջանին, այսպէս յայտարարեց. «Ամերիկան մեծ է, քանի որ Ամերիկան բարի (կամ բարեսէր) է: Եթի Ամերիկան դադրի բարի ըլլալէ, պիտի դադրի նաև մեծ ըլլալէ»: (De Tocqueville. Democracy in America, in 4 volumes. 1835և40)

20-րդ դարու սկիզբը տեսաւ մուր ոյժերու տակաւ ներմուծումը «Քարի Ամերիկա»-ին մէջ: 1913-ին անոնք նենգութեան դիմելով հաստատեցին անհատական դրամատնային դրութիւն մը տոկոսային գործառնութեան հիման վրայ, զոր կոչեցին Դաշնակցային Պահեստ (Federal Reserve): Ասիկա իրաւունք տուաւ միջազգային դրամատուներու, որ դրամ տպեն եւ տոկոս պահանջեն անոր վրայ: Ասոր իբր հետեւանք, անոնք յաջողեցան ծեռ անցընել (գողնա) այն հարսութիւնը զոր գոյացուցած էր Ամերիկեան ժողովուրդը: 1965-ին կառավարական ոյժ գործածուեցաւ արգիլերու աղօքքը եւ Աստուածաշունչի ընթերցումը հանրային դպրոցներէն ներս: Միև կողմէն, անոնք քաջալերեցին գուհիկ հագուելակերպի կանոնագրութիւնը եւ սեռային անբարոյականութիւնը: Աւելցան կառավարական կրթական նպաստ-

ները. մինչ միւս կողմէն իջաւ դպրոցներու կրթական մակարդակը: Տակաւ ածող Կառավարական ըմկերայնացումը (Increasing governmental socialism) պատճառ դարձաւ, որ ազգային մշակոյթը տակաւ ապականի: Քրիստոնեայ աստուածարանական դպրոցներէն ներթափանցեցին ապակրօն մարդկայնապաշտութեան ուսուցումները, որոնք իրենց ազդեցութիւնը ունեցան նաև Հայաստանեայ Ազգային Եկեղեցին ու անոնց առաջնորդներուն վրայ: Անզիտակ Ամերիկան արդէն կալանաւորուած էր ու կը գործածուէր մուր ոյժերու կողմէ, ոչ միայն յեղաշրջելու իր հոգիին նկարագիրը, հապա միջոց ծառայեցնելու զայն ու միջամուխ ըլլար ուրիշ ազգերու ներքին գործերուն: Հետեւանքը այն եղաւ, որ Ամերիկա դարձաւ ոչ համակրելի ազգութիւնը:

Լունեցաւ հանրայայտ Եկեղեցական առաջնորդի մը հետեւեալ կարգախօսը. «անմիջական անհրաժեշտութիւնը՝ Միջին Արեւելիք Եկեղեցիներու Խորհուրդին վերակառուցման»:

Պատասխան՝ Անհրաժեշտ չէ որ Հայոց Եկեղեցին մասնակից դառնայ ուրիշ Եկեղեցիներու եւ կրօններու վերակառուցման աշխատանքին. հերիք է որ ան պահպանէ իր ունեցած 1700 տարիներու Սուրբ Գրային ճշմարտութիւնները:

Երկրորդ առաջադրութիւնը՝ «Քրիստոնեութիւնը ոչ բռնութեանական կոսնը մըն է:

Պատասխան՝ «Ոչ բռնութեանական» ասոյքը հնարուած է մուր ոյժերու լողմէ: Քրիստոնեութիւնը կը ջատագովէ ճշմարտութիւնը ու կը հակառակէ շարին: Ապակրօն մարդկայնապաշտութիւնը իմացական պատերազմ է ճշմարտութեան դէմ:

Երրորդ առաջադրութիւն՝ «Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը մերենական ուղիղ սարքն է, ինչպէս նաև հարազատ շրջանակը՝ տիեզերական ճակատամարտ շղթայագերծելու համար»:

Պատասխան՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը գործիք է մուր ոյժերուն՝ ստեղծելու համար մէկ աշխարհի բաղարական եւ տնտեսական զերութեան դրութիւնը, Բարելոնի Աշտարակ մը: Սերենական վերջնագոյն սարքը՝ պատերազմ շղթայագերծելու:

Պողոս Առաքեալի

Կորնթացիներու Ուղղած Առաջին Նամակէն,  
Գլուխ 3. 10-11

Աստուծոյ ինծի տուած շնորհին համաձայն, եւ՝ որպէս փորձառու

ճարտարապետ՝ իիմ մը դրի են. խսկ ուրիշ մը կը շինէ անոր վրայ: Սակայն, ամէն անձ ուշաղիր պէտք է ըլլայ՝ թէ ինչպէ՞ս կը շինէ:

Օրինակ մը միայն, բազմարի հակա-Քրիստոնեայ մուր ոյժերէն. Գաղտնիմաց (Occult) կազմակերպութիւններէն «Համաշխարհային Քարիկամեցողորդին» (World Goodwill), և «Լիսիգ խնամակալորին» (Lucis Trust), իիմնուեցան Ալիս Պէյլիի կողմէ որ աստուածիմաց (theosophist) մըն է (կրօնական վարկած մըն է, որ իիմնուած է Աստուծոյ բնութեան շորջ խորհրդատոր ինքնահայեցողորդեան վրայ): Անոնք իրատարակեցին զովազդի գրքոյկ մը «Միջազգային Միասնականութեան Մարտահրաւելը» խորագիրով: Ասիկա խնամքով կը բացատրէ, թէ պէտք է զօրաւիզ կանգնիլ Սիացեալ Ազգերու ջանքերուն միացնելու բոլոր ազգերը և ջնջելու ներկայիս գոյութիւն ունեցող ազգայնականութեան ծեւերը: Կը յայտնուի նաեւ, թէ «Քրիստոնեաներ անտարբեր են ու անհաղորդ հետեւարար, բացասական են եւ կործանարար: Համաշխարհային խաղաղութիւնը պիտի չիրականանայ մինչեւ որ անոնք հաշուելարդարի չենքարկուին: Կամ կը փոխուին. կամ ալ կը մեռնին»:

Պատասխան- Քրիստոնեայ Հայերը պիտի չփոխուին, ու պիտի շմեռնին:

Հայաստան պիտի շահի երբ չկրկնէ այն սխալները զորս «Քարի Ամերիկան» գործեց: Հայաստան վերադառնալու է իր արմատներուն առանց անգիտանալու գոյութիւն ունեցող աշխարհը: Ան պէտք է ճանշնայ մեր օրերու մուր ոյժերը, որպէսզի կարենայ յաջողորդեամբ պաշտպանել ինքինը՝ անոնց դէմ: Հայաստանի արմատներուն բարի ու ազնի ըլլալուն պատճառաւ է որ ցեղը տոկուն մնաց դարերու ընթացքին: Անոր հոգեկան յատկութիւնները պէտք է պաշտպանուին զանոնք նօսրացնելու գծողը ոյժերու դէմ: Ժառանգութեան պաշտպանութիւնը շարիք մը չէ. սուս մարգարեները պաշտպանելն է, շարիքը: Աստուծոյ խօսքին հաւատալն է (եւ ոչ թէ Եկեղեցական համընդհանրացումքն Ecumenism) որ ուժեղ պահեց ընտանեկան կառոյցը: Հայաստանեայց Եկեղեցին պէտք է պաշտպանէ (պահպանէ) իր քրիստոնեական հաւատքին մաքրութիւնը արտաքին մոլար ազդեցութիւններու դէմ: Հայաստանի դրամական շրջանառութեան դրութիւնը պէտք է պարկեշտ ըլլայ եւ ո՛չ վաշխառուական: Հայաստան չքացնելու է «մուրացկան ազգ»ի գոյավիճակը որպէսզի չենքարկուի Արժանիքնի վիճակին: (Միլիառաւոր տոլար պարտական՝ IMF-ի և Համա-

խարիային Դրամատան- World Bank): Ան վտարելու է տաճարէն լումայափոխները, որպէսզի վայելէ ազատութեան և բարգաւաճութեան պտուղները՝ որոնց արժանի է:

Յունուար, 2002

Պօզա Մադոն, Ֆլորիտա

«Նախիջևան», 2002 թ. օգոստոս, թիվ 23

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԴԱՍՏԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵԱՏԱՑՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Խորիրդային Միությունից անկախ հոչակուելուց ի վեր Հայաստանում տնտեսական ցեղասպանություն է կատարվում : Միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից իրականացվող կառուցվածքային փոփոխությունները նպաստակ են հետապնդում միջազգայնացնել երկրի մակրոտնտեսական քաղաքականությունը և այն դեմք Միջազգային Դրամական Հիմնադրամի և Համաշխարհային Դրամատան անմիջական դեկավորության ներքո: Պատմության որևէ այլ շրջանում «ազատ» շուկան այնքան մեծ դեր չի խաղացել «ինքնիշխան» պետությունների ճակատագիրը տնօրինելու հարցում, ինչքան այսօր:

Անցած երկու տասնամյակների ընթացքում Միջազգային Դրամական Հիմնադրամի և Համաշխարհային Դրամատան կողմից զարգացող երկրներին պարտադրված «մակրոտնտեսական կայունացման» և «կառուցվածքային կանոնավորման» ծրագրերը (որպես արտաքին պարտքերի վերանայման պայման) հարյուր միլիոնավոր մարդկանց հասցել են աղքատության: Հակառակ բներքն Վուդի համաձայնագրի, որը նախատեսում էր «տնտեսական վերակառուցում» և հիմնական տարադրամների համաշխարհային գների կայունացում, կառուցվածքային կանոնավորման այս ծրագրերը մեծապես նպաստել են ազգային տարադրամների ապակայունացմանն ու զարգացող երկրների տնտեսության քայլայմանը: Դեռ ավելին, այդ ծրագրերի ազդեցությունը զարգացող երկրների հասարակության վրա ավերիչ է եղալ:

Միջազգային Դրամական Հիմնադրամը և Համաշխարհային Դրամատունը կարողացել են դանդաղեցնել Հայաստանի տնտեսական զարգացումը՝ վարկեր տրամադրելով:

Միջազգային Դրամական Հիմնադրամը ուշադիր հետևում է Կենտրոնական դրամատան գործունեությանը և միջոցներ տրամադրում դրա վերակառուցման համար: Սա նշանակում է, որ պետության փոխարեն Միջազգային Դրամական Հիմնադրամն է տնօրինում երկրի դրամական քաղաքականությունը, որը նրան հնարավորություն է տալիս անդամալուծել տնտեսական զարգացման ֆինանսավորումը: Ներքին տն-

տեսական հնարավորությունները դրամական քաղաքականությամբ խթանել չկարողանալով, երկիրը դառնում է ավելի ու ավելի կախված վարկի միջազգային աղբյուրներից, որի հետևանքներից մեկը մեծացող արտաքին պարտք է:

### Քաղաքականությամբ պայմանավորված վարկեր

Վարկի կառավարման քաղաքականությունը սերտորեն կապված է մակրոտնտեսական բարեփոխումների հետ: Վարկի կառավարումը միջազգային վարկատու հաստատությունների կողմից այնպես է կատարվում, որ տվյալ պարտապան երկիրը շարունակի ծևականորեն կատարել իր ֆինանսական պարտականությունները: Վարկ տրամադրելու նոր ծևերի և վճարումների ժամկետների վերանայման նորքը արվեստի միջոցով վարկի հիմնագումարի վճարումը հետաձգվում է, իսկ տոկոսավճարների ժամանակին կատարումը՝ պարտադրվում: Մնանկանալու եղին հայտնված երկրի պարտը սովորաբ վերանայվում է այն փոխանակելով բաժնետոմսերով: «Նոր» վարկ է տրամադրվում, որպեսզի տվյալ պետությունը կարողանա իին պարտը երի տոկոսները վճարել և այդպիսով խուսափել պարտազանցումից: Պարտապան երկրի հնազանդությունը առաջնակարգ նշանակություն ունի այս գործընթացում: Վարկատու կազմակերպությունը վարկի պայմանները համաձայնում է վերանայել միայն այն դեպքում, եթե պարտապան երկիրը հետևում է վարկի պայմանագրերին կցված «քաղաքականությանը»: Այսպես վարկելով, վարկատու կազմակերպությունը փորձում է ամրապնդել պարտը վճարումների կատարումը և ավելի նեղ վիճակի նատնել պարտապան երկրին, որպեսզի վերջին չկարողանա վարկել անկախ ազգային տնտեսական քաղաքականություն:

Վերոհիշյալ վարկերի պայմանները չեն նպաստում իրական տնտեսական ակտիվության աճին, քանի որ վարկերը չեն օգտագործվում երկրի արտադրական կարողությունների մեջ ներդրումներ անելու նպատակով: Փոխարենը, նրանք խրախուսում են սպառողական ապրանքների («Ներսեղբանների») մեծաքանակ ներմուծումը: Ներմուծման մասերը վերացվում են՝ խրանելու ներմուծումը՝ արտահանման փոխարեն: Այս գործընթացի հետևանքով հայրենական տնտեսությունը լճացել է, վճարումների հաշվեկշոփ տղաճը մեծացել, իսկ արտաքին

պարտիք բեռը՝ աճել:

Հողի սեփականաշնորհում

Համաշխարհային Դրամատան բարեփոխումները ներառում են հողի սեփականաշնորհում և սեփականության կենտրոնացում փոքրարիվ հողատերերի ձեռքը: Հողամասերի գրավադրման հետևանքով ժամանակի ընթացքում առաջանում է հողագործի սեզոնային բանվորների դասակարգ:

### Պետական ներդրումների անկնան կազմակերպում

Համաշխարհային Դրամատան հանրային ներդրումների ծրագրի շրջանակներում հատկացվող վարկերը ստվորաբար պահանջում են մրցակցային իմունիքներով միջազգային հայտեր (տեղեր), որի միջոցով հանրային ծրագրերի իրականացումը հանձնվում է միջազգային շինարարական և ճարտարապետական ընկերություններին: Այս ընկերություններն ել վարկերի մի նշանակալի մասը յուրացնում են՝ ձևակերպելով որպես «խորհրդատվական» և «կառավարման» զանազան ժառայությունների վարձ: Տեղական հայկական ընկերություններին որպես կանոն չեն ներգրավում մրցույթի մեջ, չնայած շինարարական աշխատանքների մեծ մասը կատարվում է տեղական ընկերությունների կողմից (էժան տեղական աշխատուժ օգտագործելով): Այլ կերպ ասած, ինֆրաստրուկտորայի նախագծերի համար հատկացված վարկերի մեծ մասը պարզապես ձեռքից ձեռք է անցնում՝ ի նպաստ օտարերկրյա ընկերությունների:

### Պետական ծեռնարկությունների սեփականաշնորհում

Կառուցվածքային փոփոխությունների իր ծրագրերով Համաշխարհային Դրամատոնը պարտապան երկրի ունեցվածքին տիրանալու նպատակ է հետապնդում՝ պետական ծեռնարկությունների սեփականաշնորհման միջոցով: Որպես երկրի արտաքին պարտքը վերանայելու նախապայման պահանջվում է, որ պետական ծեռնարկությունները սեփականաշնորհվեն (երկրի ունեցվածքը գրոշներով վաճառվի): Երկրի ամենից շահութաբեր և հեռանկարային ծեռնարկությունները ճանկում են օտարերկրյա ընկերությունների կողմից՝ պետական պարտիք դիմաց:

Տնտեսագիտության բնագավառում Նորելյան մրցանակի դափնինեկիր Զոու Սրբավեցը, որը մինչև 1999 թվականը Համաշխարհային Դրամատան զիսավոր տնտեսագետն էր, «Լուսոն Օրզըրվը» թերթում հանդիս է եկել այն դիտողությամբ, թե Միջազգային Դրամական Հիմնադրամն ու ԱՄՆ-ի Պետական Գանձարանը ամեն ինչ արեցին, որ ուսական ընտրությունները Ելցինի նախագահության օրոք իրենց ուզած արդյունքը ունենան: Նա նաև դժողով է նախագահ Ռուզելտից հետո բոլոր ամերիկյան նախագահների կողմից պաշտպանված գորայիզացիայի ծրագրից: Նա նկատել է հետևյալը. «Պետության դեկավարները սովորաբար չեն առարկում պետական ծեռնարկությունները ցածր գներով վաճառելուն: Փոխարենը, նրանք օգտագործում են Համաշխարհային Դրամատան պահանջները՝ լուցնելու իրենց տեղական ըննադատներին: Երկրի նախարարներին արվող տաս տոկոս միջնորդավճարը կարծես իրականացնում է հարստանալու նրանց երազները: Գնից պարզապես հանում են մի քանի միջին դրամ և փոխանցում շվեյցարական դրամատների իրենց հաշիվներին: Ամերիկյան կառավարությունը տեղյակ է այս ամենին»: Ավելացնենք, որ օտարերկրյա կազմակերպությունները ֆինանսավորում են երկրի դեկավարի վերջնտրությունները այնքան ժամանակ, քանի դեռ նա պաշտպանում է վարկային պայմանագրերը: Պարզ ասած, Հայաստանի դեկավարները ստիպված են վաճառել երկրի ունեցվածքը, որպեսզի կարողանան վճարել կառավարությունը վարելու նպատակով պարտքը վերցված գումարների տոկոսները: Այսպիսի հանգամանքներում զարմանալի չէ, որ հայ ժողովուրդը չի կարողանում զարգացնել իր տնտեսությունը՝ օգտագործելով իր բնատուր արարող ձիրքերը:

Խորհրդային կարգերի ժամանակ Հայաստանը իր բախտը տնօրինելու ազատություն չուներ: Տասը տարվա այսպես կոչված ազատությունից հետո շատ բան չի փոխվել. Խորհրդային Միության փոխարեն միջազգային ֆինանսական հաստատություններն են տնօրինում երկրի ճակատագիրը: Միակ տարրերությունը այն է, որ Հայաստանի բնակչությունը ստիպված արտագաղթում է երկրից, որով հայ ազգի բնաջնջման վտանգը մեծանում է: Սա, իհարկե, միջազգայնապաշտների նպատակն է: Նրանք, ովքեր մնում են երկրում, նոյնպես են բարեկում են օտար մշակութային ազգեցություններին, որը աստիճանաբար փոխում է ազգի նկարագիրը: Միջազգայնապաշտների նպատակը «համաշխարհային կառավարություն» տեղելն է: Նրանց ճա-

նապարիին միակ խոշնդոտը ազգայնականությունն է: Մեր միակ միսիրարությունը այս հանգամանքներում այն է, որ Հայաստանում գործում են ազգայնական խմբեր և հայրենասեր անհատներ, որոնք հասկանում են օտար ուժերի նպատակները Հայաստանում և կգերադասեին մենել, քան հեռանալ հայրենիքից:

Հայաստանը պիտի դուրս գա միջազգայնապաշտների ճիրաններից: Այս գործընթացի հիմքերը հարկավոր է պատրաստել շատ զգուշութեն: Ամենից առաջ, Հայաստանի դեկավարությունը պարտավոր է ունենալ անձնագործ հայրենասիրական ոգի: Օտարերկրյա ներդրումները պիտի խրախուսվեն, քայլ ոչ այն սորոկացնող ձևերով, որոնք պարտադրվում են միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից: Հայաստանի կառավարությունը պիտի վերանայի ուկու հանքերի վաճառքի պայմանագրերը և դրանց տնօրինությունը փոխանցի Հայաստանի խորհրդարանին: Հայաստանը պիտի հրաժարվի միջազգային ֆինանսական հաստատությունների վարկերից և ամրացնի իր ազգային դրամական համակարգը՝ ուկու բավականաշափ պաշար կուտակելով: Սա, անշուշտ, դուր չի գա միջազգայնապաշտներին, որոնք կցանկանան ապակայունացնել երկրի առանց այն էլ երերուն տնտեսությունը: Հայաստանի հայրենանվեր կառավարությունը, սակայն, կլարդանա՞ դիմակայել այդ ուժերին, և տնտեսությունը արագ կզարգանա:

Հայաստանը այս օրերին կանգնած է երկրանորդի առաջ, կամ շարունակել ներկա ընթացքով, որը տանում է դեպի սորոկություն և բնաջրնջում, կամ պայքարել ազգային գոյատևման համար:

Armenian Reporter, 2002, 23 february

## ՀԱՅԱՍՏԱՆ - ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Իր հայտնի «Տվեր ինձ ազատություն կամ մահ» ճառի մեջ Պատրիկ Հենրին 1775 թվականի մարտի 23-ին Վերջինիա նահանգի Ռիչմոնդ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցում ասաց. «Ես ուզում եմ իմանալ ողջ ծշմարտությունը, որքան էլ դա հոգեկան մեծ տառապանք կպատճառի: Ուզում եմ իմանալ վատրարագույնը, որպեսզի կարողանամ դիմագրավել այն»:

Այս հաճրահայտ մինքը պետք է դառնա Հայաստանի կառավարությանը ներշնչող ոգին:

Հայաստանի ներկա կառավարությունը, ըստ երեւոյթին, անտեղյակ է ծշմարտությանը և այդ պատճառով պատրաստ չէ դիմագրավելու վատրարագույնին: Նրանք չգիտեն ինչպես ստեղծել ազատ պետություն՝ գրուակացիան իրականացնողների աննկատելի և նենց ներխուժման պայմաններում:

Նախ եւ առաջ պետք է հաստատել, որ մարդը իր իրավունքները ստանում է կամ մարդուց, կամ իրավունքներ ստեղծող ավելի բարձր մեկից: Եթե չկա ավելի բարձր մի հեղինակություն, մարդը միշտ փորձում է ստրկացնել մարդուն: Ազատության և խաղաղության Ամերիկայի առաջին մեծ պաշտպան Վիլյամ Փիրը գրել է. «Եթե մարդիկ չկառավարվեն Աստծով, բռնակաները կկառավարեն նրանց»:

Երբ որոշ ուժեր փորձում են ստեղծել «համաշխարհային կառավարություն», թվում է, թե Հայաստանի կառավարությունը, չպատկերացնելով պետականության ճանապարհ այդ լրջագույն խոշնդոտը, չի կարողացել նախապատրաստվել դիմագրավելու վատրարագույնին: Ընդհակառակը՝ Հայաստանի իշխանությունները իրենց խճել են հենց այն միջազգայնապաշտ կազմակերպությունների ցանցում, որոնք իրականում դեմ են փորձ եւ անկախ ազգությունների գոյությանը:

Ներքոիշյալ հաստատությունները մի քանիսն են քազմաքայլ այն կազմակերպություններից, որոնք կոչված են կառավարելու աշխարհը:

## Միացյալ Ազգերի Կազմակերպություն

Մեզ միշտ ասվել է, թե ԱՄԿ-ը աշխարհի վերջին եւ լավագույն հոլյուն է խաղաղություն պահպանելու համար: Ազգամիջյան խնդիրների խա-

դադ ճանապարհով լուծումը եւ ազգերի համերաշխությունը բոլոր ազնիվ ժողովուրդների ձգումներից են: ՍԱԿ-ը, սակայն, կատարյալ ձախողության է մատնելի խաղաղություն պաշտպանելու իր նպատակի մեջ: 1945 թվականին այս կազմակերպության հիմնդրումից ի վեր հարյուրվոր պատերազմներ են տեղի ունեցել: Միջանական կոխմերոց, պարտիզանական ապստամբությունները եւ ահարեկչությունը շարունակում են իսկ բազմաթիվ կյանքեր Շյու Ամերիքը, հոկտեմբերի 22, 2002 թ., էջ 13:/

Մարդկային այս աղետները առիթ են հանդիսացել, որպեսզի ՍԱԿ-ի շրջանակներում ստեղծվեն նոր կազմակերպություններ, որոնց բոլորի նպատակը նույնն է՝ կառավարել աշխարհ:

Ակնհայտ է, որ ՍԱԿ-ի հիմնադիրները այդ կազմակերպությունը համաշխարհային կառավարություն դարձնելու համար, հայտարարում են, որ ՍԱԿ-ը զինվորական ուժի անհրաժեշտություն ունի: Այդ ուժը այնքան հզոր պիտի լինի, որ կարողանա պարտադրել իր կամքը: Նշված նպատակին են ծառայում, օրինակ, տարրեր պետությունների մասնակցությամբ միացյալ ուսումնական պարագայում այդպիսի ուսումնակործերը քույացում են հայ զինվորների ազգային ոգին: Երանց ներշնչելով համաշխարհային բանակի մաս դառնալու գիտակցությունը:

ՍԱԿ-ի նպատակը համաշխարհային կառավարությունն է եւ մեկ աշխարհը, որտեղ ազգային պետություններն ու մշակույթները տեղ չունեն:

ՍԱԿ-ը նաև ծրագրում է համաշխարհային տուրք: Սրբ Բոնքան իր «Համաշխարհային տուրքահավաք» գրքում նշում է. «Համաշխարհային կառավարության ջատագովները ցանկանում են համաշխարհային տուրք մտցնել, որպես ՍԱԿ-ը քայլ առ քայլ համաշխարհային կառավարության վերածելու ծրագրի մաս»: Շյու Ամերիքը Սփեշը ՈՒիփորը, 22-ը հոկտեմբերի, 2001 թ.:

### Հռոմի ակումբ

Հռոմի ակումբը խիստ ազդեցիկ համաշխարհային հետազոտական հաստատություն է, որի հիմնական նպատակը աշխարհի բնակչությունը երկու միջիարդով նվազացնելն է, եթե անզամ դա պահանջի պատերազմ, սով, համաճարակ կամ որեւէ այլ միջոց:

Այս նպատակի հիմքում ընկած է շրջակա միջավայրի պաշտպանության խարեւորյունը: Դկ. Ժարլին Կասունը իր «Պատերազմ աշխարհի բնակչության դեմ» գրքում զգայացունց տեղեկություններ է բերում աշ-

խարիի բնակչությանը հսկողության տակ պահելու՝ բազմամիլիոն դրար արժողությամբ ծրագրերի մասին: Թունա Ֆերգուտոնը՝ Միացյալ Նահանգների Պետական Դեպարտամենտի բնակչության բաժնի Լատինական Ամերիկայի գրասենյակի պատասխանատուն, հայտարարել է. «Մենք կզմանք ցանկացած երկիր եւ կասենք՝ դեռ նետեր զարգացման ձեր խորհուկ ծրագիրը: Մտածեք, թե ինչ պետք է անեք բնակչության շահերը կրծատելու համար: Եթե համաձայն չեք եւ չեք ցանկանում դա անել ընտանիքի շափի փոքրացման ճանապարհով, վաղ թե ուշ կրանքարդ կրկրող Էլ-Սալվադոր կամ Իրան, կամ, որն ավելի վատ է, Կամբոջիա»: /Էրգերյուրիկ Խնդելիջըն ՈՒիլյու, 10-ը մարտի, 1961թ.:

### Եվրոխորհուրդ

Հայաստանը մեծ խանդավառությամբ Եվրոխորհուրդի անդամ դառնալուց հետո, այս կազմակերպության ընդհանուր քարտուղար Վլարը Ըլիմերը մեր երկիրը դասակարգեց որպես «պատերազմական վիճակի մեջ գտնվող երկիր» եւ սպառնալով Հայաստանի կառավարությանը սպառնալով պահանջեց համաձայնություն կնքել Աղրբեջանի հետ Ղարաբաղի հարցի առնչությամբ: /Արմինֆո, Երեւան, հունիս, 2002 թ./: Հետարքիր է, ինչպես կարող է Հայաստանը պատերազմի մեջ լինել, եթե արդեն յոր տարի է անցել ուսումնական գործողությունների ավարտից: Մի՞քև Հայաստանի կառավարությունը չէր հասկանում, որ անդամակցելով մեկզաշխարհական այդ կազմակերպությանը, կորցնելու է իր անկախությունը:

Վլարը Ըլիմերը նաև ասել է. «Մենք ապրում ենք զլորալիզացիայի դարում, եթե սահմաններ փակելը բնական աղետ է բոլորի համար» /Արմինֆո, Երեւան, հուլիս 2, 2002 թ./: Հարց է առաջանում ինչո՞ւ է Եվրոխորհուրդի ղեկավարը այդքան մտահոգված Հայաստանի սահմաններով: Եթե Պոն. Ըլիմերը խևագես մտահոգված է փակ սահմաններով, պետք չէ արյուր, որ նա նախ խոսի Երանց հետ, ովքեր փակել են Հայաստանի սահմանները: Ի դեպ, պատմությունը ցույց է տվել, որ միշտ ուրիշներն են որոշել Հայաստանի սահմանները: Եթե պոն. Ըլիմերը մտահոգված լիներ Հայաստանի ապագայով, նա Հայաստանը չէր անվանի «միշտ ճանապարհով ընթացող աշակերտ»: 1976 թվականից մինչեւ 1999-ը լիներով ավտորիհական խորհրդարանի Խորայելի հետ բարեկամության խմբի ղեկավարը, պոն. Ըլիմերը մի՞քև չէր կարող համոզել Խորայելի կառավարությանը, որ Վերջինս դադարեցնի մարզել Աղրբեջանի զին-

ված ուժերին: /Խսրայելը մասնակցում է աղորեջանական բանակի ուազ-մական ուսուցմանը/ Չոռունգ Դիմեն Ալիքի, դեկտեմբերի 22, 1999 թ./:

Ո՞վ է կառավարելու Հայաստանը՝ պն. Շվիմե՞րը, թե՞ Հայաստանի ժողովուրդը:

Լրագրող Գեորգ Սարգսյանը «Հայոց Աշխարհ» թերթի անցյալ տարվա հուլիսի 12-ի համարում գրում է. «Հայաստանը Եվրոպային աջակցող երկիր է»: Սա նման է հայերի 1908 թվականի ողջագուրմանը քուրքերի հետ, եթե դա դաշնակցականները նրանց ասում էին. «Մենք եղաքայրներ ենք»:

Հայերը, ինչպես դարեր շարունակ, նաև այսօր, կարող են եւ պետք է հարաբերվեն Եվրոպայի հետ՝ բայց ոչ թե հրամայվեն Եվրոխորհրդի կողմից:

### Ազատ Եվրոպա ձայնակայան

Ազատ Եվրոպա ուղիղկայանը, որը ֆինանսավորվում է Միացյալ Նահանգների կառավարությունից, այսօր ազատություն չի հաղորդում: Ոմն Մարտ Լիբրորի, 2001 թվականի դեկտեմբերին Հայաստանի համար մի հաղորդման մեջ հայ երիտասարդներին բարոգում էր կրոնական պաշտամունքներ, համասեռականություն, ազատ սեռական հարաբերություններ՝ գովարանելով պոռնո-աստղերին /«Ազգ» օրաթերթ, 2001 թ. դեկտեմբերի 10/։ Սա ազգային մշակույթը արմատահիլ անելու բազմաթիվ ձեւերից մեկն է: Մի՞թե Հայաստանի կառավարությունը չի նկատում սա: Եթե նկատում է, ինչո՞ւ բողոք չի ներկայացնում Միացյալ Նահանգների Պետական Դեպարտամենտին: Հայաստանի կառավարությունն ի՞նչ է անում պաշտպանելու համար մեր ազգային նկարագիրը:

### Միջազգային Դատարան

Միջազգային դատարանը գտնվում է Հոլանդիայի Հեյգ/Հաագա/ քաղաքում: Դատարանի գաղափարը որդեգրվեց գլոբալիզացիայի ջատագովների կողմից 1988 թվականի հուլիսի 17-ին Հռոմում կայացած մի համագումարի ընթացքում: Այս դատարանը իրավունք ունի բեկանելու անկախ պետությունների դատարանների վճիռները: Օրինակ, այն պաշտպանում է կանանց իրավունքները և երեխաների իրավունքները ծնողների նկատմամբ այնպես, որ իրականում քանդում է ընտանիքի հիմքը: Այն կարող է նաև Ղարաբաղի կառավարության անդամներին դի-

տել իրեն պատերազմի հանցագործներ և նրանց դատի տալ: Դատարանը կարող է նաև դատել Հայաստանի զինված ուժերի ցանկացած անդամի՝ անտեսելով Հայաստանի արդարադատության ատյանների վճիռները:

Անցյալի ցեղասպանությունները, որոնց թվում նաև հայ ժողովրդինը, դատարննության չեն դրվում:

Միջազգային դատարանը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեկը միջազգային այն կազմակերպություններից, որոնք հիմնվել են իրականցնելու ՍԱԿ-ը համաշխարհային կառավարություն դարձնելու նպատակը:

### Միջազգային Զարգացման Միացյալ Նահանգների գործակալություն

Սա ԱՄՆ-ի կառավարությունից ֆինանսավորվող կազմակերպություններից է: Անցյալ տարի այն ինք սեսամորք ամերիկացի ուսանողության ուղարկեց Հայաստան: Նրանք հայ պատանիներին սովորեցրին ամերիկյան հոկիյ-փոկիյ աճպարար պարեր /Արմենիա-Ուկի, հուլիս 5, 2002 թ./: Այս կազմակերպության առաջին նպատակը շրջակա միջավայրի պաշտպանության բռնի տակ տարրեր երկրների տնտեսական զարգացման ընթացքը փոխելու է: Նրանց համար ցանկայի փոփոխություններից մեկը Հայաստանի ատոմակայանը փակելու է: Ահա անկախ պետությունների նկատմամբ նրանց նոտարությունները արտահայտող հարցադրություններից մեկը. «Մշակվե՞լ է արդյոք երկրում շրջակա միջավայրի պաշտպանության համապարփակ մի ծրագիր, որի շրջանակներում հնարավոր լիներ փոխել տնտեսական և հասարակական հարաբերությունները»: Տարօրինակ չէ՝ արդյոք, որ վերոհիշյալ սեսամորք երիտասարդները չուղարկվեցին Աֆրիկա՝ փոխելու իրենց իսկ տնտեսական և հասարակական հարաբերությունները...»

### Հայաստանի լրատվական միջոցների վերահսկումը

Հայաստանի կառավարության կողմից Ա1+ և Նոյան Տապան հեռուստատեսային կայանների արտոնագրերի նորացման մերժումը խսութի ազատության կաշկանդման մի օրինակ է: Այս կայանի տեղը եթերում գրավել է «Ծարմ» անունով փորձառությունից զորկ մի ընկերություն, որի ծրագրերը կազմված են հիմնականում սպորտի, նորածնության և երաժշտական հաղորդումներից: Հայաստանի կառավարությունը, հայ-

կական որակյալ հեռուստատեսային եւ լրատվական միջոցները լրեցնելու փոխարեն պես է արգելի «Մի էն էն»-ի անվճար հեռարձակումը Երևանում եւ շրջակա տարածքներում: «Մի էն էն»-ի լրատվորյունը նպատակ ունի ծեւավորել նպաստավոր մտածողություն, լի է բարոյագորկ հաղորդումներով: Այն ոչինչ չի ավելացնում Հայաստանի մտավոր եւ ազգային որակներին:

Միայն մտրի ազատություն ունեցող ժողովուրդները կարող են դիմագրավել քշնամիների ուսունականություններին:

### Եզրափակում

Ամորայի չէ<sup>9</sup> արդյոք, որ երբ երկրի բարզավաճմանը նպաստելու համար սփյուռքահայ հայրենասեր շատ անհատներ ձեռնարկություններ են հիմնում Հայաստանում, կառավարությունը երկիրը ծանրաբեռնում է միջազգային հիմնադրամներից եւ դրամատներից վերցված մեծագումար պարտքերով: Հայաստանի կառավարությունը օտարներին է վաճառում նույնիսկ երկրի ազգապատկան այնպիսի դարավոր հարստությունները, ինչպիսիք են ոսկու հանքերը:

Ի՞նչն է, որ պատմության այս շրջանում մեզ պիտի հպարտության զգացմոնը ներշնչի, որ հայ ենք: Այն, որ 17 դար քրիստոնյա լինելոց հետո անդամակցել ենք հակաքրիստոնյա Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի՝ թէ<sup>10</sup> այն, որ երբ աշխարհի չորս կողմերում ցրված հայությունը երկու սերնդի դեգերումներում իր ազգային ինքնությունը կորցնելու վտանգի մեջ է, Հայաստանում մեր ազգի գոյատեման խնդիրը հանձնված է պրազմատիզմին :

Բարեբախտաբար, Հայաստանում հայրենասերների պակաս չկա: Նրանք կզոհվեն նայր հողում, բայց չեն լրի այն: Հայաստանի հայրենասեր երիտասարդությունը այսօր ներշնչվում է Գարեգին Նժդեհի ազգասեր ոգով: Նժդեհը ոչ միայն զինվորական մեծ գործիչ էր, որը 1920 թվականին Զանգեզուրը փրկեց ու վերամիավորեց Հայաստանին, այլ նաև մի մեծ փիլիսոփա, որի սիրիրյան բանտում գրված գործերը այսօր տարածվում են Հայաստանում: Տեղին է իիշել Նժդեհի հետեւյալ խոսքերը. «Երբ դաշնագիր ստորագրեք, իմ արյունով ստորոգրեք այն»: «Խմ կյանքում, խղճիցս բացի, երկու դատավոր ճանաչեցի Աստված եւ ժողովուրդ: Աստծո դեմ մեղանչեցի, բայց ժողովոյի դեմ երեք»:

Այսօրվա հայրենասերները, լավ գիտակցելով Հայաստանի դժվար աշխարհաբարական իրավիճակը, այնուամենայնիվ հպարտ են այն

անձնազոհ հերոսներով, որոնք փրկեցին անփրկելի թվացող Ղարաբաղը: Պետք է քաջալերել եւ զորավիզ կանգնել այս հայրենասեր անհատներին եւ կազմակերպություններին, որպեսզի ազգի առողջ կորիզը մնա անձնունմխելի: Այդ ժամանակ միայն կարելի է խելացիորեն լուծել Հայաստանին վերաբերող բոլոր ազգային ու միջազգային խնդիրները:

Բոքա Ռ. Ալբոն, Ֆլորիդա, ԱՄՆ  
Հուլիս, 2002 թ

Armenian Reporter, 2002, 10 august

## ՀԱՅԱՍՏԱՆ - ԿԱՏԱՐԻ ԳՐՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Մի քանի տարի է արդեն, ինչ Հայաստանում սուր պայքար է մղվում հայրենասիրության դեմ: Պայքարը այսօր հասել է գագարնակետին և կործանիչ ազդեցություն է ունենում երկրի վրա:

Դարեր ի վեր մարդու երազանքն է եղել իշխան Աշխարհին և տիրանալ նրա հարստություններին: Հաջողվել է ստեղծել ՍԱԿ-ը, որն իր քե կոչված է Աշխարհին բնելու խաղաղություն, սեր, միասնություն և ապահովություն: Հետաքրքիր է, այդ ո՞ր աշխարհին: ՍԱԿ-ի ապակեպատ ապարանքներից լսվող խաղաղության կոչերը խլացուցիչ են եղել, մինչդեռ պատերազմների պատրաստությունը՝ շարունակական եղելություն: Ստեղծվել է այնպիսի մի քառո, որի մեջ ինքնիշխան ազգերը անհրաժեշտ են համարում կառավարվել մեկաշխարհական այս «մարդասիրական» կազմակերպության կողմից: Ազատ մարդը իր միամտությամբ ինքն իրեն շղթաների տակ է դրել:

1856 բվականի հուլիսի 14-ին Սևծ Բրիտանիայի վարչապետ Դիզրա- ելին, որն իր ժամանակի անվանի դիվանագետներից էր, ցնող մի հայտարարություն արեց Համայնքների պալատում: Նա ասաց. «Մի ոժ կա, որին մենք հազվադեպ ենք անդրադառնում՝ զաղութիւն կազմակերպությունները: Ավելորդ է ժմստել, որովհետև չի կարելի քողարկել այս իրողությունները, որ Եվրոպայի մեծ մասը՝ Իտալիան, Ֆրանսիան և Գերմանիայի մեծ մասը պատված են զաղութիւն բնկերակցությունների ցանցով, ինչպես երկրագնդի մակերեսը՝ երկարութիւններով: Ո՞ր է նրանց նպատակը: Նրանք չեն փորձում քողարկել այս: Նրանք դեմ են սահմանադրական կառավարությանը: Նրանք չեն ցանկանում բարեկավել գոյություն ունեցող հաստատությունները: Նրանք զգութիւն են փոխել հողի սեփականության ներկա հարաբերությունները, դուրս շարտել այսօրվա հողատերերին և վերջ տալ կերպական հաստատություններին»:

Այս զաղունի միությունները, որոնք նկարագրում եր Դիզրաելին, գերհարուստների ավելի հարստանալու նպատակով միակ դավադրությունը չէր: Հարկավ, Աստվածաշնչում ասված է, որ դրամասիրությունը ամեն չարիքի արմատն է: Այս մարդկանց չափազանց մեծ հարստութան և իշխանության հասնելու ցանկությունը, սակայն, նրանց դավադրության հիմնական դրդապատճառը չէ: Գլխավորը Աստծո և նրա որդու Հիսուս Քրիստոսի հանդեպ նրանց ատելությունն է:

Դեպի «մեկ աշխարհ» գլոբալիզացիայի տանող ճանապարհին այս

մարդկանց համար գլխավոր խոչընդոտը հայրենասիրությունն է և ազգայնականությունը: Նրանց նպատակը ազգությունների միջև սահմանների ջնջումն է և ռասաների միախառնումը, որը պետք է դյուրացնի մարդկության ստրկացումը:

Հայաստանի նման փոքր երկրի համար շատ դժվար է դիմագրավել իր գոյությանը սպառնացող այս ուժերին: Հայաստանը թուլացնելու առաջնահերթ ձևերից մեկը ժողովրդի մեջ հայրենասիրության գիտակցությունը մեղքնելն է: Սա կատարվում է ազգի մշակույթը քայլայելով, դրամի միջոցով դեկավարների մեջ ընչարացնություն առաջացնելով, տնտեսության լճացմամբ ժողովրդին արտագաղթի մղելով և նրան իր քրիստոնեական կրոնից հեռացնելով՝ աղանդերի, անաստվածության, միասեռականության և անբարոյականության մղելով միջոցով:

Հատկապես անբարոյականության ներմուծումը պետք է կասեցվի:

Ազգային այնպիսի հարստություններ, ինչպիսիք են ընտանեկան ամուր կապերը, բարոյական, մշակութային և կրոնական արժեքները պետք է պահպանվեն ժողովրդի կողմից, նույնիսկ եթե կառավարությունը թերանում է դրանում: Այս հաստատությունների պահպանումը ազգի պաշտպանության լավագույն գենքն է թշնամու շատ ավելի մեծ բնդանորների դեմ, որովհետև այդ մուր ուժերը գինում ու մարզում են Հայաստանի դարավոր թշնամիներին:

Մի քանի տարի առաջ Բարոնուիկի Քերոլայն քոքսը մի քաց նամակ ուղղեց հայ ժողովրդին: Այդ նամակում նա մեծ սեր և հիացմունք է հայտնում հայ ժողովրդի հանդեպ և միևնույն ժամանակ գգուշացնում. «Հիմնա ծեղ սպառնում է խաղաղությունը և անկախությունը կորցմելու վտանգը: Եթե արագ չգործեք, կկորցմեք ոչ միայն Արցախի սուրբ հողը, այլ նաև Հայաստանը»: Նա շարունակում է. «Եթե ներկա դեպքերի ընթացքը չկատեցվի, ծեղ դեկավարությունը երևանում ճակատագրականըն կուկարացնի և կղավաճանի ձեր երկրին»: Արդյոք Բարոնուիկի քոքսը գիտի՞ մի քանի, որը Հայաստանի ժողովուրդը և կառավարությունը չգիտեն: Եթե այդպես է, պետք չէ՝ արդյոք, որ նրան հարցնեն այդ մասին, կամ ինքը՝ Բարոնուիկի քոքսը հայտնի կառավարությանը:

Անտարակույս, նույն այն մուր ուժերը, որոնք կործանեցին քրիստոնյա Սերբիան, այսօր նպատակ են դրել կործանելու քրիստոնյա Հայաստանը: Նույն այդ ուժերն էին, որ Հայաստանը դրել էին «Զարիբի առանցք» պետությունների շարքում: ԱՄՆ-ի կառավարությունը ստիպած եղավ Հայաստանը հանել այդ ցուցակից /ժամանակավորապես/, որովհետև նրաքի դեմ պատերազմի ժամանակ չին ցանկանում

հավելյալ ընդդիմադիրներ ունենալ:

Քարերախտաքար, հայրենասիրությունը դեռևս ողջ է Հայաստանում: Զանգեզորի պաշտպան Գարեգին Նժդեհի ազգասեր ոգին շարունակում է արմատներ ձգել հայ երիտասարդության մեջ:

Նժդեհի համար «Աստծո տանը նվիրվածությունը» նշանակում էր նվիրվածություն հայրենիքն, իր նախահայրերի հողին, որը նա սիրում էր ուժգնորեն: Նա խոսում էր հայ ազգատագրական դարավոր պայքարի մասին, հայկական մեծ հեղափոխության, թշնամու հետ անհավասար և հերոսական կրիվների, անկախ հանրապետության հոչակման և կորստի, հայ ժողովրդի քշնամիների՝ Թուրքերի և խորհրդային իշխանությունների, կորցրած անկախության վերականգնման կարևորության և հայ ժողովրդին իր նկատմամբ հավատով և անհաղթելիության ոգով զինելու անհրաժեշտության մասին:

Նժդեհը խոսում էր հայ ժողովրդի առաջնությունների մասին, որոնք բխում են նրա ազգային ակունքներից: Նա հեռու էր ցեղի այն հիվանդագին և սխալ մեկնաբանությունից, որը նացիստներն օգտագործեցին այլազգիների հանդեպ ցեղային գերազանցության իրենց գաղափարախոսության մեջ: Նժդեհը ցեղը տեսնում էր որպես մարդկային արժանապատվության, հպարտության և ինքնավստահության մարմնավորում:

Նժդեհը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կալանավորվեց Բուլղարիայում և աքսորվեց Սիրիի, նահատակի մահով վախճանվեց 1955 թվականի դեկտեմբերի 21-ին: Նրա աճյունը տեղափոխվել է Հայաստան և ամփոփվել Սպիտակավոր վանքի բակում, մի մասունք էլ՝ Խուստուկի լեռան լանջին: Սիրիյան բանտում գրված նրա հուշերը բերվել են Հայաստան: Վերջերս Նախիջևանահայոց Ազգային խորհրդի նախագահ Ռաֆայել Յամբարձումյանը Երևանում հրատարակել է մի գիրք, որտեղ մանրամասնորեն ներկայացված է Գարեգին Նժդեհի կյանքը, գործը և փիլիսոփայությունը:

Արժե անդրադանալ Հայաստանի անկախության կորստին հաջորդած այն քաղաքական ինտրիգներին, որոնք տեղի ունեցան 1920 թվականի Վերջերին:

Հայաստանում 1920 թվականի դեկտեմբերի սկսքին խորհրդային կարգերի հոչակումից հետո, Աղբեջանը Հայաստանի խորհրդային կառավարությանը հեռագիր ուղարկեց, որտեղ հօգուտ Հայաստանի հրաժարվում էր Արցախի, Զանգեզորի և Նախիջևանի շրջաններից: Սահմանային խնդիրները հայտարարվեցին լուծված: 1921 թվականի

մարտի 16-ին բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց Մուկվայի պայմանագիրը: Այն չեղյալ հայտարարեց աշխարհի 12 պետությունների ներկայացուցիչների ստորագրած 1920 թվականի օգոստոսի 10-ի Սեւրի դաշնագիրը, որը Թուրքիայի զավրած Հայաստանի պատմական հողերից 90 հազար քառ. կմ կարածք էր տրամադրում Հայաստանին: Քարտեզը գծել էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը:

Ռուս-թուրքական գործարքով նրանք զավթեցին Հայաստանի պատմական տարածքները, իսկ 1921-ի հոկտեմբերի 13-ին Կարսի դաշնագրով վերջնականացվես հաստատվեց Նախիջևանի ու Ղարաբաղի գողությունը, որից հետո իր պատմական հայրենիքից հետևողականուն արմատախիլ արեցին Նախիջևանի բնիկ հայ բնակչությանը:

Դայերը սերնդե սերունդ աշխարհից շարունակարար պետք է պահանջեն, որ վերադարձվեն իրենց բոլոր պատմական հողերը:

Այսօր Հայաստանում գոյություն ունի թիջ ճանաչված, բայց լավ կազմակերպված մի շարժում, որը կոչվում է Նախիջևանահայության Ազգային խորհուրդ: Չարժումը հիմնված է Գարեգին Նժդեհի փիլիսոփայական սկզբունքների վրա: Նախիջևանի հայերի այս շարժումը վիճարկում է Նախիջևանի հայկական հողերի անօրինական կցումը Աղբեջանին: Նրանք կոչ են անում ոռսական Դումային չեղյալ հայտարարել 1921 թվականի մարտի 16-ի Մուկվայի բրորոյշելիկյան անօրինական դաշնագիրը, որը պաշտոնապես կոչվում է «քարեկամության և եղբայրության» դաշնագիր: Հայաստանում Նախիջևանահայոց Ազգային խորհրդի նման հայրենասիրական շարժումները պետք է արժանանան սփյուռքի առավելագույն ուշադրությանը, որովհետև դրանք ամուր պատմեշներ են պարտվողականության դիմ: Հայաստանում գործող այդ կազմակերպությունների հետևորդները կմեռնեն իրենց հողի վրա, բայց չեն լրի իրենց հայրենիքը:

Օժոռանանք, որ մեր պատմական հողերը պաշտպանելիս ավելի քան 5000 հայ երիտասարդ գոկվեց Արցախի ազգատագրական կրիվների ժամանակ: Արդյոք կարո՞ղ ենք մենք՝ ողջերս, խոսել բոլորության դիրքերից և քնահաճորն որոշել ճակատագիրը այն հողի, որը ծեռք է բերվել մեր օրերի Նժդեհների արյան գնու: Դա համազոր կլիներ դավաճանության:

Հայաստանի երիտասարդությունը պետք է գոտեպմիվ հայրենասիրության ոգով, որպեսզի ոչ մի քննամի, ներքին կամ արտաքին, չկարողանա խորտակել երկրի ապագան:

Հայ ժողովուրդը շահտի մոռանա արցախյան պատերազմի ժամանակ զոհված իր բոլոր Նժդեհների արյան գինը:

«Այն օրից, երբ հայր վախենա մահից, այդ օրվանից օտարը կրազա-  
վորի Դայաստանում» :

#### Գարեգին Նժեռի

«Ազատությանը պաշտպանելու կոչված ծայրահեղականությունը մո-  
լորություն չէ»:

#### Ծերակուտական Բերրի Գոլդուարը

Սփյուռքի գլխավոր քաղաքական կուսակցությունները, Եկեղեցիներն  
ու կազմակերպությունները, անկախ իրենց քաղաքական տար-  
ածայնություններից ու շահերից, պետք է անմիջապես ստեղծն «Ազ-  
գային պաշտպանության խորհուրդ»: Նրանք պետք է դադարին  
պաշտպանել իրենց անհատական շահերը, քանի դեռ պաշտպանված  
չեն Հայաստանի շահերը: Ամենաառաջնային խնդիրն այսօր Ազգային  
Պաշտպանության խորհուրդը կյանքի կոչելու է: Անհատական հպար-  
տությունը պետք է մի կողմ դրվի և փոխարինվի հավաքական ազգային  
հպարտությամբ: Երկրի ինքնիշխանությունը կորցնելուց հետո կորցնե-  
լու քիչ բան կմնա:

Հայրենասիրությամբ տողորված մի մարմին իրադրությունը պետք է  
իր ձեռն առնի, քանի դեռ ուշ չէ:

Բորա Ռարոն, Ֆլորիդա  
Հայրենասիրությամբ տողորված մի մարմին իրադրությունը պետք է  
իր ձեռն առնի, քանի դեռ ուշ չէ:

Armenian Reporter, 2003, 1 march  
Hairenik Weekly, 2003, 3 may ,  
«Նախիջենան», 2003 թ. սեպտեմբեր, թի 25

Հայ յորթօնություն

ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԵՏԵՐ

Նախրան Հայ Առաքելական Եկեղեցւոյ խորհրդակցական ժողովը,  
որ պիտի կայանա Ամբիլիասում, Լիքանան, 2003 թ. նոյեմբերի 17-ից 20-  
ը, Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդի ընդհանուր քարտուղար  
դոկտոր Կոնրադ Վան Ռայզըրը հետեւեալն է յայտարարել. «Մենք պետք  
ունենք ներշնչուելու սրբազնական այն հոգեկան կորովով, որ առաջնոր-  
դու Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդի հիմնադրմանը՝ վերար-  
ժեալու և ի խորհրդածելու փոփոխուող ժամանակները»:

Քրիստո չ'ճանաչեց «վերաթեորում» և «ժամանակ», սակայն  
Դոկտոր Ռայզըրը հոգ չի անում այդ առնչութեամբ:

Փոփոխութիւն ինչի՞: Քրիստովի քարոզութեան փոխարէն աշխար-  
հակալութեան:

Դոկտոր Ռայզըրը նպատակը «համաշխարհային համընդիանուր  
մի նօր կրօնի ստեղծումն է»:

Տիեզերական «համաշխարհային» մէկ Եկեղեցիի գաղափարը նորու-  
թիւն չէ: Հակաքրիստոս մուր ուժերի երազանքն է եղած այդ՝ դարերից ի  
վեր: Ինչպէս բոլոր կենդ մարգարեները որոնք հակաքրիստոնեական  
«քողարկուած ճակատներ»-ը խարեւութեամբ օգտագործում են «Ասու-  
ծոյ Թագաւորութիւն» անուան տակ: Նրանք երկնքի քազաւորութիւնը  
չեն պատկերացնում որպէս հոգեկան մի հասարակութիւն ուր այր են կին  
պետք է անհատական կապով միացած լինեն Յիսուս Քրիստոսին իր  
փրկչի: Նրանց համար երկնքի քազաւորութիւնը հաւաքական մի հասա-  
րակութիւն է ուր պիտի իրազործուի «աղքատութեան վերացում»,  
«հարստութեան վերաբաշխումը», «աղլինարեւութեան անարդար քաշ-  
խումների շտկումը»՝ ստեղծելով «անտեսական արդարութիւն», և սա-  
կայն միաժամանակ քառս եւ դասակարգային ատելութիւն:

Քրիստովի և իր առաքեալների վարդապետութիւնը «այս աշխար-  
հեն» չէր: Քրիստո չ'եկա փրկելու իրեաներին Հռոմայացիների լուծից:  
Քրիստոնեութիւնը քաղաքական եւ տնտեսական ազատագրում չէր, այլ  
մեղաւորի ազատագրումը մերժից:

Փրկչի նպատակը հոգեկան ազատագրութիւնն էր: Նա պետք չ'ուներ  
Համաշխարհային Եկեղեցիների մի Խորհուրդ՝ փոփոխելու, քարեփո-  
խելու կամ «վերակշռադատելու» իր կրօնը:

Անցեալից քազարի օրինակներ կան ապացուելու, որ Համաշ-  
խարհային Եկեղեցիների խորհուրդը մասնակցել է օժանդակել է քը-  
նարարական գործունեութիւնների: Մէկ օրինակ բերենք միայն. Համաշ-

խարիսխին Եկեղեցիների խորհուրդը 1970 թուն օգտագործելով մասնաւոր մի ֆոնտից գումարներ, ֆինանսաւորեց 19 «ազատազրական» շարժումներ Աֆրիկայում. սակայն հետագայ քննութիւններից պարզուեց, որ ֆինանսաւորուած 19 շարժումներից 14-ը պարտիզանական եւ ահարեկական գործունեութեամբ էին գրադուն:

Հայաստանեայց Եկեղեցի դարաւոր պատմոթեան ընթացքին միշտ եղել են նրան պաշտպանողներ, որոնք թոյլ չեն տուել կայսրերի, թագաւորների, ցարերի եւ Համաշխարհային Եկեղեցիների խորհրդին, որ փոխեն կամ սրբապղծեն Ազգային Եկեղեցին: Նրանք պաշտպանել են մեր Մայր Եկեղեցին իրենց կեանով:

Այսօր Հայ Ազգային Եկեղեցի առաջնորդները հմայուած են «փոխուղ ժամանակներ» բնրկահարող ձայներից, մինչդեռ քրիստոնեայ դեկավարների արժեւորման շափանիշը պէտք է լինի՝ թէ որքան անձնուիրաքար նրանք ընդունում են ընկալում են Յիսուս Քրիստոսը: Հայ Եկեղեցու պահպանողները պէտք է առաջնորդեն Հայաստանեայց Ազգային Եկեղեցին՝ քարձրացնելով համայնքի կորովը:

Ո՞վ Խրիմեան Հայրիկ, ո՞ր ես դու:

2003թ., Օգոստոս 20

Armenian Reporter, 2003, 30 august

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹԵՆԵՐԸ

Հայաստանի անկախացումից ի վեր այստեղ գործում են տարբեր միջազգային կազմակերպություններ, որոնք այստեղ հիմնել են իրենց կենտրոնատեղիները: Նշուած հանգամանքը կասկածելի է դարձնում այդ կազմակերպությունների գործունեության բնույթը:

Հայաստանում մարդասիրական, մարդու իրավունքների պաշտպանության, հետազոտական տարբեր առաքելություններ իրականացնում են այնպիսի միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմանը, ինչպիսիք են՝ Ամերիկայի Զարգացման հիմնադրամը, ԵԱՀ-ը, ՍԱԿ-ը և հիասքանչ հնչեղութիւն ունեցող այլ կազմակերպություններ, որոնք իրք թէ գործում են մարդկային իրավունքների համար: Մարդու իրավունքների պաշտպան այս կառույցները երբեք նույն կրքոտութեամբ չեն խոսում «մարդկային պարտականություններ»-ի մասին, ինչը նրանց առաքելության մասին լուրջ կասկածներ է հարուցում:

Օրինակ՝ ՍԱԿ-ի «Զարգացման ծրագիր»-ը Հայաստանում վարձում է 100 մարդու, որոնց ֆինանսավորում է ՍԱԿ-ի՝ ազգաբնակչության մեջ գործնեություն ծավալելու համար նախատեսված ֆոնդը: Այդ ֆոնդը, որը հիմնուել է զարգացող Հայաստանին օգնելու նպատակով, կոչում է Սիացյալ Ազգերի Կազմակերպության ընակչության գործունեության ֆոնդ: Ծրագրերից մեկը նախատեսում էր պատրաստել իով ուրյուն վաղաժամ ընդհատելու մեջ ճամանագիտացած կանանց, որոնք պետք է «ընտանիքը պլանավորելու» քողի տակ կարգավորեին ընտանիքի անդամների քանակը: Ամերիկայի առողջապահության և ծառայությունների նախարարության երեխաների և ընտանիքների հարցով քածնի քարտուղարի տեղակալ դոկտ. Մերի Չոնը հայտարարեց. «Եթե ուզում ենք ընտանիքների երեխաների հավասարություն, ապա պետք է գիտակցենք, որ այդ հավասարությունը գոյություն չունի: Դա այս հասնելու համար մենք պետք է երեխաների դաստիարակությունը ընտանիքից վերցնենք, հանձնենք հասարակության հոգածությանը, ինչը կրածրացնի նման կազմակերպությունների դերը»: Սա մոտավորապես նման է 1918 թվականին կոմկուսի ուսումնակարգի հայտարարությանը. «Մենք պետք է հեռացնենք երեխաներին իրենց ընտանիքների խիստ ազդեցությունից և ազգայնացնենք նրանց»:

Մարդու իրավունքների գոյություն ունեցող կազմակերպությունների

գործնեությունը ուղղված է միայն միջամտելու ազդի ներքին խնդիրներին: Այդպիսի ավելի քան 5000 կազմակերպություններ կան. հարց է առաջանում. ո՞վ է ֆինանսավորում այս խմբերը:

Նման մեկ այլ օրինակ է Ամերիկայի պետական դեպարտամենտի, Եւրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդների դիտորդական առաքելությունների համատեղ հայտարարությունը, որտեղ գնահատվեցին 1999թ. մայիսի 30-ի ընտրությունները: Նրանք Հայաստանի կառավարությանն առաջարկեցին բարեփոխիչ ընտրական օրենքը և վերացնել ընտրական համակարգում եղած թերությունները: Հայ ժողովուրդն ունի հազարամյակների իրավական համակարգ՝ իր դատաստանագրքերով, մեկից ավելի սահմանադրություններով: Օրինակ՝ 1773 թ. Հակոբ Շահամիրյանի ստեղծած աշխարհի առաջին սահմանադրությունը՝ «Որոգայթ փառաց»-ը, 1862 թ. սուլթանից հաստատված՝ տաճկահայերի «Ազգային սահմանադրություն»-ը կամ մեր ժողովորդի սփյուռքահայ հատվածներին դարեր շարունակ ծառայած Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը եւ այլն, որոնց մասին հմուտ գիրք է գրել երևանցի ազգային գործիչ եւ պատմաբան Ռ. Համբարձումյանը:

Արդյո՞ք հայ ժողովուրդն իր այս ակադեմիական ընդունակություններով և աշխատախրությամբ չի կարող ինքն իր երկրի համար նախատեսած օրենքների հիմքում դնելի իր սեփական օրենքները՝ առանց արտաքին ուժերի կոպիտ միջամտության, որի անունն իրենք դրել են «օժանդակություն»:

Մարդու իրավունքների համաշխարհային շարժման նպատակը ազգերի քայլքայումն ու կազմալուծումն է: Հիանալի օրինակներ են Լենինը, Տրոցկին, Զինովևը, մարդիկ, որոնք ազգերին խոստանում էին ուտոպիական հասարակություն՝ իր կարգուկանոնով: Հետևանքը հետագա 65 տարիներն էին, որոնց ընթացքում մարդկությունը կրեց այնպիսի տանձանքներ, ինչպիսիք պատմությունը դեռ չէր տեսել:

Մեր բարօրության համար «անհանգստացող» համաշխարհային այդ կազմակերպությունները, որոնք ցանկանում են արհեստավարժ լավ խորհուրդներ տալ Հայաստանի կառավարությանն ու ժողովրդին, իրենց գործում կհաջողեն, եթե խորհուրդներ տալու փոխարեն իրական հարստություն և բարեկեցություն ստեղծող աշխատատեղեր գոյացնեին: Եթե

դա չեն անում, ուրեմն նրանց լավագույն օգնությունը մեզ այն կլիներ, որ վասա-փուսաները հավաքեին, հեռանային իրենց երկրները՝ իրենց սեփական խնդիրները լուծելու համար:

Armenian Reporter, 1999, 31 July

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԴԱՅԻՆ ԽՈՐՃՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցների Համաշխարհային Խորհուրդը իր հիմնադրման ժամանակներից սկսած՝ ենտևողականորեն մեկ խնդիր է իրականացնում. Եկեղեցու հիմնական առաքելությունը հավասարեցնում է սոցիալական խնդիրների լուծման հարցերին: Կրոնական բազմարիվ բարձր պաշտոնյաներ և առաջնորդներ սկսեցին ժխտել Եկեղեցու ավանդական առաքելությունն ու դերը: Նրանցից շատերը Ավետարանը քարոզելու փոխարեն սկսեցին միանալ քաղաքացիական անհնազանդություն և սոցիալական ծայրահեղականություն քարոզող շարժումներին: Սոցիալական ավետարանը բազմարիվ արտահայտություններ, ներկայացուցիչներ ու տարատեսակներ ուներ: Դրանցից առավել երեւլին ԱՄՆ Օհայո նահանգում ձևավորված «Կիրառական քրիստոնեություն» շարժումն էր:

Սոցիալական Ավետարանի կարկառուն առաքյալը բավտիստների հովանու տակ գործող Ռոշեստրի համալսարանի շրջանավարտ Ռուլտեր Ռոշենբուշն էր, որը հիմնադրեց «Ռոշեստրյան աստվածարանական սեմինարիան»: 1907թ. այստեղ հրատարակված՝ «Քրիստոնեությունը և սոցիալական ճգնաժամը» աշխատությունը Ռոշենբուշին հասարակական լայն ճանաչողություն բերեց: Ռուլտեր Ռոշենբուշը և դոկտ. Հարրի Վարդը 1908թ.-ի դեկտեմբերի 2-ին Ամերիկայի ձևավորեցին Քրիստոնի Եկեղեցին իր դաշնային խորհուրդը: Նրանք դարձան Եկեղեցիներում սկզբնավորված սոցիալական շարժման առաջնորդները: Շարժման հիմնական նպատակ հայտարարվեց քրիստոնեական անհատականության վերացման ճանապարհով շրջադարձը դեպի կոլեկտիվիզմ՝ որա համար որպես միջոց օգտագործելով Եկեղեցին: Տվյալ դեպքում ինչպես նախկինում գործող մյուս բոլոր սուստ մարդարեները, որոնք իրենց հակաքրիտոնեությանը հարյուրամյակներ շարունակ բողարկում էին քրիստոնեության վարդապետության և քրիստոնեական Եկեղեցու շահարկումներով, սրանք էլ այդ բողարկումը դարձրին այսպես կոչված «Աստծո բազավորությունը»:

Սոցիալիզմի այս բազավորությունը չէր ենթադրում հոգեպես ազատ ու անկախ անհատների հանրույթ, որտեղ մարդիկ Հիսուս Քրիստոսի հետ իրենց անձնական հարաբերությունները կառուցում են որպես իրենց Փրկչի: Նոր ստեղծվելիք հասարակարգը պետք է լի-

.42

ներ հավաքական հասարակություն, որի նպատակը աղքատության ու արտադրական անարդարությունների վերացումն էր, ինչպես նաև «տնտեսական արդարադատության» ապահովումը: Այս շարժմանը մասնակցում էին ոչ միայն հոգևորականներ: Դրանց նեկավաբների մեջ կային նաև աշխարհական ազդեցիկ դեմքեր: Օրինակ՝ Եկեղեցիների դաշնային խորհրդի բարձր պաշտոնյա Զոն Ֆուտեր Դալզը նախագահ Այզենհաուերի օրոք դարձավ ԱՄՆ պետքարտուղար: Դալզը իր համախմբների հետ այստեղ է ծրագրավորել Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, որը պետք է հաստատեր աստվածամերժ նոր համաշխարհային աշխարհակարգ:

Ամերիկայի ծշմարիտ քրիստոնյաները հետզհետեւ սկսեցին նկատել Եկեղեցիների Դաշնային խորհրդի վրա հակարիստոսի չար ազդեցությունը: Տեսնելով, որ իրենց խնամքով քարցրած հերքական խարդախությունը բացահայտվում է, Երրուայի Ռոռչիլդի դրամատունը իր ամերիկյան գաղափարակից մենաշնորհ դրամատների հետ միասին 1922 թվականին սկսեցին փողավորել Ամերիկայի գլխավոր աստվածաբանական համալսարաններում «Աշխարհիկ հումանիզմի» և «Ազատագրական աստվածաբանության» ուսուցման ծրագիրը: Նպատակը հետևյալն էր. Եկեղեցիների «Դաշնային» խորհրդի գործունեությունը աննկատ ու անարգել շարունակելու համար անհրաժեշտ էր կազմակերպության անունը փոխել տվյալ ժամանակաշրջանի համար ամրոխներին սրտամոտ մէկ ուրիշով: Եւ ահա 1950 թվականի նոյեմբերի 29-ին Եկեղեցիների Դաշնային խորհրդը վերանվանվեց Եկեղեցիների Ազգային խորհրդի: 1952 թ. սեպտեմբերի 30-ին մեծ շուրջով լույս տեսավ և ամերիկյան հասարակությանը ներկայացվեց Աստվածաշունչ մատյանի վերանայված, իրենց գաղտնի նպատակներին ծառայելու համար նախատեսված տարրերակը: Այս հրատարակության մեջ հատկանիւ կրծատված էին քրիստոնեական վարդապետության բազմարիվ եական աղաղափարները:

Ժնևում հիմնված Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը (ԵՀՆ) վերոհիշյալ կազմակերպությունների անվանափոխ նույնությունն է: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին անդամակցում են աշխարհի 90 երկրներում գործող բոլորքական և արևելյան ուղղափառ 263 Եկեղեցիներ: ԵՀՆ անդամ Եկեղեցիների հավատացյալներից շատերը մեծ տարակուսանքով են համոզվում այն իրողության մեջ, որ այս խորհուրդը փաստորեն իր ուշադրությունը շեղել է իրական հավատքի կենսական

.43

հարցերից և ուղակիրնեն ամտեսում է քրիստոնյաների հոգևոր խնդիրները : Գլորալստ – միաշխարհական ուժերի նպատակն է Եկեղեցին դարձնել «սոցիալական ավետարան» պարտադրելու համաշխարհային հաստատության, այն օգտագործել հասնելու «հարստորյան վերաբաշխման»:

**ԵՀԽ -ի սկզբունքների և նպատակների՝ նոյնիսկ հպանցիկ ուսումնասիրությունը ապացուցում է մեր վերոհիշյալ դատողությունների արդարացնությունը:** Այդ միտումները շարունակելու և քաղաքի ավարտին հասցնելու նպատակն է ուժերը ձգտում են քրիստոնեական բոլոր Եկեղեցիները միավորել մեկ համընդհանուր մարմնի՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի մեջ: Դր. Յուջին Քարտոն Բլեյքը, **ԵՀԽ-ի պաշտոնարող գլխավոր քարտուղարը**, Նյու Յորքի Ռիվերսայդ Եկեղեցում խոսած իր քարոզում, որն իրեն կոչ հետազայում տարածեց ամենոր, մասնավորապես ցույց էր տալիս, թե **ԵՀԽ-ն** տարբեր ժամանակահատվածներում ինչ վերաբերմունք է ունեցել ամերիկյան ապրելակերպի նախին: Դր. Բլեյքը միանշանակ նշում էր, որ. «Եթե ամերիկյան քրիստոնյաները ցանկանում են, որ իրենց հավատը համապատասխանի 20-րդ դարի վերջին քառորդի իրողութիւններին ու խնդիրներին, պետք է հասկանան և ընդունեն էկումենիկ շարժման սկզբունքները ու նպատակները»: Մենք տեսանք, որ վերոհիշյալ «Համամարդկային խնդիրները» քրիստոնեական վարդապետության իհմնաքարերը չեն ու ոչ մի առնչություն չունեն նրա Ավետարանների հետ: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդունած սոցիալական ավետարանը ենթադրում է, որ այս կազմակերպությունը մարդկային կենսակերպի իինալական նոյնեւում տնտեսության սոցիալիստական փիլիսոփայությունը: **ԵՀԽ-ն** հաճախ է խորը անհանգստություն արտահայտել դրամատիկական երկրներում առկա ընկերային անհավասարության և անարդարության վերաբերյալ: Այնչդեռ կազմակերպությունը փոքր ինչ անհանգստություն չի դրսերել համայնավարկան երկրներում գոյություն ունեցող անհատական ազատության զանգվածային խախտումների վերաբերյալ: Ծիծադելի չէ՝ արդյոք, որ այնպիսի դրանատերերը, ինչպիսիք են Էլի Լիլեյը, Ռոքֆելլերը և այլն, գործուն օժանդակություն են ցուցաբերում ԱՍՆ-ում ազատական աստվածաբանություն ուսումնասիրող ավելի քան 200 ճեմարանների: Հեզնական է այն փաստը, որ որոշ Եկեղեցական ճեմարաններ գործում են այնպիսի մարդկանց օժանդակությամբ, որոնց ճեմարաններին քրիստոնյան ժամանակին վրնեց Աստծո տաճարից:

**ԵՀԽ-ն** սոցիալական արդարություն հաստատելու համար փորձում է միջնորդի դեր կատարել մարդկանց և Աստծո միջն, այնինչ այդ դեպք պատկանում է միայն Հիսուս Քրիստոսին: Տարածելով այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «սոցիալական համակարգեր», «ազատականություն», «պայքար հանուն սոցիալական արդարության» և այլն, նրանք մարդկությանը փաստորեն շեղում են իրական քիսունեությունից: Փորձելով առաջ մղել դրամի իդեալը, որոշ ուժեր երկրորդական պլան են մղում հոգու ազատության Հիսուս Քրիստոսի վարդապետությունը: Ահա ավելի քան 2 հարյուրամյակ շարունակվում է սատանայական պայքարը քրիստոնեության դեմ, որի վերջին արտահայտությունը յուրաքանչյուր տասներորդին մահապատժի ենթարկելու էր քրիստոնյա Սերբիայում: Այստեղ անհրաժեշտ է պարզել, թե ով էր այս պատերազմի հիմնական կազմակերպիչը: Արդյո՞ք չար ուժերն Ամերիկան օգտագործում են իրենց նպատակներին հասնելու համար: Արդյո՞ք Ամերիկան կորցրել է իր քրիստոնեական «քարի» ժառանգությունը:

**ԵՀԽ -ի Սովետական Միությունում հազարավոր քրիստոնյաների հայածաներին վերաբերող բազմաթիվ փաստարդեր է ստացել, քայլ դրանք ուղղակի արհամարհվել են և որևէ ընթացք չեն ստացել: Փորձենք ու սմնափել սոցիալ-մաքրսիզմի գաղափարախոսությունը, որն այլ քան հարազատ է՝ Հետ խորհրդի դեկապարներին: Խորհրդի արևելա-հնդկական մասի գլխավոր քարտուղարը դր. Ֆիլիփ Փոքքերը խորհրդային միություն կատարած իր վեց թե յոր այցելություններից հետո հայտնել է, որ յուրաքանչյուր այցելությունից հետո նա այդ երկրից մեծ ներշնչանք է ստացել:**

Հայաստաննեայց Եկեղեցին, որ հայոց պետականության բացակայության պայմաններում մեր ժողովրդի համար եղել է թե ազգային ինքնակառավարման հաստատություն, և թե հոգևոր գրահ, դարեր շարունակ պայքարել է մեր Եկեղեցու ազատության ու ինքնիշխանության համար, բազում անզաններ քախվել է օտար զավթիների հետ, քայլ հակաքրիստոնի հետ երբեք չի ճակատել:

Հայ Եկեղեցին հարուստ է Աստծո խոսքի համար իրենց կյանքը զոհարեած բազում սրբերով ու նահատակներով: Հայաստաննեայց Եկեղեցին ու իր հոտը երբեք չպիտի մոռանան իրենց նահատակներին:

Հիսուս Քրիստոսը երբեք չպիտք է ընկալի բանակցությունների գործում օգտագործել գլուխացած գլամուրական մելոդիաների վրա գտն նախասման ու մարդաբանության մեջության վրա գրական գործում:

միջոցով, քանզի նրա ճշմարտությունը երբեք փոխգիշման առարկա չի եղել և չի կարող լինել: Նրա խոսքը անվերապահորեն ճշմարիտ է ինչպես երեկ, այնպես էլ այսօր և վաղը և հավիտյան հավիտենից:

Հայ ժողովրդի համար միշտ էլ ազգն ու Եկեղեցին մեկ միություն ու մեկ ամբողջություն են եղել: Մենք մեր ազգային Եկեղեցին նշտապես պաշտպանել ենք կասկածելի զաղավարախոսական և փիլիտփայական շեղումներից՝ ազգին տալով հոգևոր այնպիսի արժեքներ, որոնք զալիս են մեր Տեր Աստծոց: Կարևոր չէ, թե ինչ գիտական աստիճան ունեն մեր Եկեղեցու առաջնորդները: Կարևոր Աստծո խոսքին ճշտությամբ հետևելն է:

Հայ Եկեղեցու՝ ԵՀԽ-ի հետ համագործակցության առաջին փորձը զալիս է դեռ 20-րդ դարակեսից: 1945թ. Զ. Ռոբֆելլերը, որպես քարեկամ, ԵՀԽ -ին է նվիրաբերում 1մլն. ԱՄՆ դոլար: Այդ գումարը ստանալուց հետո խորհուրդը որոշում է Ժնևում քանալ միջազգային կրոնական ուսուցման կենտրոն, որը «քույր ազգերի Եկեղեցիներին կօժանդակի առավել եռանդուն ջանքերով լծվելու պետությունների քաղաքանության մեջ քրիստոնեական խորհմանը ձևավորելու գործին»: Այդ պայմաններով կենտրոն հրավիրվեցին նաև Բեյրութում և Լիբանանի այլ վայրերում գործող հայկական հոգևոր դպրոցների ուսանողների, որով և սկսվեցին մեր Եկեղեցու և ԵՀԽ -ի միջև համագործական գործյան առաջին քայլերը:

Իր արժեքային սկզբունքները համաշխարհային ընդունելության արժանացնելու համար մեր Եկեղեցին ընդհանուր եզրեր է փնտրում ԵՀԽ -ի հետ: Բայց չարի հետ համագործակցելուց անհնար է, որ նրանից որևէ քան չստանաս: Հայերս պետք է եւ պարտավո՞ր ենք պահպանել հազար յոթ հարյուր տարի շարունակ ազատ ու անկախ գործող մեր Եկեղեցու այդ կարգավիճակը: Դա կենտրոնացնի մեր ազգի հոգևոր և կրոնական արժեքները, ինչպես եղել է մեր քաղմադարյան պատմության ընթացքում:

Հայ Եկեղեցին ու ազգը անանջատ էին երեկ, ամբաժան-անտրոհելի են այսօր: Պահպանելով հայաստանեայց Եկեղեցու անկախութիւնը, մենք դրանով առաջին հերթին հզորացնում ենք ազգը: Միայն այս ճանապարհով մենք աշխարհին ցույց կտանք հայկազյան հոգու մեծությունը: Հակառակ պարագայում մենք ոչ միայն մեզ կվտանգենք, այլև քուլացնելով ինքներս մեզ, կօգնենք քրիստոնեության թշնամիներին: Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցուն օգնենք, որպեսզի մեր ժողովրդին շարունակի առաջնորդել առ Աստված մեր հա-

զարամյա ճշմարիտ դավանանքով, որը ո՞չ արևելյան է, ո՞չ արևմտյան, այլ այդ երկու դավանանքների տարրերություններն իրար միացնող զուտ հայկական մի անշփորելի երևույթ, որին մեր հներն ասում էին հայադաւանութիւն:

## ՄԻԱՅՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱԸ ՓՈՂԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱԸ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հա-Սանցում գտնուող Գերնսի կղզին 176 տարի առաջ տնտեսական ճշգրիտությունը կազմել է 5 մլն դրամ, որոնք խորտակում էին երկիրը: Այդ երկիրը այնպիսի ահոելի պարտքեր ուներ, որ ազգային եկամտի 80 տոկոսը վճարում էր միայն որպես պարտքի տոկոս:

Բարեբախտաբար Գերնսի կղզում կային մարդիկ, որոնք կարողանում էին մտածել տրամաբանորեն: Նրանցից մէկն ասել է. «Մեր կառավարութիւնը դրամ փոխառելով Անգլիական Բանկից (մասնաւոր քանի), կրծատում է մեր հասույթները: Եկէք դրա փոխարեն ունենանք մեր սեփական գանձարանը և ստեղծենք մեր սեփական դրամը»:

Այս մտայնութիւնը, որ հետազում դարձաւ որոշակի նպատակա-ուղղուած գործողութիւն, հանգեցրեց այդ երկրի կենսամակարդակի բարձրացնանը, այն է՝ գործազրկութեան բացակայութիւն, արդիական վարչահամակարգ, արտաքին պարտքի բացակայութիւն: Գերնսի կառավարութիւնը տպեց իր սեփական արժեքները, որոնք երկարաժամկետ էին ու անտոկոս: Դրանք օգտագործում էին տնտեսութեան մէջ՝ Գերնսի կարիքների համար:

Սեփական երկրի բաղաքացիներից գանձուող հարկերը կարող են փոքր լինել միայն այն դէպքում, եթէ երկիրը արտաքին պարտքի տոկոսները մարելու խնդիր չունի:

Գերնսին շարունակում է այդ բաղաքականութիւնը և երբեւ չի ունենում սղած:

Մասնաւոր բանկը որեւէ յետամնաց պետութեանը փոխ տուած փողերի շնորհի իրեն ուժ և իրաւոնք է վերապահում տոկոսների տեսքով յափշտակել տուեալ պետութեան բաղաքացիների արտադրած հարստութիւնները: Բացի դրանից՝ պարտքի տոկոսները կուտակուելով, ծանր բեռ են դառնում յետազայ սերունդների համար: Թումաս Չեֆերսոնը, ԱՄՆ-ի երրորդ նախագահը, ասել է. «Մասնաւոր կենտրոնական բանկի արտադրած հանրային արտաքորդությունը աւելի մեծ վտանգ է ներկայացնում, քան յարձակման պատրաստող բանակը»:

Մարդկան երբ ուզում են որեւէ բան գնել, իրենց ունեցած փողը տալիս են ուրիշից: Բնուրյունը փող չի ստեղծում: Մարդկանց հաշուապահներն են աստեղում փողեր: Միայն կառավարութիւնը իրաւոնք պիտի ունենա փողը արտադրելու դաշտը ուղղութեան միակ դերը պիտի լինի իր սեփական դրամի տպագրումը և դրա արժեքի կարգաւորումը՝ պահուատային ուկու պաշարի հետ յարաբերութեամբ: Կառավարութիւնը պիտի ապահով պահպանի ուկու պաշարները՝ իր կտրած փողը յետ ստանալու համար:

Հարկերի տեսքով, տրամաբանորեն համարում են տարադրամ: Այս տեղ կարեւոր գանձարանն է: Կառավարութիւնը կարող է ծախսել գանձարանի պարտամուրիակները ուղղակիորեն, առանց գանձարանի եւ առանց փոխառութեան:

Դրանով կառավարութիւնը խուսափում է նախորդ պարտքերի տոկոսները վճարելու համար նոր պարտքեր վերցնելու անհրաժեշտութեամբ պայմանաւորուած բակարդից: Եկամուտների բաշխման ցուցանիշներով գանձուող հարկերը բում են պարզ ու անշառ, բայց դրանցից պէտք է խուսափել, քանի որ այդ հարկերի «արդար» գանձումը պատրուակ դարձնելով, կառավարութիւնները բռնապետութիւն են դառնում:

Քաղաքացիները կարող են յետ վճարել այն գումարները, որոնք իրենց վրայ ծախսում է կառավարութիւնը, սակայն չեն կարող դրա հետ մէկտեղ վճարել նաև դրաց փոխառնուած գումարների տոկոսները: Սզզային տնտեսութեան վերականգնումը կինի առաւել արագ, եթէ գումարները փոխառնուեն սեփական կառավարութիւնից եւ սեփական պետութեան գանձարանից՝ առանց տոկոսի: Բացի դրանից՝ կառավարութիւնը շպէտք է վաճառի իր ամբողջ ուկին, այլ դրա որոշակի տոկոսը պիտի պահի պահեատում՝ իր բողարկած դրամը ետ վերադնելու համար:

Այսօր Հայաստանի կառավարութիւնը համաշխարհային բանկից այնպիսի հսկայական գումարներ է փոխ վերցրել, որ եթէ նոյնիսկ ամբողջ Հայաստանը վաճառի, տակից չի կարողանա դուրս գալ: Արժոյթի Միջազգային Հիմնադրամն ու Համաշխարհային Բանկը այդ փոխառութիւնները տալիս են այն պատճառով, որպեսզի Հայաստանին տնտեսական կախման մէջ զցելով, կարողանան Հայաստանի կառավարութեանը գործիք դաշտնել՝ իրենց առջև դրած նպատակները իրականացնելու համար: Անհրաժեշտ է, որ Հայաստանի իշխանութիւնները անյապաղ որաշում ընդունեն, որով կտրականապէս արգելիք արտահմանեան աղբիւրներից փոխ վերցրած միջոցներով արտաքին պարտքի վճարումը: Հայաստանի կառավարութեան միակ դերը պիտի լինի իր սեփական դրամի տպագրումը և դրա արժեքի կարգաւորումը՝ պահուատային ուկու պաշարի հետ յարաբերութեամբ: Կառավարութիւնը պիտի ապահով պահպանի ուկու պաշարները՝ իր կտրած փողը յետ ստանալու համար:

Հայաստանի խորհրդարանը պիտի որոշում ընդունի տպագրել երկրի սեփական արժութային տարադրամը, որը բնակչութեան հա-

մար անտոկոս պիտի լինի: Դրան զուգահեռ՝ պիտի նուազեցնել միջազգային ֆինանսական հաստատութիւններից վերցրած գումարների տոկոսներից առաջացած արտաքին պարտրի ծավալը:

Հայաստանը պետք է դառնա իր երկրի հարստութեան տէրը:

2000թ. Մարտ

Armenian Reporter, 2000, 8 april

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱԿԱԲԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ  
ԻՆՔՍԱՊԱՇՏՊԱՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՅԱԼԵՐԸ

Հարգարժան հայրենակիցներ ամրող աշխարհի,

Ամերիկայի Միացյալ Նահանգների հարավային մասի հայոց եկեղեցու ներկայացուցությունը հանդես է եկել հայտարարությամբ, որ մասնավորաբեն ասկում է. «Դայկական ծագումը պարտադիր պայման չէ Դայ առաքելական սուրբ Եկեղեցուն անդամագրվելու համար»: Սա նշանակում է, որ բոլոր հայկական եկեղեցին պետք է բաց լինի աշխարհի բոլոր ազգություններին անդամագրելու համար: Սա հայոց եկեղեցու պատմական ուղղուց էական շեղում է:

Հայոց եկեղեցին իր սկզբնավորման օրից ազգային է: Հայոց եկեղեցին սպասարկել է ոչ թե աշխարհի բոլոր քրիստոնյա ազգերին, այլ բացառապես հայ ժողովրդին: Հայկական ծագում ունեցող բոլոր հայկացուները Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ են: Հայոց եկեղեցին իր 1700-ամյա ազգային ուժին չի անցել աշխարհի բոլոր ազգությունների համար. այն զուտ հայկական բնույթ ունի և սա մեր եկեղեցու հիմնարար սկզբունքներից է:

Հայոց եկեղեցու ապահայկականացման այս նեճոց քայլի հիմնական պատասխանատվությունն ընկած է միաշխարհական հակազգային այնպիսի ուժի վրա, ինչպիսին է Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը, որի հիմնական նպատակն է շեղումը քրիստոնեկան սկզբունքներից՝ հօգուտ աշխարհիկ հումանիզմի և ազատ աստվածապաշտության: Այս կառույցի հայկական մասով հիմնական նպատակը հայոց եկեղեցու ազգային հիմքի բուլացումն է, որն իր հերքին կտանի հայոց ազատագրական պայքարի գործում եկեղեցու ունեցած մեծ դերի անհամեմատ բուլացմանը:

«Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է, այս հատկանիշը յուրահատուկ է իհն ավանդույթ ունեցող բոլոր եկեղեցիներին», - գրում է Մադարիա Օրմանյանը:

Գլոբալիստ-միաշխարհական ուժերի նպատակն է նախ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջոցով բոլացնել, ապա լիովին վերացնել ազգային եկեղեցին:

Հայոց պատմության մեջ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ քշնամիների դավերի օրինակները շատ են՝ սկսած Սահ ամյան Պարսկաստանից, Օսմանյան Թյուրքիայից մինչև ցարական եւ Խորհրդային Ռուսաստանը։ Այժմ հայոց Եկեղեցին ենթարկվում է պահելի նորր ու բարեփած հարձակման, որի նպատակն է քանդել հայ Եկեղեցին՝ վերացնելով նրա ազգային բնույթը։ Այսպիսով փորձ է արփում մեզ հոգեպես զինաքափելու ճանապարհով՝ ամբողջ հայ ժողովրդից առևանգել նրա հոգևոր անկախությունը, հոգեպես նվաճել նրան։ Թուլացնելով Հայաստանում հայոց Եկեղեցու պահապանի ծեռքը միաշխարհական զաղտնի ուժերը քայլայում են պետության, ազգի և Եկեղեցու միջև առկա այն հզոր հագարամյա դաշինքը, որին պարտական ենք մեր ներկայով։

Ավյուղում հայոց Եկեղեցին այն միակ կառույցն է, որը հոգեպես համախմբում է բոլոր հայերին և նրանց օգնում պահպանելու իրենց ազգային դիմագիծն ու ինքնուրյունը։ Հետևաբար աշխարհի բոլոր շրջաններում հայերը պետք է պատրաստ լինեն դիմակայելու այն արտաքին ճնշմանը, որն ուղղված է հայոց Եկեղեցու դեմ։

Մենք արտաքին մուր ուժերին չպետք է թույլ տամբ մեր ուղեղները լվանան «աշխարհիկ հումանիզմի» և «Էկումենիզմի» կոչերով։ Կոչեր, որոնք քարուն նրանկատությամբ ուղղված են Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու վերջնական փլուզմանը։ Քրիստոնեական աշխարհի հետ ցանկացած երկխոսության ժամանակ մեր Եկեղեցին պետք է պահպանի իր ինքնուրյունությունն ու ազգային սկզբունքները։ Մենք ակնկալում ենք, որ մեր Եկեղեցական վերնախավը իր ուժերը կկենտրոնացնի Եկեղեցու դավանարանական հիմքերը պահպանելու և ամրացնելու համար՝ դրանով իսկ ազգը պաշտպանելով արտաքին հոգևոր-կրոնական հարձակումներից։ Մեր քարձրաստիճան Եկեղեցականները ընտրված են որպես մեր Եկեղեցու հազարամյա ավանդույթի պահապաններ։ Նրանք պետք է շարունակեն մեր հոգևոր մեծ հայրերի ազգապահպան գործը, չենթարկվեն արտաքին հոգևոր ուժերի սուտ մարգարեւություններին և իդեալներին։

Մենք պետք է ամրացնենք հայոց Եկեղեցու ինքնուրյունը, հետևելով Ս. Վարդանի և Ս. Պետրեցի օրինակին՝ 5-րդ դարում, Խրիմյան Հայրիկի օրինակին՝ 20-րդ դարում։ Հակազդեցությունը պետք է լինի արագ, ամուր եւ ազդու, քանի դեռ ուշ չէ։

Մեր կոմիտեն կապեր է հաստատել ԱՄՆ-ում, Կանադայում, Եվրոպայում և Հայաստանում գործող Ենթակոմիտեների հետ, որպեսզի միասնական ուժերով ու համաշխարհային ընդգրկումներով միասնաբար պահպաններ հայոց Եկեղեցու ազգային դարավոր սկզբունքներն ու անկախությունը։

Հայոց Եկեղեցու իրական տերը հայ ժողովուրդն է։ Հենց ժողովուրդը պետք է պաշտպանի իր ճակատագիրը և Հայաստանում, և Սփյուռքում։

Աստված մեզ պահպան։

Դայոց Եկեղեցու ազգային ինքնուրյան պաշտպանության կոմիտենի Անդրանիկ Պետրոսյան, Արտավագդ Ավագյան

2001թ. մայիս

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՏՈՒԹԻՒՆ

Հայաստանի ազգային պատմութիւնը կը յիշատակէ բազմարի դէպքեր, որոնք բուլացուցած են եւ պառակտած մեր միացեալ ուժերը. եւ որոնց հետեւամբները եղած են աղետալի ու կործանարար: Ներկայ փոքրատարած Հայաստանի անկայուն եւ փխրուն դրութիւնը ուղղակի հետեւանք է նոյնինքն «քաժնեսց տիրեսց» հետեւուրեան:

Այսօր եւս ճշորէն կը կրկնուի այդ պատմական տեսարանը. ան «Թուրքիայկական հաշտութեան յանձնաժողովն» է: Պատմութիւնը ցոյց կուտայ. թէ հայ ժողովուրդին թշնամիները միշտ պինդ դիրք բռնած են, երբ մեզի հետ դէմ առ դէմ նստած «հասկացողութիւն» հետապնդած են: Ցիշենք 1900-ական թուականներուն, երբ հայերը, առանց տեղեկացուած ըլլալու մուր ոյժերու մասին, երիտասարդ քուրքերուն իրք «Եղբայր» համարեցին եւ այդպէս ալ ընդունեցին:

Այն հայերը, որոնք կը բաջակերեն «Թուրք-հայկական հաշտութեան յանձնաժողով»-ին, այդքան պարզամի՞տ են, չե՞ն տեսներ (զիտակցարար կամ ոչ) այդ խաւարածին ուժերը. որոնք՝ կազմ ու պատրաստ՝ կուզեն բաժանեալ հայութիւն մը ստեղծել...

Հայաստանի ճակատագիրը սահմանուած է աշխարհի ներկայ կառավարողներէն. տէր-տիրականներէն. որոնք իրենց յատուկ միջոցներով իրենց գծած ճանապարհը կը բարձին: Մենք ալ հարկադրուած ենք ընդունել իրենց արժեքները եւ կենցաղը. ինչպէս «ժողովրդավար պետութիւն», «քաղաքացիական հասարակութիւն», «անհատական ազատութիւն»: Հայկական այսօրուայ պետական հաստատութիւնները համաշխարհայնացման հետեւանօր օրէցօր աւելի կախեալ են աշխարհի տնտեսական սակաւապետութիւններէն(օլիգարքի): պէտք չէ յոյսը դնել այդպիսի ուժերու վրայ. որոնք կը ծգտին Հայաստանի մշակույթը փոփոխութեան ենթարկել եւ ինքնակառավարման միջոցները պարտադրել: Ասիկա չկրնար Ազատ ազգ մը կազմաւրել:

Եթէ այսպէս շարունակուի, ժամանակը հեռու չէ. երբ մեր ըմբռնումները ժամանակավրկա պիտի նկատուին: Մայր հայրենիք, ընտանիք, հոգեկան եւ բարոյական արժեքներ յետամնաց պիտի սեպուին:

Եղած կրօններ եւ պաշտամունքներ. խոտոր, անհիմն յղացումներ. սեռային փոքրամասնութիւններ. դասալիք փախստականներ. հաշտարաբներ. կաշառուած մարդիկ պիտի ըլլան մեր ընտրանին կազմողները: Այս անքարոյական հոսանքին դէմ ոչ մէկ դիմադրու-

թիւն կայ Հայաստանի մէջ: Մենք չենք ուզեր դիմակայել թշնամին, իսկ ան սուս բարեգործի բղամիդ զգեցած՝ կը սողոսկէ մեր մէջ: Թշնամին անզուք է եւ անողորմ. անոր անձնատուր ըլլանք: Ան որքան դրսէն, նոյնքան ներսէն կ'աշխատի: Այս բարոյալըման եւ յուսահաւորեան ինելազար ընթացքը պէտք է կասեցուի:

Հայ անհատներու եւ կազմակերպութիւններու շպատկաներ հայրենիքի ճակատագրին եւ ներքին գործերուն միջամտելու գործնական բայլեր ընելու պարտաւորութիւնը: Ասիկա կառավարութեան ասպարեզն է: Բայց ան տեղեակ պէտք է ըլլար ծածուկ եւ մուր ուժերուն զոյլութենէն: Կառավարութիւնը դիանագիտական ուսումնական եւ փիլիտփայական ուղղութիւններու ազդեցութիւնէն հեռու պէտք է մնայ եւ իմաստութեամբ աշխատի հայ ժողովուրդին բարօրութեան համար: Մեր դիանագէտները գեղեցիկ ճառերով կայցելեն Նոր աշխարհակարգ ստեղծելուն լծուած կեղրոնները՝ այդ աշխարհակարգին անդամ ըլլալու յոյսեր փայփայելով, բայց շատ շուտով պիտի հիարափուին ճշմարտութիւնը գիտնալով: Այսօր Հայաստանը ունի բացայսուած տեսանելի ու նաև անտեսանելի թշնամիներ:

Անտեսանելի թշնամին մէկ օրինակը Արժոյրի Միջազգային Հիմնադրամն է (ԱՄՀ-IMF-International Monetary Fund), ինչպէս նաև համաշխարհային դրամատունը (ՀԳ-WB-World Bank): Երկուը ալ բուռն ցանկութիւն կը յայտնին փողաւորելու Հայաստանի տնտեսութիւնը վերականգնելու աշխատանքները:

Ենչու այդ գումարները, պարտադրեալ նախապայմաններով խեղդուած եւ նախապայմաններով կորուած. Հայաստանի տնտեսական դրութիւնը ճահճային վիճակի մէջ կը պահին դաւադրաբ եւ նոյնիսկ անկման կենթարկեն: Հայաստանը պէտք է իր ճակատագիրը իր ծեռը առնել՝ ստեղծելով իր դրամը 50 տոկոս ուկիով եւ ցած տոկոսով (3-4%) փոխ տալով ժողովուրդին օրինաւոր գործեր բանալու համար. փոխանակ՝ ՄԴ-Ը եւ ՀԳ անխիղճ պայմաններուն հետեւելու: Եթէ 1990-էն իսկ այս ճեւով պարկէշտ դրամական բաղաքականութիւն մը հաստատուէր, այսօր Հայաստանը կը կարողանար քալել դէպի աւելի բարգաւած եւ ծաղկուն իրավական մը:

Հայկական համախմբումը (Armenian Assembly) պէտք է դադարեցնէ ամերիկեան ոգիի եւ բարեկրու փոխադրումը Հայաստան: Այդպէս շարունակուելու պարագային՝ մեր երկիրը պիտի վերածուի մէկաշխարհական տարածութեան: Հայկական համախմբումը իր շա-

իհն համար զացեր միացեր է այդ ազդեցութիւն ունեցող ուժերուն, բայց շանդարադառնար, որ նոյն այդ ուժերը զիմք որպէս գործիք կը գործածեն:

Հոկտեմբեր, 2001 թ.

Armenian Reporter, 2001, 27 October  
«Նախիջևան», 2001թ. նոյեմբեր, թիվ 21

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶԵ

1990թ.Խորհրդային Սիուրյան անկումից հետո նորաստեղծ Հայաստանի առաջնորդները չգիտեին ազատ շուկայական տնտեսություն ստեղծելու ձևերը: Առաջացած պարապությունը հանգեցրեց ամիստ արկածախնդիրների միջև պայքարի՝ տնտեսական ապահովության հասնելու համար: Դա վերածվեց մրցավագրի՝ ուղղված վերևներ հասնելուն և այստեղից կառավարելուն: Մի քանի տարի հետո ստեղծվեց սահմանադրությունը, որում ներառված չէր ներկառուցվածքային հսկողությունը և հավասարակշուրջությունը: Հսկողությունն ու հավասարակշուրջությունը առանձին անհատին չին տրամադրի իշխանություն: որոշելու ամրող ազգի ճակատագիրը: Հսկողությունն ու հավասարակշուրջությունը ներառվեցին Ամերիկայի սահմանադրության մեջ՝ իմաստուն ու հայրենասեր մարդկանց կողմից: Ոչ ոք չուներ այլ իշխանություն, բայց կառավարությունից նրան տրվածից: Այդ փաստարուղը կազմվել էր այնպես, որ կառավարությունը չխանգարեր մարդկանց ազատ շունչ քաշելուն: Զարմանալի է, թէ ինչո՞ւ Հայաստանի կառավարությունը չկիրառեց 1778 թ. Ամերիկյան սահմանադրության մորելը: Մեր ժողովունիք աշխատահրությունը և ստեղծագործական ներուժը կարծ ժամանակում կծաղկեցնեին Հայաստանի տնտեսությունը՝ բարօրություն պարզելով նրա բնակչության մեծ մասին:

«Հայտնված առաջնորդները» չին հասկանում, որ միայն ազատ մարդիկ են ստեղծում հզոր տնտեսություն, այլ ոչ թէ կառավարությունը: Նրանք չգիտեին, որ ժողովրդավար երկրների օրենքները սահմանափակումներ են դնում կառավարությունների վրա: Նրանք գիտեին միայն, թէ սոցիալիզմն է ստեղծում հարստություններ՝ բայց գողանալով արտադրությունից, տալով մյուսներին: Նրանք չին հասկանում, որ կառավարության պարտականությունն ոչ թէ տնտեսության կառավարումն է, այլ դրա պաշտպանությունը: Պարտականությունը իր իրավասության տակ գտնվողների կյանքի և սեփականության պաշտպանությունն է արտաքին և ներքին ազրեսորներից: Կառավարությունը նաև պարտավոր է լուծել առաջացող վեճերը, և մարդկանց բողնել ազատորեն ընթանալ դեպի իրենց օրինական նպատակները: Այդպիսի վերաբերմունքը կնպաստեր ժողովրդի կենսամակարդակի և Հայաստանի կառավարության հեղինակության բարձրացմանը, երկրի տնտեսական հաջողությանը: Դրա փոխարեն կառավարությունը գերադասեց անհատական շահը՝ երկիրը կառավարելով միջազգային դրամական հաստատություն նպաստավոր

պայմաններով փոխառություններ վերցնելով: Այդիսի կառավարման համակարգով երկիրը երկար չի դիմանա: Իհարկե դա չի վերաբերում այն փոքրարթիվ մարդկանց, որոնք, մոռանալով ազգային շահի և քարեկեցության առաջնայնությունը, հիշյալ գումարներից վիրխարի օգուտներ են քաղում:

Սարկացնող փողերից հրաժարվելու վառ օրինակ է Գերնսի կղզին Լա Մանշի նեղուցում, որը 176 տարի առաջ տնտեսական ճգնաժամի մեջ էր: Այն ուներ պարտքեր, որոնք կործանում էին երկիրը: Բարեքախտարար կղզում կային մարդիկ, որոնք մտածում էին տրամարանորեն: Նրանցից մեկը ասաց. «Մեր կառավարությունը մեզնից կտրում և տալիս է Անգլիայի Բանկից փոխառած պարտքը»:

Դրա փոխարեն եկեր հիմնենք մեր սեփական դրամատունը և ստեղծենք մեր սեփական դրամը»:

Դրա արդյունքը եղավ բարձր կենսամակարդակը: Ոչ մի գործազրկություն, զարգացած ենթահամակարգեր և ոչ մի կառավարական պարտք: Գերնսիի կառավարությունը ստեղծեց իր սեփական արժեքթթվերը, որոնք երկարաժամկետ էին ու անտոկու: Դրանք ուղղվում էին Գերնսիի տնտեսության կարիքներին և ետ էին զանձվում փորբ հարկերի միջոցով: Հարկերը փորբ կարող են լինել, եթե չկա կառավարական պարտք և հետևաբար պետությունը չի վճարում դրա տոկոսները: Գերնսին շարունակում է այդ անել և երբեմ չի ունենում տաճ: Նախկինում Գերնսին այնպիսի ահոերի պարտքեր ուներ, որ ամրող եկամտի 80% վճարում էր միայն որպես պարտքի տոկոս:

Գերնսին աշխարհագրական դիրքով տարբերվում է Հայաստանից, սակայն սկզբունքը նույն է: Հայաստանի բանկերը անհարկի տոկոսներ են սահմանում՝ սեփականատերերին ու ազգարակատերերին փոխառություններ տալու համար, քանի որ դա լավ միջոց է նրանց ունեցվածքը գործանալու համար:

Այսօր Հայաստանի կառավարությունը այնպիսի հսկայական գումարներ է փոխառում «միաշխարհական» բանկերից, որ երբեք ի վիճակի չի լինի վճարել դրանք: Միջազգային բանկերը Հայաստանին վարելու են տրամադրում այն պատճառով, որ կարողանան Հայաստանին թելադրել, թե ինչպես կառուցել իր ապագան և ճակատագիրը: Հայաստանի սահմանադրությունը պետք է շատ արագ սահմանի, որ Հայաստանի կառավարությունը չպետք է պարտքերի տոկոսները վճարի արտասահմանից փոխառած դրամական միջոցներից: Հայաստանի կառավարությունը պետք է անմիջապես տպագրի իր սեփական փողերը և դրա ար-

ժերը կարգավորի ուկո սեփական պաշարների հարաբերակցությամբ: Հայաստանի ուկո հանքերի կառավարման իրավունքի վաճառքը ազգային ու պետական հանցագործության դրսերում է: Այդ սխալը պետք է ուղղվի խորհրդարանի պահանջով, որը հատուկ օրենքով պիտի արգելի ուկո դրումը երկրից: Ուկին պետք է պահպանվի հատուկ պահանում՝ բանակի հսկողության ներքո:

Ֆրանսիացի պետական գործիչ և տնտեսագետ Ֆրեդերիկ Բաստիատը 1850թ. ասել է. «Աստված մարդուն տվել է այն ամենը, ինչը անհրաժշտ է, որպեսզի նա կարողանա հասնել իր նպատակին: Նա ապահվել է մարդու ինչպես ընկերային, այնպես էլ մարդկային պահու նշանունը ները: Մարդու սոցիալական օրգանները այնպես են ստեղծված, որ կարող են ներդաշնակորեն զարգանալ միայն ազատության մարոր օդում: Հեռացրեք նրանցից ողակները, շրաները, կարքերն ու փշերը, հեռացրեք արհեստական համակարգերը, հեռացրեք կառավարության դեկավարների քանակությունները, նրանց հասարակական ծրագրերը, նրանց համակենտրոնացումները, նրանց հարկերը, նրանց կառավարական դպրոցները, նրանց պետական կրոնները, նրանց դրամաշնորհները, նրանց սահմանափակումները և նրանց կրոնապաշտուական կենդարության նույնությունները: Եթե այժմ, եթե մարդկության բարեգործներն ու օրինաստեղծները այդքան համակարգեր են մոգոնել «հասարակության համար», կառո՞ղ են նրանք վերջացնել այնտեղ, որտեղից հարկավոր էր սկսել: Կարո՞ղ են նրանք չեղյալ համարեն բոլոր համակարգերը և փորձն իրական ազատությունը»:

Որ Հայաստանի Հանրապետությունը ազատ ու անկախ չէ, շատ լավ երևում է 2003թ. Հայաստանի նոր խորհրդարանի կազմավորման առիրով լրագրողներին տված հարցազրույցից, որտեղ նորընտիր խորհրդարանականները ասում են, որ ժողովրդակարության մակարդակը Հայաստանում բարձրացնելու են՝ երկրի օրենսդրական դաշտը համապատասխանեցնելով միջազգային մակարդակին: Հայտարարության բանալին համապատասխանեցնել բառն է. եթե Հայաստանը հանրապետություն լիներ, ապա ինչ-ինչ արտասահմանյան հաստատությունների բոյլ չէր տա որոշել, թե ինչը պիտի ընդունելի լինի Հայաստանի կառավարության համար, ինչը՝ ոչ:

2003թ. փետրվարի 19-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ թեկնածուներից ոմանք սփյուռքի մեծահարուստներից և հիմնարաններից գումարներ էին ստանում: Սփյուռքի դրամական օգնությունը Հայաստանին պետք է քաջալերվի, սակայն լավ կլինի, որ այն

ուղղված լինի մարդասիրական կամ արդյունաբերական ու արտադրական նպատակների: Իսկ եթե այդ օգնությունը ուղղվում է կուսակցությունների կամ թեկնածուների ընտրարշավներին, ապա դա անօրինական է: Հայաստանի ընտրությունները և դրա արդյունքները միայն տեղի հայերի ներքին գործն է: Եթե Հայաստանը իրական համրապետություն լիներ, ապա այս բոլոր չափորոշիչները պետք է խստորեն պահպանվեին, ինչպես նաև ընտրությունների արդարությունը և օրինականությունը ապահովելու համար Հայաստանը կարիք չպիտի ունենար արտասահմանյան դիտողների: Հայաստանի համար անշուշտ կարևոր է այլ երկրների հետ առևտրական և գործընկերային հարաբերություններ հաստատել: Սակայն նույնքան կարևոր է, որ Հայաստանը զգուշանա հարաբերություններ ունենալ կասկածելի նպատակներ ունեցող կազմակերպությունների հետ, որոնք իմանվել են անկախ պետությունների ներքին գործերին միջամտելու նպատակով: Օրինակ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (OSCE), Եվրոխորհրդարանը, Եվրոմիությունը, Եվրոպայի Խորհրդը: Այս կազմակերպությունների մտահոգությունը այն չէ, թե Հայաստանը ինչպես է կառավարվում: Նրանց միակ մտահոգությունը և նպատակը պատմական Եվրոպայի պետությունները ու ազգությունները վերացնելն է, ինչը ուղղված է միջազգային կառավարության դիվային ծրագրերի իրականացմանը: Ներկայումս նրանց վարած քաղաքականությունը ուղղված է Հայաստանը դարձնել մի ինչ-որ անհետ երկիր, հայկական քանակը՝ միջազգային խաղաղապահների մի մասնիկ, հայկական մշակույթը՝ ինքնուրյունը կորցրած անհասկանալիություն, Հայաստանեաց ազգային եկեղեցին՝ միջազգային եկեղեցի/ եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը: Վերջապես նրանց նպատակն է հայերին միջից ազգային հպարտություն ու հայրենասիրությունը քաղհանելով՝ մեզ վերածել դժգույն ու անհայտնիք աշխարհաքաղաքացիների:

2003թ. հունիսի 27-ին Համաշխարհային Բանկի տնտեսագետ Մորին Սակ-Լաուզինը Բարքում կայացած մի խորհրդաժողովում ասաց, որ Ետխորհրդային երկրների կրթական համակարգը կարիք ունի բարեփոխումների: Բարեփոխում ասելով նա նկատի ունի ուղեղների լվացում և նոր սերնդին իրենց ուզած կերպով դաստիարակում, որով հնարավորություն կունենան Հայաստանը առավել հեշտությամբ կառավարել:

Հայաստանի խորհրդարանի նոր խոսնակ Արքուր Բաղդասարյանը հայտարարել է, թե Հայաստանի քաղաքացիական քրեական օրենսգիրը պետք է համապատասխանեցնի Եվրոպական օրենսդրության շա-

փանիշներին: Սակայն Արքուր Բաղդասարյանը չգիտի, որ Եվրոպական օրենսդրությունը ստեղծվել է Եվրոպական ազգերին ծովելու համաշխարհային կառավարության հեռահար նպատակներ իրականացնելու համար: Դրա վառ ապացույցը անկախ երկրի օրենսդրությունը արտադրին ուժիքի կողմից վճռելու փասոն է. մի՞քև Հայաստանի նուավորականությունը չի կարող կազմել սեփական երկրի օրենսդրությունը:

Այսօր Հայաստանը ոչ թե հանրապետություն է, այլ իրականում պլուտոկրատիա է (փողի իշխանություն):

Լիվոնիա, Միջիգըն

2003թ. հունիսի 28

Armenian Reporter, 2003, 19 July

Ես նոր եմ վերադարձել Հայաստան կատարած երեքարարյա այցելությունից, որի նպատակն էր ավելի խրույամբ տեղեկանալ ազգի քաղաքական և ընկերային վիճակի մասին: Ես մի քանի անգամ Հայաստան այցելածներին հարցեցի, թե արդյո՞ք երկրում առաջընթաց տեսնում են: Բոլորի պատասխանն այն էր, որ իրենց նախորդ այցելից հետո քաղմարիվ փոփոխություններ են կատարվել: Ես ե՛լ փոփոխություններ նկատեցի 1997 թվի իմ այցի համեմատ: Քավական մեծ գործունեություն էր զգացվում ներքին ենթակամակարգերի, ճանապարհների կառուցման, ստորգետնյա խողովակների անցկացման, շինուարյունների վերանորոգման գործմեթացում՝ շնորհիվ Քրք Քրորյանի քարեգործության (Աստված նրան օրինի): Կառուցվել են նաև քավական շատ բարձրորակ ու ճաշակով ռեստորաններ: Հնարավոր է գնումներ կատարել փոքր անհատական խանութներից կամ բարձրակարգ մեծ խանութներից, որտեղ փաճառվում են աշխարհի տարրեր երկրներից թերված մրերներ: Սակայն քաղաքում դեռևս կային քաղմարիվ մուրացկաններ, որոնք մեզնից անընդհատ փող էին ուզում, երբ քայլում էին փողոցով: Մի երեկո մեր տան զանգը տվեց մի կին և խոնդեց դրամ՝ իր երեխաներին կերպելու համար: Մենք այցելեցինք Գյումրիի աղետավի երկրաշարժից հետո այստեղ տեղափոխված մի ընտանիք, որը բնակվում էր Երևանի ծայրամասում գտնվող Թափառաշրջիկների փողոցում: Հինգ հոգինաց այդ ընտանիքը կարողացել էր ձեռք թերել միայն առաջին հարկում գտնվող մի երեկո սենյականոց բնակարան: Նրանց քաղնիքը գտնվում էր դրսում, չունեին լվացարան և ցնցուղ: Իրենց Գյումրիի տան հողում այժմ կառուցվել է նոր շենք, և տեղի իշխանությունները, չնայած նրանց դիմումներին, չեն կամենում նրանց փոխառուցում տալ իրենց հողի դիմաց: Մի խորերով՝ նրանց սեփականությունը հափշտակվել է:

Ճանապարհին մենք տեսանք նորակառույց տներ, որոնք կարող են մրցակցել ԱՄՆ-ում մեկ միլիոն դոլարանոց տների հետ: Այստեղ փասութենք գոյություն չունի միջին խավ, որը ցանկացած ազգի ուժականության հիմքն ու աղյուրն է: Հայաստանում պաշտոնական տվյալներով աղքատ է բնակչության 45 տոկոսը:

Փաստորեն չի գործում ճանապարհային երեխեկության ոչ մի օրենք: Անցորդները չունեն անվտանգության ոչ մի երաշխիք: Ես ան-

ձամբ ականատես եղա մի պատահարի, եթե մեր տարսին կանգնած էր խաչմերուկում և մի աղջիկ փորձեց անցնել մյուս մայթը: Արագ պացող մի մերենա դուրս եկավ նրա դիմաց և չհասցնելով արգելակել՝ հարվածեց աղջկան. աղջիկը կոտրեց ձեռքը: Վարորդը տուժածին իր մերենայով տարավ հիվանդանոց:

Օրենքը առկայության միակ արտահայտությունը, որը կարելի է նկատել, իրենց մերենաների մոտ կանգնածութիկաններն են, որոնք իրենց աղջանշանային դրոշակներով կանգնեցնում են ճանապարհային օրենքը խախտած փարորդներին և տուգանում: Քաղմարիվ հնամաշ տարսիները մեծ արագություններով սլանում են այլ փոխադրամիջոցների մեջտեղով և ձեր հոգին դուրս է գալիս, մինչև տեղ է հասնում:

Փոփոխություններ են նկատվում նաև հեռուստահեռարձակման բնագավառում: Կան 29 հեռուստատեսային ալիքներ, որոնցից 19-ը հեռարձակում են սերական սանձարձակություններ և բռնություններ պարունակող հաղորդումներ: Ամերիկյան CNN հեռուստատեսության հիմքի վրա արտոնագրվել են երկու հեռուստաալիքներ, որոնք ցուցադրում են սույն ծրագիրը: Միայն մեկ հեռուստաալիքը է ցուցադրում դասական երաժշտություն, որով հարուստ է Հայաստանը: Մոտ մեկ տարի առաջ ՀՀ կառավարությունը չեղյալ համարեց հայկական որակյալ անկախ հեռուստատեսություններից մեկի՝Ա1+ ի հեռարձակման իրավունքը և դրա փոխարեն երերի թույլատվություն տվեց «Շարք» հեռուստատեսությանը, որը հեռարձակում է անորակ, անհմաստ հաղորդումներ: Հայաստանի կառավարության այդ գործողությունը խոսրի ազատության սահմանափակում է: Եթե կառավարությունը գնում է ազատ խոսքը, դա բռնապետություն է: Եթե կառավարությունը հանդուրժում է իր երկրի հասարակության մեջ ներմուծված անբարոյականությունը, ապա հենց ինքն էլ վարակված է դրանով:

Մի երեկո հեռուստացույց դիտելիս տեսա, թե ինչպես են հայ ծնողները կառավարությունից խնդրում չփակել իրենց երեխաների դպրոցները, որպեսզի նրանք ստիպված չինեն երկար ճանապարհ անցնել այլ քաղամասում դպրոց գնալու համար: Նրանք չգիտեին սակայն, որ եթե Համաշխարհային Բանկը Հայաստանին փոխս ուրբյուն է տրա-

մաղրոս, նրա հիմնական պահանջներից մեկը դպրոցների քանակի կրծառումը եւ ուսումնական ծրագրի վերանայումն է: Ուսումնական նոր ծրագրերի նպատակն է՝ ամեն ինչ անել, որպեսզի հայ երեխան հայոց դպրոցում հայրենասիրությամբ չդաստիարակվի: Ուսումնական այդ ծրագրով նրանք կդաստիարակվեն որպես աշխարհարարացիներ, որպես աշխարհի երեխաներ: Մուր ուժերի բիրախը հայրենասիրությունն է, քանի որ նրանք գիտեն, որ հայրենասեր ժողովրդին ապականելը դժվար է:

Միաժամանակ Հայաստանի կառավարությունը օտարներին բոյլ է տալիս որդեգրել այն հայ երեխաներին, որոնց ծնողները, չկարողանալով կերակրել նրանց, հանձնել են մանկատներ: Խշխանութունները մատների արանքով են նայում նաև երեխաների անօրինական վաճառքին: Ոչ մի քայլ չի իրականացվում պաշտպանելու այն աղջկեներին, որոնց արտասահմանում (այդ քվում նաև Թուրքիայում) աշխատատեղեր խոստանալով՝ խարում, դարձնում են անառակներ:

Երևանի փողոցներում մենք տեսնում էինք պարապ մարդկանց փոքր խմբեր, իսկ մեծ փողոցներում, ինչպես օրինակ Տիգրան Սեծ և Հանրապետության փողոցներում, հարյուրավոր մարդիկ անգրծ կանգնած սպասում են, թե եր ինչ-որ մեկը նրանց գործ կառաջարկի: Ես նրանցից քաղմից լսեցի, «Մենք ավելի լավ էինք ապրում կրոնությունների ժամանակ» և բուհայսությունը: Դա ազատության օգտին չի խոսում: Որքան էլ որ կառավարության գործունեությունը միտքած չէ տնտեսության զարգացմանը, այսուամենայնիվ բնակչությունը ցանկություն և հնարամությունն է դրսարրությունը գոյությունը պահպանել վարձու աշխատանք հայրայելու միջոցով: Կառավարությունը հարստություն չի ստեղծում, բայց մարդիկ ստեղծում են: Կառավարությունը հայ երիտասարդներին պետք է սովորելու ուղարկի Առողջության համալսարանի Ավստրիական տնտեսության Ֆոն Մայսի դպրոցը (Ալարամա նահանգ): Մինչդեռ կառավարությունը երիտասարդներին ուղարկում է սովորելու Մասաշուստեր նահանգի Բուօքընի Թաֆքս համալսարանի Ֆիլեքչերի դիվանագիտական դպրոցում, որտեղ ազգայինի փոխարքն ներարկվում է մեկաշխարհական (գլոբալիստական) գաղափարներ և կատարվում ուղեղների լվացում: Պետք է ջանքեր ներդրվեն, որպեսզի Երևանի պետական համալսարանի դիվանագիտական բաժնը դառնա միջազգային շափանիշներին բավարարող հաստատություն: Ուսանողներն այստեղ

պետք է ուսումնասիրեն Համաշխարհային դիվանագիտություն՝ ներառնելով նաև հայոց ազգային գաղափարախոսությունը և Գարեգին Նժենի փիլիսոփայությունը: Բացի այդ՝ կառավարության պնդամները պետք է ուսումնասիրեն շոտլանդացի քաղաքական տնտեսագետ և փիլիսոփա Արամ Սմիթին, որի մշակած սկզբունքները Ամերիկայի հիմնադիրները 1776թ. իմք ընդունեցին Ամերիկայի Հանրապետությունը ստեղծելու համար: Հայաստանի քաղաքական կուսակցություններին օգտակար կլինի ուսումնասիրել Արամ Սմիթի «Ազգային հարստություն» գիրը:

Ոմանք երկրի տնտեսությունը բարեկարգելու հեռանկարով գրում-գոչում են Թուրքիայի հետ սահմանը բացելու օգտին: Սակայն նրանց չգիտեն, որ Հայաստանի շուկան կիեղեղվի բուրքական ապրանքներով, որը նշանակում է տնտեսական կախվածություն Թուրքիայից: Ցավալի է, որ շատ հայեր չեն գիտակցում կամ մոռացել են բուրքերի և նրանց դաշնակիցների վարած հակահայկական տասնամյակների քաղաքականությունը, որը շարունակվում է այսօր:

Ես բազմիցս գորել եմ, որ Հայաստանի ապագա տնտեսական կայունացմանն ուղղված ամենակարևոր քայլը, որ պետք է անի կառավարությունը, արտաքին ներդնողներին վաճառկած ոսկու հանքերի են գնումն է: Կառավարությունը պետք է դրանց ներկա սեփականատերերի հետ սկսի ետզնան բանակցություններ, որից հետո ամրող հանածո ոսկին պետք է պահպան նորակառույց պահեստարաններում բանակի հսկողության ներքո: Տնտեսական ճգնաժամի դեպքում հայկական դրամը կպաշտպանվի ոսկու տոկոսների միջոցով:

Ես Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ տեսակցություն ունեի ժամը 3-ին և ստիպված եղա սպասել մելքոնես ժամ, և երբ վերջապես նրա գրասենյակից դրուս եկան երեք կանայք, ինձ ասացին, որ ոյ անը մարդու իրավունքների պաշտպաններ էին: Դա փայլուն օրինակ է այն քանի, որ ՍԱԿ-ի միջոցով Հայաստան են ներքանցում կանանց իրավունքների «պաշտպանության» այնպիսի պահանջներ, ինչպիսիք են վիժելու իրավունքի ձեռքբերմամբ «զնտանիքի պլանավորումը»: Ես հանդիպում ունեցա նաև Ազգային ժողովի գործունյա պատզամավորներից մեկի՝ Զանգեզուրի տարածքից ընտրված պարոն Սերժ Սկլետյանի հետ: Նա հիրավի անկեղծ հայրենասեր էր: Ցավոր սրտի, ՀՀ Ազգային ժողովի 131 պատզամավորների մեծամասնությունը տարված են անձնական

շահերով, որը նրանց խանգարում է քվեարկելու համազգային շահեր հետապնդող օրինագծեր:

Ես նաև ավելի քան մեկ ժամ զրուցեցի Արցախի թեմի առաջնորդ Պարզե սրբազնի հետ, որը այդ ժամանակ Երևանում էր: Նա շատ տպավորիչ անհատականություն էր:

Այստեղ տարածված է այն ասեկոսը, թե իր պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանը հունիսի 17-ին Սոնտե Կառույի կազմուներից մեկում տանու է տվել հսկայական փողեր: Ասում էին թե իրը նրան այդ գումարները ուղարկել է ՀՀ մաքսատան պետ Արմեն Ավետիսյանը, որը վարում է 100 հազար դոլարի արժողության մեջենա:

Հայաստանի կառավարությունը կարծում է, թե միանալով այնպիսի միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են Եվրոպությունը, Եվրոպայի Խորհրդը, Առևտիք Միջազգային Հիմնադրամը և այլն, ձեռք կրերի գործընկերոց կարգավիճակ: Մինչդեռ դրանով վերոհիշյալ կազմակերպությունները իրավունք են ստանում միջամտելու մեր երկրի ներքին գործերին: Նրանք են թելադրում երկրի կառավարման համակարգի սկզբունքները: Հայաստանը տարբեր միջազգային ծրագրերի և քաղաքականությունների համար վերածվել է փորձադաշտի: Սա մի քաղաքական գործելակերպ է, որից շատ պետություններ ուղարկի հրաժարվել են: Հայաստանի այժմյան դեկավարությունը բացարձակապես չի տիրապետում կառավարման համար առաջնային նշանակություն ունեցող այնպիսի մի գործոնի, ինչպիսին պատմական փորձն է:

Գոյուրյուն ունեն ուժեր, որոնք ձգտում են վերացնել Հայաստանը որպես պետություն: Նրանց շոշափուկներն արդեն թափանցել են ազգի մեջ՝ իրենց կաշառակեր դրամաշնորհներով և ազգային նշակույրի այլաւոնմաբ: Հայաստանի արտաքին գերատեսչությունը խաղում է այս ուժերի հաստատած կանոններով՝ միամտորեն կարծելով, թե քաղցր խոսակցությունը է որ մեզ աշխարհը կը նդունի: Իրականությունը ճիշտ հակառակն է. երբ վճռականորեն պաշտպանում են ազգը, հարգանք են ձեռք բերում, անկախ նրանից, թե ինչքան փոքր է ազգը: Երբ համրություն են նրանց ուրերքը, նրանք թեզ արհամարհելուց բացի որևէ ուրիշ զգացմութիւններ կարող արժանացնել:

Արմենապետի 2003թ-ի հոկտեմբերի 23-ի նորություններից մեկում աս-

վում է. «Համաշխարհային բանկի ներկայացուցիչները ժամանել են Հայաստան՝ կառավարության հետ թեմարկելու առաջիկա 4-6 տարում երկրում իրականացվող բարեփոխումների շարունակմանը օժանդակելու համար»: Այնինչ «քարեփոխում» ասելով պիտի հսկանալ նրանց կողմից պարտադրված պայմանները: ՀՀ Աժ նախագահ Վրուր Բաղդասարյանը շեշտեց, որ Հայաստանին օգնելու Համաշխարհային բանկի գործունեությունը հիմնականում ուղղված է լինելու կրորության և առողջապահության ոլորտներին: Ըստ երևույթին նա պետք է իմանա, որ Համաշխարհային բանկը ծրագրավորել է կառավարել, ապա կազմակութել ազգությունները:

Ազգային ինքնակառավարման լավ օրինակ է Բելոռուսը: 1994 թ.նախագահ ընտրված Լուկաշենկոն մոտ 10 տարի հակազդորակիստական պայքարի փայլուն օրինակ է ծառայում: Նա հայտնի է Համաշխարհային բանկի հետ իր կոշտ քաղաքականությամբ (ընդուու մինչև երկրից վտարում): 1995-ին Լուկաշենկոն երկրում սկսեց սեփականաշնորհման գործընթացը, բայց նկատելով, որ սեփականության առյուծի բաժինն ընկնում է լավ կապեր ունեցող օլիգարխներին, անմիջապես դադարեցր ու սեփականաշնորհումը և տնտեսության մեծ մասը դրեց պետության վերահսկողության տակ: Այս քաղաքականության արդյունքը դարձավ համախառն ներքին արտադրանքի նկատելի աճը: Ըստ ՄԱԿ-ի տվյալների, Բելոռուսը նախկին սովետական երկրների շարքում ունի ամենաամուր ազգային տնտեսությունը: Գործազրկությունն այստեղ մոտ 2.5 տոկոս է: Արժույթի Միջազգային Հիմնադրամի վտարումից ի վեր Բելոռուսի համախառն ներքին արտադրանքը հասել է մինչև 6 տոկոս, իսկ տարեկան հաշվով՝ մինչև 4 տոկոս: Արձանագրվել է աշխատավարձերի կայուն աճ, որով և այսպահավորվում է երկրի կենսամակարդակի աճը:

Նկատեք տարբերությունը. Հայաստանի դեկավարությունը, փոխանակ հետևի Բելոռուսի օրինակին, միջազգային դրամաշնորհներին բույլ է տալիս քանդելու Հայաստանը:

Բելոռուսում ընդիմությունը բավական փոքրաքանակ է: Վերջերս հակառավարական ցույցից առաջ ընդիմության դեկավարները կանխագուշում էին մոտ 20000 ցուցարարների առկայություն, այնինչ ցույցին մասնակցեց անզիալեզու հակառավարական պատուաներ պարզած

ընդամենը 1000 մարդ: Ինչպես Սորրոսի հիմնադրամը, այնպես էլ ԱՄԿ-ի Նեմոլորատիայի Աջակցման ծրագիրը, համարյա հաջողեցին որոշակի ընդդիմադիր խավ կազմակորել Լուկաշենկոյի դեմ: Այնինչ 2001թ. սեպտեմբերի 9-ի նախազահական ընտրությունների մասնակի 75 տոկոսը իր վստահության բվեռվ հաստատեց նախազահ Լուկաշենկոյի կառավարման նոր ժամկետը: (*The American Free Press, October 13, 2003*)

«Հայոց Աշխարհ» օրաթերթի 2003թ. հոկտեմբերի 14-ի համարում լույս տեսած հոդվածում գրված է. «Ռուսաստանը և ԱՄՆ-ը Հայաստանում և Աղրեջանում շեն ուզում ուժեղ դեկավարներ»: Պատճառը մեկն է. քոյլ առաջնորդներին շատ ավելի հեշտ է կառավարել: Երբ զա Արցախյան հակամարտության կարգավորման ժամանակը, նախազահ Քոչարյանը կասի. «Ես ոչինչ չեմ կարող անել. հզորները ստիպեցին մեզ»: Հայաստանի կառավարությունը երկիրը դեկավարում է ոչ թե ապագայի, այլ ներկայի համար: Հայաստանն այսօր ունի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական քշնամիներ: Բայց բարեբախտաբար գոյություն ունեն հայրենասիրական շարժումներ, որոնք շատ զգոն են վերիշշալ բոլոր վտանգների հանդեմ: Դրանք մարդիկ են, որոնք մարտնչել են Արցախում՝ իրենց կյանքի գնով պաշտպանելով հայրենիքը: Նրանք միանգամայն տեղյակ են Հայաստանի դարավոր քշնամի մութ ուժերի գոյության մասին: Յավոր սրտի որամի սղության պատճառով նրանց հնարավորությունները սահմանափակ են: Այսուամենայնիվ նրանք ձգտում են իրենց զաղափարները հասցնել բնակչությանը: Համահայկան նյութական հնարավորությունները պետք է ուղղվեն նաև հովանավորելու այս ճշմարիտ հայրենասերների գործունությունը:

Սփյուռքը պետք է գիտակցի, որ եթե Հայաստանում վերանան ազգային կառույցները, մեր պատմական հայրենիքում այլև թիշ բան արժեք կունենա:

Տեր Աստված, մեր դեկավարներին հայրենասիրություն և իմաստություն տուր, որպեսզի նրանք մեր ազգին աշխարհի ուրիշ ազգությունների շարրում արժանապատիվ և հարգալից տեղ ապահովեն:

Հոկտեմբեր 27, 2003 թ., Լիվոնիա, Միասուրի, Ա.Ա.Ն.

Armenian Reporter, 2003, 8 November

Hairenik Weekly, 2004, 7 February  
ՄԱՍՈՆԱԿԱՍՈՒԹՅԱՆ (ՌՐՍԱԿԴԻՐՆԵՐԻ) ԱԼՐԱՅ  
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մասոնական կազմակերպություններին հարող մարդկանց մեծամասնությունը տեղյակ չէ, թե իրականում ինչ է ուսուցանում մատոնականությունը: Նմանատիպ կազմակերպություններին անդամագրվելով հաճախ կատարվում է հասարակական նպատակներով, որոշ դեպքերում էլ անդամագրվում են անձնական շահերից ենելով: Թափանցելով մատոնական օրյակ, մարդիկ հանդիպում են բազմարիվ նշանների, որոնք ունեն տարատեսակ գաղտնի նշանակություններ: Նոյնիսկ մատոնական առաջնորդները շատ լավ գիտակցում են, որ իրենց կազմակերպություններին անդամագրվող մարդկանց մեծամասնությունը իրականում չի գիտակցում մատոնականության ուսմոնքի բուն էությունը:

Փաստորեն մատոնականությունը գիտակցարար մոլորության մեջ է զցում մատոնական օրյակներ նոր անդամագրված անձանց՝ նրանցից բարցնելով մատոնականության իրական ուսմոնքը:

Մատոնական օրյակ ընդունված բոլոր նորեկները ծնկի իջած հավատարմության երդում են տալիս որևէ սուրբ գրքի վրա, անկախ նրանից դա Ավետարան է, Դուռա՞ն, թե Վերա: Ակսնակ-աշակերտների համար ամերիկյան մատոնական օրյակներում որպես դասագիրք առաջարկվում է Ավետարանը: Այլ բառերով ասած՝ նոյնիսկ Ավետարանը մատոնական ուսմոնքի մեջ իրենից որոշակի գաղտնի խորիդանիշ է ներկայացնում:

Գոյություն ունի՝ արդյուր որոշակի բախում քրիստոնեության և մատոնական զաղափարախոսությունների միջև: Ուսումնասիրելով մատոնական գրականությունը, միանգամայն ակնհայտ է դառնում քրիստոնեության և հատկապես ֆրանկոմատոնականության միջև խոր հակասությունը:

Մատոնականություն ընդունած անձը ի սկզբանե միանում է «կապույտ օրյակին», որը սկսնակների հավաքատեղի է: «Կապույտ օրյակի» ներկայացուցիչները կարող են ծեռք բերել առաջին մատոնական աստիճանակարգերը. 1. Ակսնակ-աշակերտ. 2. Վարպետ –խորիդի անդամ. 3. Վարպետ մատոն: Ի դեպ այս երեք աստիճանները ենթականերին տրվում են որպես պարզեց: Այս սկզբնական աստիճաններով պարզեատրվելոց հետո կարելի է հասնել մյուս աստիճաններին՝ Ցորք Ռայքում կամ Արքի Ռայքում: Ցորք Ռայքում մատոնը պարզեատրվում է ևս 10 աստիճաններով: Արքի Ռայքում պարզեատրվեան աստիճանավորությը

հասնում է մինչև 33-րդ աստիճանը:

#### Ո՞վ է մատնականության աստվածը:

Մատնական արարողություններին և միջոցառումներին մասնակցելու համար պետք է հավատալ և երկրպագել «Քարձրյալին». արդյո՞ք այդ քարձրյալը այն է, որին երկրպագում ենք մենք՝ քրիստոնյաներ, թե՞ մատնները երկրպագում են մենք այլ ուժի:

Պարզվում է այդ ուժը միակը չէ, որին երկրպագում են մատնները, գոյուրյուն ունեն բազմաթիվ աստվածություններ, որոնց մատնները երկրպագում են: Դրանցից են՝ Օսիրիսը, Բաքոսը, Դիոնիսոսը, Ադրենը և այլն:

Օսիրիսը հին Եգիպտոսում մեռյանների աստվածն էր, որը նաև հանդիսանում էր արևի աստվածը, ինչպես նաև հայտնի էր շատ այլ անուններով: Դիոնիսոսը հին Հունաստանում հաճույքների, զինու և զինարդունների աստվածն էր: Այն Հոռոմում անվանվում էր նաև Քարոս, ին Պարսկաստանում՝ Միտրա, Ասորիրում՝ Ադրենի: Այսպիսով՝ տարբեր աստվածներով և խորհրդանշներով դիմակավորված արև աստծու երկրպագությունը մեծ տեղ և դեր ունի մատնականության հավատամբ մեջ:

Մատնականության և Ավետարանի միջև առկա հաջորդ բախումը աստղագիտությունն է. մատնական օրյակները կազմված են ըստ կենդանակերպի 12 նշանների, այնինչ ավետարանը չի ընդունում զոդիակի վերոհիշյալ նշանները: Մատնականության հակասական խորհրդանշներից է օճը, որին երկրպագում են, որպես փրկության խորհրդանշ: այնինչ Ավետարանի մեջ օճը համարվում է ների խորհրդանշիշը:

Մատնականության մեջ հիմնաքարային նշանակություն ունի «Առավոտյան վառ լույս» արտահայտությունը: Նոր կտակարանի մեջ ասվում է (22:16) «Ես Հիսուս եմ՝ Դավիթի սերմոնից և Առավոտյան Վառ Աստղը»: Արդյո՞ք մատնականության պաշտամունքի առական՝ «Առավոտյան վառ լույսը» նույն քրիստոն է: Գոյուրյուն ունեն մի քանի փաստարկներ, որոնք հերքում են այս միտը: Սակայն գլխավոր փաստարկը հետևյալն է:

Իր գրքերից մեկում տպված պատկերը բացատրելիս, հայտնի մատնական Արքուր Էդուարդ Ռայքը մականավորապես ասում է. «Հանձարեղ ոզու աջ ձեռքում երկրպագունդն է: Այն հավասարակշռված է ձախ ձեռքում բռնած ջահու, որը խորհրդանշում է Առավոտյան Աստղը կամ Լուցիֆերին»: Մատնական տեսանկյունից այս խորհրդանշիշի ամբողջա-

կան իմաստը հաղբանակող լույսի գալուստն է: Խսկ երք ասվում է մատնականության լոյսի մասին, նրանք ի նկատի ունեն Լուցիֆերին, խսկ Լուցիֆեր ինքնին նշանակում է «Լույս բերող»: Նույն Ավետարանում նախազգուշացվում է Զարի գալուստը լոյսի, հրեշտակի տեսրով:

Մեկ այլ մասոն գործ՝ Ֆուրեր Բեիլին ասում է. «Փուլ առ փուլ նրանք՝ Իմաստության Տիրակալները աջակցելու են հարմար թեկնածուի մասին զիտակցության ձևավորմանը, մինչև կզա ժամանակը, երբ նա կմտնի լոյսի մեջ և կզա որպես լուսակիր, որը, որպես լուսարիչ, կաջակցի լուսավորել մարդկությանը»: Իմաստության Տիրակալները (իրականում նեղերը) հոգևոր առաջնորդներ են, որոնք են բարդարար առաջնորդում են մարդկությանը Սիասնական Աշխարհակարգը, իսկ Լուսավորիչների կազմակերպությունը հիմնադրվել է 1776թ. մայիսի 1-ին, ճիզվիտ քահանա Ադամ Ուեիշապտի կողմից: Լուսավորիչ բառը ծագել է Լուցիֆերի անվանումից: Լուսավորչություն շարժումը կոչված է հաստատելու «Համաշխարհային նոր Կարգը» կամ «Սեկ Համաշխարհային կառավարություն»: Լուսավորչության ծննդյան օրը՝ 1776թ. մայիսի 1-ը նշված է ցանկացած ամերիկյան ռոլլարի վրա: Դոլլարի բորադրամի հետևի ձախ մասում նկարված է բուրգ, որի վրա աչք է, որը փոխարինել է բուրգի գագարնային քարին: Նշված է նաև հետևյալ տառախումբը՝ «MDCCCLXXVI», որ նշանակում է 1776 և ներքեւի ժապավենի վրա գրված է հետևյալ նախադասությունը՝ «NOVUS ORDO SECLORUM», որի անգլերեն բարգմանությունն է՝ «New World Order», իսկ հայերենը՝ «Նոր Աշխարհակարգ»: Վերոհիշյալ բուրգի վրայի Կանխատեսության աչքը կամ ամենատես աչքը մատնականության ամենակարևոր նշաններից է: Այս խորհրդանշում է մատնականության գլխավոր աստվածությունը՝ «Տիեզերքի մեծ ճարտարապետին»: Ըստ Ավետարանի, Քրիստոսը համարվում է որպես գլխավոր անկյունաքար՝ «գլուխ անկյան» (ըստ Մարքոսի 21:42; Պետրոս 2:6-7, Սարկոսի 12:10; Ղուկասի 20:17 և այլն): Այնինչ դիտելով Բուրգը, միանգամայն ակնիայու դառնում, որ գլխավոր անկյունաքարը հեռացված է և նրա փոխարեն տեղադրված է Կանխատեսության աչքը՝ Սատանայի խորհրդանշիցը, որը փոխարինված է բուրգի գլխավոր անկյունաքարով: Ավետարանը սույն երևույթի մասին նախազգուշացնում է՝ ասելով. «Աէրը դեպի դրամը ամենայն չարեաց աղքաղը է»:

Անզիհացի մի քահանա՝ Վինդերս գրական մականունով, գրում է. «Որպես մատններ, մենք հավատում ենք խորհրդանշական երրորդու-

բյան գոյությանը և որ Հիսուս Քրիստոսը Նրա որդին է և մեր տերը»: Այս արտահայտությունը շատ լավ է հնչում և շատ մարդկանց կարող է հավատացնել, որ մատնականությունն ու քրիստոնեությունը նույնական են: Այնուամենայնիվ, մի փոքր խորությամբ դիտարկելով այս արտահայտությունը, պարզ է դառնում, որ սա զուտ խորիրդանշային երրորդության պաշտամունք է: Դա հավատը չէ, առ մեր Տեր Աստված: Այնինչ Վիճույթ շարունակում է. «Որպես մուսուլման մատններ, մենք հավասարապես հավատում ենք, որ Մոհամեդը Նրա մարգարեն է»: Ապա նա ավելացնում է մի շատ պարզաբանիչ արտահայտություն. «Այս լրացուցիչ և երկրորդական հավատքների հետ մատնականությունը ոչինչ չունի անելու և իր անդամներին տալիս է կատարյալ ազատություն՝ մեկնարանելու Աստծո եւրյունն այնպես, ինչպես իրենց հարմար է»:

Ուշադրություն դարձրեք, որ նա քրիստոնեությունը համարում է «լրացուցիչ և երկրորդական» հավատը և այնուհետև պարզորոշ հայտնում է մեզ, որ «Մատնականությունը ոչինչ չունի անելու այս ստորադաս ուսմունքի հետ»: Այսպիսով մատննը, զիտակցարար թե անգիտակցարար, երկրորդական դեր է մղում իր քրիստոնեական հավատամքը և նրա փոխարեն առաջնային տեղ է հատկացնում մատնականությանը: Մատքեսը 6:24 հիշեցնում է մեզ. «Ոչ մի մարդ չի կարող ծառայել երկու տիրոջ, քանզի նա կատի մեկին և կսիրի մյուսին կամ կիպատակվի մեկին և կարհամարիի մյուսին: Դու չես կարող միաժամանակ ծառայել և Աստծուն, և մամոնային»:

Մատնները իրենց անդամներին չեն հիշեցնում Հիսուսի անունը (որպեսզի շվիրավորեն իրեաներին, մուսուլմաններին և այլ կրոնների ներկայացուցիչներին): Այլերը Մաքեյի հրատարակած գիրքը՝ «Ազատմատնականության հանրագիտարանը», քաղկացած է մոտ 1000 էջից: Այս հանրագիտարանը պարունակում է տեղեկություն աշխարհի երեսին գոյություն ունեցած բոլոր աստվածությունների վերաբերյալ, քայլ այստեղ մեկ քառ անգամ շկա Հիսուս Քրիստոսի մասին: Սա շատ հական և միևնույն ժամանակ շարագրական քացրողություն է:

Ծըներների (կազմակերպություն, որը քաց է միայն այն մատնների համար, որոնք ստացել են իրենց 32-րդ աստիճանը) ծեսերին մասնակցելու համար տրվող երդման տեքստը հետևյալն է. «Թող Ալլահը, արաբների, մուսուլմանների և մահմեդականների աստվածը, մեր հայրերի աստվածը, պաշտպանի ինձ»: Այստեղ ոչ միայն նշվում է Ալլահի անունը, այլև նրան համարում են «մեր հայրերի աստված»: Այս երդումը կատարվում է Պուրանի վրա: Նոր կտակարանում ասվում է. «մի

երդվիր ոչ երկնքի, ոչ երկիր, ոչ այլ ուրիշ բանի վրա: Ավետարանը նաև զգուշացնում է. «Սի հիշատակիր օտար աստվածների անունը»:

Հեղինակը՝ Դոկտ. Ջերմանը ունի Ավետարանական փիլիսոփայի աստիճան, վերջին 19 տարվա ընթացքում գրադիվել է մեր դարաշրջանի շարժումներին վերաբերող նյութերի ուսումնասիրմանը:

2003թ. դեկտեմբեր

## ՂԱՅԱՍՏԱՆ, ՂԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՅՈԳԵՎՈՐԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց եկեղեցին, որ հիմնադրվել է մ.թ. 301թ., հավատարիմ է եղել Աստծո ուսմունքին և նրա որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Դարեր ի վեր քրիստոնեությունը եղել է ազգի ոգեշնչման հիմնական աղբյուրը: Հայ ժողովուրդը իր եկեղեցու գրկում գոյատևել և վերապրել է բազմաթիվ փորձություններ, ականատես եղել թշնամի ժողովուրդների ասպատակություններին:

Մարդիկ այստեղ ըմբռնել են կյանքի իրական ճշմարտությունը երկրի վրա և երկնային կյանքի հավիտենականությունը՝ համաձայն Քրիստոսի ուսմունքի: Քրիստոնյա աստվածաբանները քարձու են զնահատել Աստվածաշնչի հայերեն բարգմանությունները՝ բնագրին հոգեհարազատ մնալու համար: Նախրան մեր եկեղեցու և նրա հոգևորականության վերաբերյալ դատողություններ կատարելը՝ անհրաժեշտ է անդրադառնալ մի շարք պատմական իրադարձությունների, որոնք առնչվում են այսօրվա «Նոր քրիստոնեություն» հասկացության ձևավորմանը:

Սատծ ճշմարիտ համակարգի դեմ ամենայն հետևողականությամբ համեստ է եկել 1748թ. փետրվարի 6-ին Բավարիայի Խնդուշտադու քաղաքում ծնված Ալմամ Վեյսհաուպտը: «Կերպինս համոզված էր, որ մարդկային հասարակությունն անդառնախորեն կորսայան է զնում, և միակ փրկությունն արմատական վերակառուցումն է: Նա այն առաջին ուսուվաստներից էր, ովքեր ունեին աշխարհի ըմբռնման ընդուրկում մտածողություն, և անհամբերությամբ սպասում էր այն օրվան, երբ իր խոմքը կյանքի կոչեր «Համաշխարհային նոր համակարգ» («Novus Ordo Seclorum»): Նրա կազմակերպությունը, որը կոչվում էր «Ֆլյումինարի» («Illuminati»), վեց հիմնական նպատակ ուներ՝

1. միապետության և օրինական վարչակարգերի վերացում,
2. մասնավոր սեփականության և ժառանգության իրավունքի վերացում,
3. հայրենասիրության և ազգայնականության վերացում,
4. ընտանիքի և ամուսնության վերացում,
5. հանրակրթական համակարգի կազմակերպում,
6. բոլոր կրոնների վերացում:

Մինչև 1750թ. Ոռշչիղների քանկային հաստատությունը, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ այլ քանկային կարտելներ, սկսել էին աշխարհի համալսարաններում ֆինանսավորել շաստվածության մտածողություն՝ այն

հակադրելով իսկական քրիստոնեական մտքի անաղարտությանը: Խոշոր գոմարներ էին օգտագործվում՝ աշխարհով մեկ ստեղծելու մեմարաններ (սեմինարիաններ)՝ երիտասարդ սաներին ներարկելու սոցիալախուսություն, որը հետագայում անվանվեց «Սոցիալական ավետարան»:

### Սքոֆիլիդ «Աստվածաշունչը»:

Սայնև Սքոֆիլը ծնվել էր 1843թ. Ամերիկայում, մահացել է 1921թ.: Նա վերլուծել է Զեյմս թագավորի Աստվածաշնչի բնօրինակը: Նրա ջանքերը նպատակատիղված էին պարտավորություններից ազատվելու զաղափարների տարածմանը: Սքոֆիլիդ Աստվածաշնչի (ինչպես այն անվանվեց հետազոյում) համար ֆինանսական օժանդակություն է հատկացրել վեց մտավորականներից բաղկացած զաղոնի խումբը՝ Բուտոնից (Մասաչուսեթս): Սքոֆիլիդ Աստվածաշունչը տպագրել է Լոնդոնի Օրոֆորի համալսարանի հրատարակչությունը 1909 թ.: Աստվածաշունչը խեղարյուրելու նրա ջանքերը հիմք հանդիսացան «հրեա-քրիստոնեություն» արտահայտության հիմնավորման և տարածման համար, թեև որուն Աստվածաշնչում «հրեա-քրիստոնեությունը» ոչ մի տեղ չի հիշատակվում: Աստվածաշունչը վերափոխելու Սքոֆիլիդ փորձերը, հետագա փոփոխությունների և շեղումների նպատակով, նրա մահից հետո բացահայտել են Քրիստոսին շահագատացող անձինք:

Ավետարանը քննարկման առարկա էր դարձել նաև սոցիալամենտ հոգևորականության շրջանակներում:

Նրա առավել հանրահայտ երկայացուցիչներից մեկը՝ Վաշինգտոն Գլադիենը (1836-1918), 36 տարի Կոլումբիայի (Օհայո) միարանության հոգևոր հովիվն էր, «կիրառական քրիստոնեության» առաջնորդներից:

«Սոցիալական Ավետարանի» ճանաչված այլ «մարգարեններից» էր «Ուշեսքը» համալսարանի և «Ուշեսքը աստվածաբանական սեմինարիայի» (երկուսն էլ բացւիստական ինստիտուտներ էին) շրջանավարտ Վոլեր Ռատչենբուշը: «Քրիստոնեություն և սոցիալական ճգնաժամ» աշխատությունը, որը տպագրվել էր 1907 թ., նրան համաժողովրդական ճանաչում բերեց:

1908 թ. դեկտեմբերի 2-ին նա և դոկտոր Հարրի Վորոյ հիմնադրեցին «Քրիստոսի եկեղեցիների դաշնային խորհուրդը»: Նրանք եկեղեցական սոցիալական շարժման առաջնորդներ էին, շարժում, որը որոշեց հեռանալ քրիստոնեական անհատականացումից (ինդիվիդուալիզմ) դեպի բացա-

հայու կոլեկտիվիզմ՝ իրենց համար գործիք դարձնելով եկեղեցին: Սոցիալիզմը նրանց առաջին և միակ մտահղոքությունն էր:

Քորոր կեղծ մարգարեների նման, ովքեր դարեր շարունակ ներքափանցել էին քրիստոնեության մեջ, նրանք բոլարկվել էին խարերայության դիմակներով և երկրի վրա միավորվել «Երկնքի արքայություն» որ դիմուր անվանմամբ: Նրանց «արքայությունը» ներկայանում էր ոչ իրքի հոգենոր հասարակություն, որտեղ տղամարդիկ և կանայք ձևավորվում էին իրքի անհատներ՝ Հիսուս Քրիստոսի՝ Փրկչի հետ հաղորդակցության միջոցով, այլ որպես կոլեկտիվ, սոցիալիստական հասարակություն:

1950-ական թվականների վերջերին, Մեծի Տանն Կիլիկիո արորի երիտասարդ միարան Գարեգին վրդ Սարգսյանը, ենթադրյալ լավորակ քարձագոյն աստվածաբանական կրթություն ստանալու նպատակով, ուղարկվեց Լոնդոն՝ Օքսֆորդի Աստվածաբանական դպրոցում սովորելու՝ թեև այդ գիտելիքները նրան կարող էր տալ քազմադարյան Հայ եկեղեցին: Օքսֆորդում գիտական աստիճան ստանալուց հետո Ժամանակի ընթացքում նա դարձավ Մեծի Տանն Կիլիկիո կարողիկոս, այնուհետև՝ Ամենայն Հայոց կարողիկոս: Նա դարձավ «Եկեղեցների համաշխարհային խորհրդի» (ԵՀԽ) մեծամուս ղեմքերից, որը քրիստոնեության մեջ քափանցած մյուս կեղծ մարգարեների նման հորինեց Միասնական համաշխարհային եկեղեցին, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ կեղծ աստվածների դիմակ, որը քրիստոնեությունն ատողներն օգտագործում են դարեր շարունակ:

«Նոր դարաշրջանի» մեր լուսավորյալ հոգենոր գործիչները մոռացել են իրական Աստծո արքայության մասին, որովհետև «աստվածային» գիտելիքները ձեռք են բերել աշխարհի վաշխառուներից հոգանավորվող և նրանց ազդեցության տակ գտնվող հաստատություններում: Այդ քունավորված հաստատությունների պատերի ներսում նրանց դասավանդել է աշխարհիկ կարգի մարդասիրություն և (սոցիալիստական) ազատական աստվածաբանություն: Աշխարհիկ մարդասիրությունը հակասում է Աստծո խորհրդին: Հիսուսի խոսքում շեն հիշատակվում մեր աշխարհի փոխհարաբերությունները: Հիսուսը խոսում է Աստծո հետ հոգենոր հաղորդակցման մասին: Քրիստոսը համաշխարհային Մարքս չեր, այլ մարդկության լուսատու:

Եկեղեցների համաշխարհային խորհրդի որդեգրած ուղին, դեպի Համաշխարհային կառավարություն, հայ ժողովրդի համար աղետալի է դարձել և տնտեսական, և մշակութային, և կրոնական առումներով: Այսօր Ա. Էջմիածնին սատարում է ՀՀ կառավարությանը՝ սոցիալական ապահովության կողի ներդրման և անհատական քարտերի համակարգ մտցնելու

նպատակով: Դա ողջ ազգաբնակչության վրա վերահսկողություն հաստատելու նպատակով նույնականացման (իդենտիֆիկացիա) համակարգի ձևավորման սկզբան է: Դա հոդ է նախապատրաստում աստիճանաբար (համաշխարհային - խմբ.) բռնակալ պետությանը հարկեր վճարելու համար: Աստիճանակարգված հարկեր առաջադրել է նաև Կարլ Մարքսը իր «Կոմունիստական մանիֆեստում»: Սա հրաշալի օրինակ է, որը ցոյց է տալիս, թե ինչպես է Հայ առաքելական եկեղեցու քարձարագույն նվիրապետությունը կիրառում տղիալական ազատականության աստվածաբանական գաղափարը՝ ներգրավելով այդ կառավարության մեջ: Հայ ազգային և Հայ բողոքական (Հայ Առաքելական և Հայ Ավետարանական – խմբ.) եկեղեցների դեկապարները նույնպես քոյլատրում են զայտնի կազմակերպություններին (օրինակ՝ մատոնություն – խմբ.) սողոսկել Հայ եկեղեցու մեջ:

2003թ. օգոստոսի 11-ին ԵՀԽ գլխավոր քարտուղար, ուկիցինիստ, դրկուոր Քոնրադ Ռայցերը հրավիրեց մասնակցելու «Եկումենիկ շարժման բարեկիցումները» («Reconfiguring the Ecumenical Movement») թեմայով համաժողովին, որը տեղի ունեցավ Անդրիխատում (Լիքանան) նոյեմբերի 17-20-ը: Այն քարում էր Մեծի Տանն Կիլիկիո կարողիկոս Արամ Ա-ը՝ դառնալով ԵՀԽ ջատագովներից: Քննարկման ժամանակ հաճախ էր օգտագործվում «հաղորահարվող ինստիտուցիոնալիզմ» արտահայտությունը: Այն նշանակում է Հայ եկեղեցու «հնատ» հաստատությունների վերացում, իսկ շարժման էկումենիկ (ecumenical) անվանումը՝ համաշխարհային:

Արդյո՞ք մենք՝ հայերս, ցանկանում ենք, որ Հայ եկեղեցին դառնա համաշխարհային եկեղեցու մի մասնիկը: Եթե այս, ինչո՞ւ այդ դեպքում նշեցինք հայոց իննակուրց անկախ եկեղեցու 1700-ամյակը:

Պետք է վերջապես ընդունել, որ ԵՀԽ -ն իմնադրել են հզորազոր (անհավատ) վաշխառուները՝ ժամանակի ֆինանսական մագնատները: Արամ Ա կարողիկոսին պետք է հայտնի լիներ, որ Քրիստոսը չեր ընդունում այլ Աստծո, քացի իսկական Աստծու: Անհնար է, որ քրիստոնյան միանգամից ծառայի երկու կամ երեք աստվածների (տերերի): Այսօր մենք տեսնում ենք վերջին իհուն տարիների մեր եկեղեցու դեկապարների հետ ունեցած փոխհարաբերությունների արդյունքը:

Անհրաժեշտ է հիշել, որ արքեպիսկոպոս Տիրան Ներսոյանը, երբ քնակվում էր Լոնդոնում, 1942թ. գրել է «Քրիստոնեական մոտեցում կոմոնիգման» աշխատությունը:

Պետքու առաջալի երեք չի հաճախել թեմական դպրոցներ, երբեք աստվածաբան չի եղել, այլ հասարակ ձկնորս, քայլ ականջալոր էր Աստ-

ծուն և ս. Հոգուն: Բայց ո՞վ կիամարձակվի կասկածի տակ առնել նրա քարոզը: Ս. Պետրոսը և մյուս աշակերտները, ովքեր երեք տարի աշակերտել են Քրիստոսի՝ Ուսուցչին, արհեստավորներ էին: Եթե մեր հայ աստվածաբանները փորձեն աշխատել ԵՀԽ -ի դեկապարների նման մարդկանց հետ՝ ձգտելով փոխել նրանց կամ փորձել նրանց հետ ընդհանուր լեզու գոյնել, հավատացած եղեք, նրանց գործելակերպը կմանվի այն քանին, որ առողջ խնձորը նետես նեխած խնձորներով լի տակադի մեջ և հուսաս, որ երբեւ այդ նեխած խնձորները, առողջի ազդեցությամբ, կապարհնվեն: Հնարավոր չեղածի կմքել չարիքի հետ. դրա հետևանքով շատ մեծ քան են կորցնում:

Վանեցիների ժառանգորդ Ռուսաս Զ. Ռշտումին, որի Ամերիկայում մեծապես հարգված քրիստոնյա առաջնորդներից է, այս խնդիրը բնորոշել է այսպես. «Քրիստոնեության քշնամիների նպատակը համաշխարհային նոր համակարգի ստեղծումն է՝ առանց Հիսոս Քրիստոսի: Մարդը համոզված է, որ իր ծրագրավորման և վերահսկողության շնորհիվ կարող է ստեղծել լավ աշխարհակարգ, ավելին, քան արարել է Աստվածային երրորդությունը: Իհարկե, այն, ինչ մարդն է ստեղծում, տիեզերք չէ, այլ չարին ծառայող մի հզոր և դաժան համակարգ»:

Եկեղեցների համընդհանրացման (գլոբալացման) գաղափարի ընդունմամբ ուկիոնիզմն ապագայնացնում է միայն Հայ Եկեղեցին: Այն արագացնում է պատճականորեն ամենազատ, յորորինակ և իինավոր քրիստոնեական Եկեղեցու խարխլումն ու ոչնչացումը:

Հայ ժողովուրդը իր Եկեղեցուց պես է պահանջի վերադառնալ իր պատճական, ազատ և անկախ կարգավիճակին: Հայ Եկեղեցին քրիստոնեության քշնամիներին սատարելու փոխարեն իր ջանքերը պարտավոր է նպատակաուրիշել մեր ժողովրդի կրոնական և հոգևոր արժեքների գարգամանը: Այդ նպատակին հասնելու դեպքում միայն աշխարիք կճանաչի Հայ Եկեղեցու և հայ ժողովուրդի մեծությունը:

Թոյլ տվեր՝ Հայ Եկեղեցին վերադառնա իր վաղ քրիստոնեության ակունքներին, որը հնարավորություն կտա նրան ստանալ Աստծո օրինությունը և դրանով իսկ կրկին դառնալու ճշմարիտ քրիստոնյաներ և ջահակիք՝ աշխարին համակած քառսի մեջ:

Բոքա Ռեյրոն, Ֆլորիդա  
2004թ. փետրվար

«Ծրադարձ», Երևան, 2004 թ. մայիս, թիվ 2

## ԴԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՏԵՍԱՆԵԼԻ ճԳՆԱԺԱՄԸԸ

Վերջերս հայկական Եկեղեցական մամուլում հայտնվեց հայտարարություն այն մասին, թե հայկական Եկեղեցուն անդամագրվելու համար հայկական ծագում ունենալը պարտադիր չէ: Արանով հայկական միատարր Եկեղեցին հրավիրում է իր հոտում անդամագրվելու բոլոր ազգություններին ու ռասաներին պատկանող անձանց:

Արանով պարզ է դառնում Եկեղեցիների համաշխարհային խորիրի հետ հայկական Եկեղեցու 50-ամյա հարթերության տված արդյունքը: Հայկական հոգևորականությունը, որը հայտնի էր իր հզոր հոետորական աստվածատուր վարպետությամբ, ազդվում է սուտ-քրիստոնեական աստվածաբանական ինստիտուտներից, որոնց ճնշումների արդյունքներն են Եկեղեցիներում սկսված սոցիալական վերափոխումների երևույթները: Այդ հաստատությունների նպատակն է Եկեղեցիները դարձնել գործիք՝ քրիստոնեական անհատականությունը սոցիալական համայնականությամբ փոխարինելու համար:

## ԴԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ճԳՆԱԺԱՄԸ

Վերջերս հայկական եկեղեցական մամուլում հայտնվեց հայտարարություն այն մասին, թե հայկական եկեղեցուն անդամագրվելու համար հայկական ծագում ունենալը պարտադիր չէ: Սրանով հայկական միաստարք եկեղեցին հրավիրում է իր հոտում անդամագրվելու բոլոր ազգություններին ու ռասաներին պատկանող անձանց:

Սրանով պարզ է դառնում եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ հայկական եկեղեցու 50-ամյա հարթերության տված արդյունքը: Հայկական եղանականությունը, որը հայտնի էր իր հզոր հոնորական աստվածատուր վարպետությամբ, ազդվում է սուտ-քրիստոնեական աստվածաբանական իմաստուտներից, որոնց ճնշումների հետու համար աստեղություն է առանց Հիսուս Քրիստոսի: Մարդու համոգած է, որ իր ծրագրավորման և վերահսկողության շնորհիվ կարող է ստեղծել լավ աշխարհակարգ, ավելին, քան արարել է Աստվածային երրորդությունը: Իհարկե, այն, ինչ մարդն է ստեղծում, տիեզերք չէ, այլ չարին ծառայող մի հզոր և դաժան համակարգ»:

Եկեղեցիների ժառանգորդ Ռուսաս Զ. Ռշտունին, որն Ամերիկայում մեծապես հարգված քրիստոնյա առաջնորդներից է, այս խնդիրը բնորոշել է այսպես. «Քրիստոնեության քշնամիների նպատակը համաշխարհային նոր համակարգի ստեղծումն է՝ առանց Հիսուս Քրիստոսի: Մարդու համոգած է, որ իր ծրագրավորման և վերահսկողության շնորհիվ կարող է ստեղծել լավ աշխարհակարգ, ավելին, քան արարել է Աստվածային երրորդությունը: Իհարկե, այն, ինչ մարդն է ստեղծում, տիեզերք չէ, այլ չարին ծառայող մի հզոր և դաժան համակարգ»:

Եկեղեցիների համընդհանրացման (գլոբալացման) գաղափարի ընդունմամբ ունիզիոնիզմն ապազգայնացմում է միայն Հայ եկեղեցին: Այն արագացնում է պատմականորեն ամենաազատ, յորորինակ և իինավորց քրիստոնեական եկեղեցու խարխլումն ու ոչնչացումը:

Հայ ժողովուրդը իր Եկեղեցուց պետք է պահանջի վերադառնալ իր պատմական, ազատ և անկախ կարգավիճակին: Հայ եկեղեցին քրիստոնեության քշնամիներին սատարելու փոխարեն իր ջանքերը պարտավոր է նպատակառութել մեր ժողովրդի կրօնական և հոգևոր արժեքների զարգացմանը: Այդ նպատակին հասնելու դեպքում միայն աշխարհը կճանաչի Հայ եկեղեցու և հայ ժողովրդի մեծությունը:

Թույլ տվեք՝ Հայ եկեղեցին վերադառնա իր վաղ քրիստոնեության ակունքներին, որը հնարավորություն կտա նրան ստանալ Աստծո օրինությունը և դրանով իսկ կրկին դառնալու ճշնարիտ քրիստոնյաներ և ջահակիր՝ աշխարհին համակած քառսի մեջ:

Բորա Ռեյրոն, Ֆլորիդա  
2004թ. փետրվար

«Ծրադարձ», Երևան, 2004 թ. մայիս, թիվ 2

«Օրենքի» մասնագետները քատ ֆրանսիացի պետական գործիչ՝  
տնտեսագետ Ֆրեդերիկ Բաստիեի (1850թ.)

Կազմեց Արտավագդ Ավագյանը,  
30 ապրիլի 2002թ.:

### Կյանքը Աստծու պարզեն է:

Մենք Աստծու ստացել ենք պարզեն, որն իր մեջ պարունակում է մասած ամեն ինչ: Այդ պարզելով կյանքն է՝ ֆիզիկական, գիտակցական և բարոյական կյանքը: Սակայն կյանքը չի կարող շարունակվել միայն ինքն իրենով: Այդ պատճառով արարիշը մեզ է վստահել նաև իր տված պարզելով պահպանելու, կատարելագործելու ու զարգացնելու հնարավորությունը: Այդ պայմանները իրազործելու համար նարդ օժտվել է սրանշելի ծիրքերով: Արարիշը հոգացել է նաև այն մասին, որ նարդը շրջապատված լինի բնական հարստությունների ահեղի պաշարներով: Այդ բնական պաշարների օգտագործումը կազմակերպելու նպատակով մենք դրանք փոխակերպում ենք զանազան մթերքների: Այս գործընթացը անհրաժեշտ է, որպեսզի մարդկային կյանքը ընթան իր հաստատուն հունով:

Կյանք, ծիրքեր, արտադրողականություն, այլ խոսքով՝ անհատականություն, ազատություն, սեփականություն. այս համատեքստում է ամրողական մարդ արարածը: Ես շնայած քաղաքական առաջնորդների նրամիտ ու ճարտար հնարքներին, այս երեք աստվածատոր պարզեներն են, որ պետք է վեր դասվեն ցանկացած մարդկային օրենսդրություններից: Կյանքը, ազատությունն ու սեփականությունը գոյություն չունեն, քանի որ մարդը ստեղծել է օրենքները: Իրականությունն այն է, որ կյանքը, ազատությունն ու սեփականությունը գոյություն են ունեցել վայորոր, և հենց դա է մարդուն ստիպել ստեղծել օրենքներ:

Իսկ ի՞նչ է օրենքը: Դա անհատական իրավունքի պաշտպանության ուղղված համընդհանուր կազմակերպություն է:

Մեզանից յուրաքանչյուրը Աստվածատոր իրավունք ունի պաշտպանել իր անձը, ազատությունը և սեփականությունը: Արանք երեք հիմնական կենսական անհրաժեշտություններն են, որոնցից յուրաքանչյուրի պաշտպանությունը ամբողջապես կախված է մնացած երկուսի պաշտպանությունից: Ինչի՞ համար են մեր ընդունակությունները, եթե

ոչ մեր անհատականության կատարելագործման համար: Եւ ինչի՞ համար են մեր սեփականությունները, եթե ոչ մեր ընդունակությունները կատարելագործելու: Եթե ամեն մի անհատ իրավունք ունի պաշտպանել իր անձը, իր ազատությունն ու սեփականությունը՝ նաև ուժի միջոցով, ապա սրանից հետևում է, որ մարդկանց խումբը իրավունք ունի իր համար կազմակերպել համընդհանուր ուժ՝ իր վերը նշված իրավունքները մշտապես պաշտպանելու համար: Հետևաբար հավաքական իրավունքի սկզբունքները, գոյության պատճառներն ու օրինականությունը հիմնված են անհատական իրավունքի վրա: Եւ համընդհանուր ուժը չի կարող տրամարանորեն ունենալ այլ նպատակ կամ առաքելություն, քան ինն այդ իրավունքների պաշտպանությունը:

Այսպիսով, քանի որ անհատը չի կարող օրինական կերպով ուժ գործադրել այլ անհատի անձի, ազատության կամ սեփականության դեմ, հենց նույն պատճառով էլ ընդհանուր ուժը չի կարող օրինականորեն գործի դրվել ոչնչացնելու մարդկանց խմբի ազատությունը, անձանց կամ սեփականությունը:

### Օրենքի պատշաճ դերը:

Օրենքի համար չկա առավել մեծ պահանջ, քան հանցագործության բացակայությունը:

Այն անպայմանորեն կարիք ունի որոշակի ուժի գործադրման, սակայն արյոք կարելի՞ է օրենքը խելանորեն կիրառել այլ նպատակների համար, քանի մարդկանց իրս վոնքների պաշտպանությունը: Ես մերժում եմ նրանց, ովքեր այդ նպատակներից այն կողմ են պարզում օրենքի ծեռը և հետևաբար այն կիրառում են ընդուն մարդկանց իրավունքների:

Սա ամենաճակատագրական ու ամենաանտրամարանական հասարակական այլասերումն է, որ կարելի է պատկերացնել: Ես հասարակական հարաբերությունների այս ոլորտում առկա հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ընդունել այն ճշմարտությունը, որ օրենքը պետք է լինի համակարգված արդարություն:

### Արդարացի և հանդուրժողական կառավարություն:

Եթե ազգն իր ինքնակառավարման հիմքերում դրել է այս սկզբունքները, ապա կարծում եմ որ այդ դրույթները կամրագրվեն ոչ միայն մարդկանց մտքերում, այլ նաև գործողություններում: Կարծում եմ նաև, որ այդպիսի ազգը կունենա առավելագույնս ընդունելի, պարզ, ծեռն-

տու, արդարացի ու հանդուժողական կառավարման համակարգ՝ անկախ դրա քաղաքական ձևեց: Այդպիսի կառավարման համակարգի ներքո յուրաքանչյուր անհատ ամբողջովին կզիտակցի իր ունեցած արտոնությունները ինչպես նաև իր գոյության ամբողջ պատասխանատվությունը: Այդ պարագայում բնակչությանն այլևս հարկ չի լինի դիմելու կառավարությանը, որպեսզի վերջինս պաշտպանի յուրաքանչյուր անձի նկատմամբ հարգանքը, աշխատելու ազատությունը և այդ աշխատանքի պատուղմերը քաղելու իրավունքը:

Նման պարագայում նարդիկ, հասնելով հաջորդությունների, չեն մտածի դրա համար շնորհակալություն հայտնել պետությանը, և հակառակ՝ հանդիպելով անհաջողության, չեն մեղադրի դրանում պետությանը (դա նույնը կիմեր, եթե հորագործը մեղադրեր պետությանը կարկտի կամ ցրտահարության համար): Պետությունը լցված կիմեր միայն արդար կարգերի գովարանություններով:

Կարելի է ասել, որ իրերի այդպիսի գարգարման դեպքում բնակչության պահանջներն ու պետության բավարարվածությունը կիմեն տրամարանական փոխհարաբերության մեջ: Այդ դեպքում մենք չենք տեսնի աղքատ ընտանիքներ, որոնք չունենալով հաց, պահանջում են գրագիտություն ու կրթություն: Չեն լինի նաև մայրաքաղաքների, աշխատուժի ու բնակչության զանգվածային տեղափոխություններ՝ սկզբնավորված օրենսդրական որոշումներից:

Կառավարության կողմից իրականացվող այդպիսի տեղափոխությունների հետևանքով անորոշ ու անհուսալի են դառնում բնակչության գոյության հիմնադրությները: Բացի դրանից, այդպիսի քայլերը պետությանը ծանրաբեռնում են հավելյալ պարտականություններով:

### Օրենքի ամբողջական այլասերումը:

Ցավոր օրենքի մեջ հստակորեն չի սահմանվում դրա պատշաճ գործառույթները: Եթե եր այն գերազանցում է իր գործառույթները, ապա դրա հետևանքով հաճախ տեղի են ունենում անհետևողական ու վիճարկելի քայլեր: Սակայն դա ամբողջը չէ: Օրենքը հաճախ գործում է իր առարելությանը հակառակ՝ արդարությունը պահպանելու փոխարեն այն ուսնահարելով, իրավունքները պաշտպանելու փոխարեն սահմանափակելով ու ոչնչացնելով դրանք: Նույն այդ օրենքը անազմիկ անձանց տնօրինությանն է հանձնում հակառական ուժը, որոնք այն օգտագործում են անվտանգ կերպով մարդկանց շահագործելու, նրանց ազա-

տությունը և սեփականությունը հափշտակելու համար: Օրենքը կողոպուտը փոխակերպել է իրավունքի, որպեսզի անարգել կերպով բոլոյանը այն: Եւ վերջապես օրենքը օրինական ինքնապաշտպանությունը փոխակերպել է հանցագործության՝ նպատակ ունենալով պատմել մարդկանց ու ժողովուրդների օրինական ինքնապաշտպանության փորձերը:

### Սեփականություն և կողոպուտ:

Մարդ կարող է ապրել ու բավարարել իր պետքերը միայն անդադար աշխատանքով՝ իր ծիրքերը անընդհատ փոխակերպելով բնական ուսուրսների:

Սա է սեփականության հիմքը: Սակայն մյուս կողմից մարդ կարող է գոյատևել և իր կարիքները բավարարել նաև այլոց աշխատանքի արդյունքը զավթելով ու սպառելով: Հենց այս գործընթացն էլ կարելի է համարել կողոպւտի հիմքը:

Սակայն քանի որ մարդը ի թիւ հակված է խոսափել տառապանքից, ինչ աշխատանքը ինքնին տառապանք է, ապա մարդը կարող է դիմել կողոպւտի, քանի որ այն կենսական ուսուրսներ հայրայթելու ավելի հեշտ միջոց է: Դա հենց պատմությունն է ապացուցել: Եւ ահա այսպիսի նախադրյալների առաջ հաճախ անզոր է թե կրոնը, թե բարոյականությունը: Այդ հանգամանքում կողոպւտը կարելի է վերացնել միայն այն դեպքում, եթե կողոպւտը կդառնա ավելի տառապանքի ու վտանգավոր, քան աշխատանքը:

Այժմ արդեն ակնհայտ է դառնում, որ օրենքի բուն նպատակն է հավաքական ուժի ճնշմամբ արգելակել աշխատելու փոխարեն կողոպւտ կատարելու օրեօր ահազմացող միտումը: Օրենքի բոլոր միջոցառումներն ու գործողությունները պետք է ուղղված լինեն պաշտպանելու սեփականությունը և պատժելու կողոպւտը:

Սակայն մեծամասամբ օրենքը ստեղծում է մեկ մարդ կամ մարդկանց մի խափ: Եթե քանի որ օրենքը չի կարող գործել առանց տիրապետող ուժի համաձայնության ու օժանդակության, այդ ուժն էլ պետք է շահագործված լինի օրենքը ստեղծող մարդկանց շահերի պաշտպանությամբ:

Ահա այս փաստերը, ավելացրած նաև մարդու մեջ առկա այն հատկանիշը, որով մարդը ձգուում է նվազագույն ջանքերի զնով պահպանել իր կենսական պահանջների բավարարումը, բույլ են տախի որոշակիութենացարել օրենքի համընդհանուր այլասերման և փաստը և այդ երևույթի զարգացման միտումները: Այսպիսով պարզ է դառնում նաև

այն պարադոքսը, որ օրենքը անարդարության դեմ պայքարելու փոխարեն անպարտելի գենը է դառնում նույն այդ անարդարության համար: Հասկանալի է դառնում նաև այն հանգամանքը, թե ինչու են հիշյալ օրենսդիրները ծգություն մնացած մարդկության անհատական անկախությունը վերափոխել ստրկության, ազատությունը՝ ընկճվածության, նրանց աշխատանքը՝ կողոպուտի: Դա կատարվում է օրենսդիր կողմի ուժին ու հնարավորություններին համապատասխան և ի շահ ինըն նույն ուժի:

### Օրինականացված կողոպուտի գոհերը:

Սարդիկ ստվրաբար ըմբռութանում են այն անարդարության դեմ, որի գոհեր են: Այդ պատճառով երբ կողոպուտը կատարվում է այն մարդկանց օգտին, ովքեր ստեղծում են օրենքները, ապա շահագործվող (կողոպտվող) խավերը աշխատում են մուտք գործել օրենսդիր որորս խաղաղ կամ հեղափոխական ճանապարհներով: Կախակած շահագործվող խավի կրթածության մակարդակից, իշխանության հասնելու նրանց ձգտումը հետապնդում է երկու միանգամայն տարրեր նպատակներ.

ա. հասնելով իշխանությամբ վերացնել օրինականացված կողոպուտը,  
բ. ձեռք բերելով իշխանություն՝ մասնակցություն ունենալ այդ կողոպուտին:

Ժողովրդի համար ի կական դժբախտություն է, երբ կողոպուտի գոհ դարձած ժողովրդական զանգվածների մեջ գերակշռում է իշխանության հասնելու նպատակներից վերջինը. Երբ իշխանությունը զավթում է և նոր մարդիկ են սկսում մասնակցություն ունենալ օրենքի ստեղծմանը (կողոպտելու ակնկալիքով): Այդ պարագայում մարդիկ փորձում են հավասարակշռել իրենց հակուտնյա շահերը, որպես լուծում գտնելով հաճնիհանուր կողոպուտը: Արդյունքում ստացվում է, որ հասարակությունում տեղ գտած անարդարությունները արմատախիլ անելու փոխարեն, պատասխանատունները դրան տալիս են համընդհանուր բնույթ:

Ենց որ կողոպուտող խավերը ձեռք են բերում քաղաքական իշխանություն, նրանք ստեղծում են ճնշամիջոցների մեխանիզմներ՝ ուղղված այլ խավերի դեմ: Նրանք չեն փորձում վերացնել օրինականացված կողոպուտը (դա ավելի մեծ կարողություններ կապահանջեր, քան նրանց լուսավորվածության աստիճանն է ներում): Ընդհակառակը, նրանք շարունակում են իրենց խարդախ նախորդների վարած օրինա-

կանացված կողոպուտի քաղաքականությունը՝ շնայած որ վերջին հաշվով դա հակառակ է իրենց շահերին: Կարծես թե անհրաժեշտ է, որ նախքան արդարության բազավորության գալուստը ամեն որ տառապի իրեն արժանի հատուցմանը, ոմանք իրենց շարության, որիշներն ել իրենց անհասկացողության պատճառով:

### Օրինականացված կողոպուտի արդյունքները:

Հասարակության համար անհնար է պատկերացնել ավելի մեծ այլասերություն ու շարիք, քան օրենքի վերածումը կողոպուտի գործիքի:

Որո՞նք են հասարակության այդ շարիքի պատճառած հետևանքները: Դրանք բոլորը ներկայացնելու համար հատորներ անհրաժեշտ կիսեին, ուստի մենք կմերկայացնենք դրանցից առավել ակնառուներն ու աղետալիները:

Առաջին հերթին դա վերացնում է արդարության ու անարդարության միջև եղած տարրերությունները:

Ամեն մի հասարակություն կարող է գոյատել միայն օրենքների նկատմամբ հարգանքի որոշակի աստիճանի առկայության դեպքում: Որպեսզի օրենքները հարգեն, անհրաժեշտ է դրանք հարգելի դարձնել:

Եթե օրենքները հակասում են քարոյականությանը, ապա քաղաքացին կանգնում է դաժան այլնետրանքի առջև. կամ զրկվել քարոյական սկզբունքներից, կամ կորցնել հարգանքը օրենքների նկատմամբ: Նըշված երկու պարագաներն ել համազոր շարիքներ են և մարդու համար դժվար կիսի ընտրություն կատարել դրանց միջև:

Փաստորեն մարդկանց մտածողության մեջ օրենքը և արդարացիությունը ընկալվում են որպես միևնույն հասկացություններ: Մեր մեջ կա մի համոզմունք, որով ամեն մի օրինական երևույթ ընկալում ենք որպես ծշմարտացի: Այս համոզմունքը այնքան խոր արմատներ է ձգել հասարակության մեջ, որ շատերը բյուրոմբռնմամբ «արդարացի» են համարում այն ամենը, ինչը որ օրենքն է այդպես սահմանել: Այդպիսով որպեսզի կողոպուտին տրվի արդարացի ու մարդկանց խորհի համար ընդունելի բնույթ, հարկավոր է միայն օրենքով այդպես սահմանել:

### Ինչպես ճանաչել օրինականացված կողոպուտը:

Խոկ ինչպես է հնարավոր ճանաչել այդ օրինականացված կողոպուտը: Բավական հեշտությամբ: Եթե օրենքը վերցնում է որևէ մեկին պատկանող ինչ որ քան և տալիս է նրան, ում դա չի պատկանում,

ապա դա հենց մեր մատմանշած երևույթն է: Նույնպիս նաև եթե օրենքը ի վճառ մեկ ուրիշի օգուտ է տալիս որևէ քաղաքացու՝ անելով այն, ինչը անհնար է, որ տվյալ քաղաքացին կարողանար առանց հանցանք կատարելու իրագործել:

Այս օրենքը ոչ միայն ինքնին շարիք է, այլ նաև արգավանդ հող է այլ շարիքների բարգավաճման համար, որովհետև այն անպայման պատճառ է հանդիսանում պատասխան գործողությունների: Եթե այսպիսի օրենքը անմիջապես չեղալ չհայտարարվի, ապա դա անպայմանորեն կրափանցի ամրող համակարգով մեկ, կրազմանա և կզարգանա, այդ դեպքում շատ ավելի դժվար կլինի դրա դեմք առնելը: Այն անձնավորությունը, որը շահում է այդպիսի օրենքից, անպայման կրողորիք ու կրծրուտանա իր ձեռք բերած «Քրավունքների» և որստյան դեմ: Նա կպրենի, թե պետությունը պարտավոր է օժանդակել ու պաշտպանել իր մասնավոր ձեռնարկատիրությունը, թե այդ օրենքի տված հնարավորությունները իրեն բույլ են տալիս ավելի մեծ զումարներ ծախսել և հետևարար բարձրացնել իր՝ աղքատ բանվորների աշխատավարձը:

Պետք չէ խարճնել անձնական շահերից բխող այսպիսի սովորություններից: Այդ փաստարկների ընդունումը կարող է հանգեցնել օրինականացված կողոպուտի արմատավորմանը ամրող պետական համակարգում:

Փաստացի դա արդեն տեղի է ունեցել: Այսօրվա մոլորությունն այն է, որ փորձ է արվում հարստացնել բոլորին՝ ի վճառ մնացած բոլորի, կողոպուտը դարձնել համընդհանուր՝ այն կարգավորելու պատրիվակով:

### **Սոցիալիզմը օրինականացված կողոպուտ է:**

Պարուն Դը Մոնտալեներեսու մեղադրվությ էր այն բանում, որ ձգտում էր սոցիալիզմի դեմ պայքարել բիրու ուժի միջոցով: Սակայն դա տեղույթ իր արտասահմած հետևյալ մտքից, կարծում ենք, որ նա պետք է զերծ մնա այդպիսի մեղադրանքներից. «Սոցիալիզմի դեմ մեր մոելիք պատերազմը պետք է ներդաշնակության մեջ լինի օրենքի, ազնվության ու արդարության հետ»: Սակայն պլ-ն Դը Մոնտալեներեսու սխալ կերպով է արտահայտվել, քանի որ սոցիալիզմի դավանած սկզբունքները գտնվում են բացառապես օրենքի շրջանակներում: Սոցիալիստները ճգոտում են իրագործել օրինականացված և ոչ թե անօրինական կողոպուտ: Նրանք ճգոտում են այլ մոնուպիլիստների նման օրենքը դարձնել իրենց սեփական գենը: Եւ եթե օրենքը Սոցիալիզմի պաշտ-

պանն է, ինչպես կարող է այն գործածվել սոցիալիզմի դեմ: Քանի որ կողոպուտը հովանավորվում է օրենքի կողմից, բնականարար այն չի վախենում դատարաններից, ժանդարմաններից ու բանտերից: Ընդհակառակը՝ Վերջիններս կարող են նույնիսկ օժանդակել կողոպուտին:

Այսպիսի իրավիճակը կանխելու համար առաջին հերթին պետք է օրենսդրական լծակներում բացառել սոցիալիզմի առկայությունը, չթույլատրել սոցիալիստների մուտքը օրենսդրական պալատ. սակայն դա չի հաջողվի այնքան ժամանակ, քանի դեռ օրինականացված կողոպուտը շարունակում է մնալ օրենսդրի մարմինների հիմնական գործունեության ասպարեզը: Հակառակ կարծիքը առնվազն անտրամարանական է, եթե ոչ ամեներեք:

### **Սոցիալիզմի գրավչությունը:**

Այս հարցում մենք բախվում ենք ժամանակների ամենատարածված սխալի հետ: Սոցիալիստները չեն բավարարվում օրենքի արդարացնելու դրույթով. այն պետք է նաև լինի մարդասիրական: Ինչպես նաև բավարար չեն համարում այն դրույթը, թե օրենքը պետք է երաշխավորի մարդու բնատուր ձիրքների անկաշկանդ ու անվնաս օգտագործումը ի նպաստ ֆիզիկական, մտավոր և բարոյական հճռակատարելագործման: Նրանք գտնում են, որ օրենքը պետք է նաև ուղղվի ժողովրդի մեջ ավելացնելու բարեկեցությունը, կորվածությունն ու բարոյականությունը:

*Մաս է սոցիալիզմի հիմնական գրավչությունը: Եւ մենք կրկնում ենք, որ օրենքի կիրառման այս երկու ձևերը իրար հանդեպ լիակատար հակառության մեջ են: Մենք պետք է ընտրություն կատարենք դրանց միջև. բաղաքացին չի կարող միաժամանակ և ազատ և անազատ լինել:*

### **Ժամանակաշրջանների խառնաշփոթը:**

Սոցիալիզմը, անտիկ գաղափարների նմանությամբ, որոնցից էլ ծագում է, հասարակության և պետության տարրերությունների միջև շփոքություն է ստեղծում: Դրա պատճառով էլ կառավարության որևէ որոշման դեմ առարկություններ ծագելու դեպքում սոցիալիստները վճռում են, որ առարկողները չեն ցանկանում կառավարության տվյալ որոշումը ի կատար ածվի ընդիանարակներ:

Եթե մենք մերժում ենք պետական կրթության գաղափարը, ապա սոցիալիստները գնում են, թե մենք դեմ ենք կրթությանը ընդիանար-

**Օրենքը և բարեգրությունը միևնույնը չեն :**

Օրենքի կոչումը մարդկանց հարստահարումը և նրանց ունեցվածքի կողոպուտը չէ, և այն երբեմն գործում է մարդասիրական ոգով: Օրենքի առաքելությունը մարդկանց անձի և ունեցվածքի պաշտպանությունն է:

Բացի այդ պես է ասել, որ օրենքը կարող է մարդասիրական լինել այն դեպքում, եթե արգելում է մարդկանց հարստահարելուն ու նրանց ունեցվածքը կողոպտելուն ուղղված գործողությունները: Սակայն մյուս կողմից դրանով օրենքը չի կարող խոսափել մարդկանց ու նրանց սեփականությունների վրա ազդեցություն ունենալուց: Եթե օրենքի ցանկացած տիպի գործողությունների դեպքում այն որոշակիորեն բռնանում է մարդկանց ազատության ու սեփականության վրա՝ նույնիսկ եթե դրանց պաշտպանում է զանազան ոտնճգործյուններից:

Օրենքը արդարացի է, պարզ է ու հասարակ, ճշգրիտ է ու հստակ սահմանափակումներով: Ամեն մի աչք կարող է տեսնել այն և յուրաքանչյուր միտք կարող է ընկալել այն: Օրենքը որպես արդարություն սահմանափակ է, անփոփոխ և սփոխարինելի: Արդարությունը սրանից ոչ ավել է, ոչ էլ պակաս: Եթե փորձ է կատարվում անցնել օրենքի այս պատշաճ սահմաններից, օրենքը դարձնել կրոնական, եղբայրական, համահավասար, մարդասիրական, արյունաբերական, կրթական կամ գեղարվեստական, ապա այդպիսի փորձ անողները անպայմանորեն խճճկում են չիտազորությած տարածքներում, ընկնում անորոշության ու անհստակության մեջ, ընթանում դեպի պարտադրված ու տոպիա, կամ էլ ավելի վատ՝ դեպի ուստպահանների բազմություն: Դա անպայման հանգեցնում է իշխանության զավթման ու դրա պարտադրմանը ժողովրդին:

Սա ճիշտ է ու բացատրվում է նրանով, որ մարդասիրությունն ու եղբայրությունը, հակառակ արդարության, չունեն ճշգրիտ սահմանափակումներ. եւ անհայտ է, թե դա սկսվելով մինչև ո՞ր կհասնի: Եթե արդյո՞ք օրենքը կարող է ինքն իրեն արգելակել:

**Եկեր այժմ պարզապես ընդունենք ազատության սկզբունքը:**

Աստված մարդկանց տվել է բոլոր հնարավորությունները իրենց նպատակները իրազործելու համար: Նա ապահովել է մարդու ինչպես հասարակական, այնպես էլ մարդկային կերպարանը: Մարդու հասարակական օրգաններն այնպես են սահմանված, որ նրանք կարող

են ներդաշնակորեն զարգանալ միայն ազատության հստակ մքնողություն: Ուրեմն թող հեռու գնան շաղատաններն ու կազմակերպիչները, նրանց շրջանակները, շղթաները, բակարդները և արցանները:

Կորչեն նրանց արիեստական համակարգերը: Կորչեն կառավարական աստիճանավորների քանակական ներքին հասարակականացված ծրագրերը, նրանց կենտրոնականությունը, պետական դրագությունը, հարկերը, նրանց պետական կրոնները, նրանց բանկային մեծանորիները, կորչեն նրանց կամոնակարգումները, սահմանափակումները, հարկերի միջոցով համահավասարեցումները, նրանց բարեպաշտ բարոյականությունները:

Այժմ, երբ օրենսդիրները և «քարեգործները» հասարակությունների վրա արդեն բազմարիվ անօգուտ փորձեր են կատարել, կարո՞ղ են արդյոք նրանք վերադառնալ այնտեղ, որտեղից որ սկսել են. կարո՞ղ են արդյոք մերժել բոլոր համակարգերը և փորձել ընդամենը մի բան՝ ազատություն: Իսկ դրա համար անհրաժեշտ է ընդամենը մեկ բան ընդունել. Աստծուն և Նրա գործերը:

## ԲՐԵՍՏ ԼԻՏՈՎՍԿԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1918թ. մարտի 3-ին ստորագրվեց Բրեստ Լիտովսկի պայմանագիրը: Այն վճռական դեր ունեցավ հայ ժողովրդի ճակատագրում, մասնավորապես հայոց պատմական հողերի կորստյան համար: Ի տարբերություն Ռուսաստանի կողմից այդ պայմանագրով զիջած այլ տարածքների, պատմական Հայաստանի տարածքները հետագայում չվերադարձվեցին իրենց բնիկ տերերին:

Բրեստ Լիտովսկի պայմանագրի մասին կա բավական մեծարանակ գրականություն: Սակայն ինչպես վերջին 80 տարիներում գրված պատմական նշանակության համարյա բոլոր նյութերում, դրանցում ևս չի ասվել իրական ճշմարտությունը՝ մասնավորապես Հայկական հարցի վերաբերյալ: Այդ բացը որոշակիորեն լրացվել է Հարություն Ներսիսյանի (1913-1993) «Միոնիզմը Թեոդոր Հերցելից մինչև լորդ Ռուսական և Հայկական հարցը» ("Сионизм от Теодора Герцля до лорда Ротшильда и Армянский вопрос") աշխատության մեջ, որը տպագրել է Կարեն Միքայելյանը Մոսկվայում լույս տեսնող "Արմանական աշխատության մասին" աշխատության մեջ: Դա «Բալֆուրյան հոչակագիրը և Բրեստ Լիտովսկի գաղտնիքները» ("Бальфурская декларация и загадки Брест-Литовска") աշխատության համառոտ տարբերակն է:

1917թ.-ի ռուսաստանի հեղափոխությունից հետո Լոնդոնում իրեական ազգային շարժման նեկավարները իրենց առջև դրեցին հետևյալ 2 նպատակները:

Թուրքիային համոզել իրեաներին փոխանցելու Պարհեստինյան տարածքները,

Որքան հնարավոր է երկարածել ավերիչ պատերազմը ցարական Ռուսաստանի և Գերմանիայի միջև:

Նպատակը Ռուսաստանի հսկայական բնական ռեսուրսներին արագ տիրանալիք:

Բրեստ Լիտովսկի պայմանագիրը այս նպատակները իրականացնելու բեմադրված ներկայացում էր: Պայմանագրի բարեհաջող կմքման պատասխանատվությունը դրված էր Տրոցկու վրա: Նրա խնդիրն էր նաև ապահովել պատերազմական վիճակը Ռուսաստանի և Գերմանիայի միջև, մինչև Թուրքիայի համար շահավետ պայմանագիր կնքելը:

Պատվիրակությունը բաղկացած էր երեք անհատներից, առաջինը Տրոցկու աշակերտ Յովֆեն էր, որն ուներ հասուլ պարտականություն-

ներ, երկրորդը հենց Տրոցկին էր, իսկ երրորդը Տրոցկիական Սովորությունը էր: Սովորության պատվիրակության գլխավոր խորհրդականն էր արևելյան երկրների «մասնագիր» Պավլովիչը (Weltman): Իր ինքնակենսագրականում նա գրում է, որ հեղտեմքերյան հեղափոխության երկրորդ օրը Տրոցկին իրեն հանձնարարում է ցարական արխիվներից գտնել դիվանագիտական ներկայական պատարագները և ներկայացնել իրեն: Պավլովիչը այդ հանձնարարությունը կատարում է շատ կարծ ժամկետում և այդ ժամին Տրոցկին ուսական և արտասահմանյան մամուլում գրում է. «այդ փաստաթղթերի մշակման գործը ես վերջացրեցի Բրեստի բանակցություններից առաջ և այնուհետ նշանակվեցի բրայել մասնագիր» (ՊԳԱՕԲ ՀՀ, ֆ. 5402, Օռ. 1, լ. 1) (ՍՍՀՄ կենրունական պետական արխիվ):

Այդ փաստաթղթերի մեջ առավել կարկորներից էր Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, որտեղ Անգլիան և Ֆրանսիան հայթանակից հետո համաձայնվում են Ռուսաստանին հանձնել Կ. Պոլիսոր, Բուսփորը, Դարդանելի նեղուցը, ինչպես նաև Էրզրումի, Վանի, Բիրլիսի վիլայեթները և Քորդիստանի մի մասը: Գաղտնի համաձայնագրի հրապարակումը ուրախացրեց Էնվերին, Թալեաթին և Զեմալին: Գաղտնի համաձայնագիրը ներկայացնելով որպես չարիք, նրանք հնարավորություն ստացան մերժել այն: Զեմալը ելույթ ունենալով Բեյրութում գովարնեց փաստաթղթերը հրապարակած անձանց:

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Տրոցկին «Բոլորին, բոլորին, բոլորին» ուղղված իր կոչում հայտնում է, որ պետք է վերջ տալ զարտնի պայմանագրերին և սկսել վարել ազնիվ ու բաց դիվանագիրություն:

1917թ. նոյեմբերի 20-ին Լենինը և Ստալինը կոչ ուղղեցին Ռուսաստանի և արևելյան մուսուլմաններին, որտեղ հայտնում էին. «Տապալված ցարի գաղտնի պայմանագրերը Կոնստանդնուպոլսի գրավման վերաբերյալ պետք է ոչնչացվեն: Ռուսաստանը և իր կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների խորհրդողը, դեմ էն օտար հողերի գրավմանը: Կ. Պոլիսոր պետք է մնա մուսուլմանների ծեռքին: Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի մասնատման և Հայաստանի անվտանգության ապահովման դրույթը չեղյալ է հայտարարվում»:

Գրի մեկ հարվածով Խորհրդային ղեկավարությունը վերջ դրեց համաշխարհային օվկիանոսի «ուար ջրերին» հասնելու Ռուսաստանի երազանքներին:

Լորդ Քերգոնը քուրքերի ներկայությունը Կ.Պոլսում համարում էր Եվրոպայի կենտրոնում առաջացած չարորակ ուսուցք, որը թունավորում է նրա կյանքը և առաջարկում էր վերացնել այն:

Բոլշևիկներն ուզում էին ապահովել Օսմանյան կայսրության անվտանգությունը: Արևելյան Հայաստանը, որը ազատագրվել է ռուսական զորքերի օժանդակությամբ, պետք է ետ վերադարձվի քուրքերին: Խորհրդային պետությունը ուզում էր արարական աշխարհը տարանջատել Օսմանյան կայսրությունից: Հայազգի բանաստեղծ և հասարակյական գործիչ Վահան Տերյանը ժողովրդական Կոմիսարների Խորհրդին առաջարկում էր որոշում կայացնել խորհրդային զորքերի որոշ քանակ քողմելու Արևելյան Հայաստանում: Լենինի ստորագրած «Արևմտահայաստանի մասին դեկրետում» այդ առաջարկությունը չի ներառվել: Ընդհակառակը, Լենինը կարգադրում է քուրքերին տալ «Օսմանյան սուրբ դուրանը»: Եթեր օր հետո նոյն առաջարկությունը հնչեցրեց լուսավորության ժողովում Լանուչարսկին՝ առաջարկելով անմիջապես կս տարել «Օսմանյան սուրբ դուրանի» վերաբերյալ Լենինի կարգադրությունը (Վ. Ի. Լենին. Բնօքրոնիկա. Տ.Վ.С. 114-120):

Այս բոլոր հայտարարությունները իիմնվում էին երիտրուրքերի «Առաջադիմական հեղափոխականության» վրա, որոնք հաղթեցին ուսական զաղության քաղաքականությանը: Պավլովիչը, Ռադեկը և այլոր հանդիս եկան երիտրուրքերի պաշտպանությամբ: Այս բոլոր քուրքամետ անձինք միաժամանակ դարձան նաև ակտիվ հակահայեր: Այսպիսին էր իրավիճակը, եթե Յոփֆե-ն նշանակվեց գերմանական բոլիկի հետ բանակցությունների սովետական պատվիրակության նախագահ: Բանակցությունները ընթանում էին այսպես կոչված «Քաղաքական հանճնաժողովի» համագումարներում: Համագումարներին մասնակցում էին Թուրքիան, Խորհրդային պետությունը, Բուլղարիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան: Սակայն բանակցությունների իիմնական կողմերն էին Գերմանիան և սովետները:

1917 թ. դեկտեմբերի 14-ին գերմանական կողմը ներկայացրեց հաշտության պայմանագրի իր տարրերակը, որը բաղկացած էր 16 հոդվածներից, որոնցից 14-ը արդեն ընդունվել էին սովետների կողմից նախորդ համագումարներում: Տարածքային խնդիրներին առնչվող երկու հոդվածները առաջին անգամ ներկայացվելով սովետներին՝ առաջացրեցին երկարատև բանական:

Ցանկանում ենք շեշտել հետևյալը. գերմանացիները ուսաներից չեն

պահանջում գորքերը դուրս բերել Թուրքիայից և ընդհանրապես Մեծավոր Արևելքից: Նրանք պահանջում են զիջել միայն Ռիֆան և Ռիգայի ծոցի կղզիները: Նրանք շեշտում են նաև բալթյան երկրների և Լեհաստանի խնդիրը:

Սա էր ավստրո-գերմանական բլոկի հետ Յոփֆեի բանակցությունների վերջակետը: Իսկ քուրքական կողմի հետ բանակցությունների արդյունքի մասին կարելի է գաղափար կազմել բանակցությունների վերջին համագումարում Խրահիմ Հարքի փաշայի ելույթից՝ 1917 թ. դեկտեմբերի 15-ին:

«Այսօր,- ասում է Հարքի փաշան,- կայացավ քուրք-ուսական համագումարը և ես այն համոզմունիին եմ, որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև առկա խնդիրները կստանան երջանիկ լուծում: Դա լավ արդյունք է: Ինձ բվում է, որ վերջին 6 օրվա ընթացքում կատարված աշխատանքը գովեստի տեղ ունի: Մենք արագորեն կիողանք այդ հարցը: Այսպիսի բարեհաջող արդյունք ստանալու գործում մեծ դեր ունեցավ ուսական պատվիրակությունը, որը ցուցաբերեց անկեղծություն: Ռուսական պատվիրակության պարունայր ցույց տվեցին, որ նրանք իրական ժողովրդավարության ջատագովներն են, ինչպես նաև արտակարգ դիվանագետներ և պետական գործիչներ:» (Միրնու պերգովոր Յանուար 1920, թ. 1, 39-40):

Յոփֆեի վերաբերյալ քուրքական պատվիրակության անդամների արտահայտած կարծիքները ինչպես հեշտությամբ կարելի է նկատել, դուրս են դիվանագիտական բարեկրթության սովորական կանոններից: Իրոք, Յոն Կովմանը Հարքի փաշային անվանում է «Եվրոպայի լավագույն դիվանագետ»: Նրա ամենաակնառու գծերից էր այն, որ նա կարողանում էր արտասկել իսկական արցունքներով՝ որոշ կինոդերասանների պես: Ինչևէ, նա չկարողացավ չափավորել իր հիացական կարծիքը ուսական պատվիրակության հանդեպ, քանի որ դրա համար ուներ լուրջ պատճառներ:

Իրոք որ կային բավական ազիցիկ պատճառներ: Թուրքերը չեն կարող շնորհակալ չինել Տրոցկուց այն բանի համար, որ նա հրավարակել էր Սայր-Պիկոյի պայմանագիրը, որ հրաժարվել էր «Ռուսական տաճ բանակներին» տիրելու գաղափարից, և որ հրաժարվել էր Արևմտյան Հայաստանից: Գերմանացիները նույնիսկ չեն բարձրացրել Թուրքիայի տարածքից ուսական գորքերը դուրս բերելու հարցը և

Բրեստի պայմանագիրը պետք է եղրափակեր ոռուական կողմի զիջումները: Հարքի փաշան, ըստ ամենայնի, այլ պահանջներ և դրեւ է ոռուական կողմի առաջ: Եթի Բրեստ Լիտովսկի պայմանագիրը առաջին անգամ տպագրվեց, այնտեղ չկային սղագիր արձանագրություններ, իսկ երկրորդ հատորը դեռևս չի տպագրվել: Յոփֆեն կարող էր որոշում կայացնել միայն կուլիսների ետևում, բայց ոչ երբեք պաշտոնական բանակցություններին: Հնարավոր է վճռված լինի, որ Հարքի փաշայի պահանջները կյանքան ապագա Սովետա-բուրքական հարաբերությունների հիմք: Կողմերը միմյանց վերաբերվում էին կատարյալ ըմբռնումով: Անկասկած Յոփֆեն և Հարքի փաշան հող են նախապատրաստել ժամանակի և Տրոցկու բարձր մակարդակի հանդիպման համար:

#### Տրոցկի եվ Ֆոն Կուլման:

Յոփֆեն Բրեստ Լիտովսկից վերադարձավ Ամանորից առաջ և Տրոցկուն զեկուցեց գերմանական բլոկի հետ բանակցությունների արդյունքի մասին: Հունվարի 7-ին ժողովրդական կոմիսարների խորհուրդը լսեց Տրոցկու զեկույցը հաշտության բանակցությունների մասին: Տրոցկին նշանակվում է սովետական պատվիրակության ղեկավար՝ հետագա բանակցությունների համար: Նախքան հեռանալը Տրոցկին Լենինի իմացությանը հերթական նկերն է անում թրտքերին՝ ոռուական գորքերին կարգադրելով լրեւ Կովկասի տարածաշրջանը՝ հակառակ հայերի ցանկության:

Գերմանացիները անհամբերություն էին ցուցաբերում հաշտության համար և ոռուական կողմի վրա ճնշում գործադրելու համար առաջին անգամ բարձրացրեցին բուրքական խնդիրը: Նախքան այդ օրը, Գերմանիան երկրորդ պլանում էր պահում Թուրքիային: Ինչպես Յոփֆեն է ասում, «Թուրքիան և Բուլղարիան ոչ մի դեր չէին խաղում Բրեստ Լիտովսկում» ("Խովան միր", 1927, N 6, 143):

Քաղաքական հանձնաժողովի փետրվարի 9-ի նիստում Ֆոն Կուլմանը առաջին անգամ արտահայտեց այն տեսակետը, որ գերմանական կողմի համար անընդունելի կլինի հաշտության պայմանագիրը առանց դիվանագիտական երաշխիքների, որ Պետերբուրգի կառավարության գորքերը դրւու կրերվեն իրենց դաշնակիցների գրաված տարածներից: Պետք է նշել, 1. որ գերմանական կողմը ոռուական գորքի դրւու բերման վերաբերյալ պահանջում էր միայն դիվանագիտական երաշխիքներ և ոչ թուա անհապաղ իրականացում, 2. խոսքը գնում էր միայն պատերազ-

մի ընթացքում Ռուսաստանի կողմից գրաված տարածքների մասին:

Նույն Ֆոն Կուլմանի ելույթը ցույց է տալիս, որ Տրոցկին ավելի վաղ է նրան նման հավաստիացումներ տվել, քան Արևմտյան Հայաստանում գտնվող ոռուական գորքերը կանցնեին սովետական իշխանությունների հսկողության տակ և ընդհանրապես պետության գերազույն շահը չէր պահանջում, որ Տրոցկին նման երաշխիքներ տար: Տրոցկին պատրաստվում էր ավելի հեռուն գնալ: Նա, պատասխանելով Ֆոն Կուլմանին, նշեց, «Ինչ վերաբերում է բուրքական տարածքներից գորքերի դրւու բերմանը, մենք ունենք հատուկ տեսակետ այդ կապակցությամբ (ընդգծումը Կ. Մ.-ինն է), որը մեզ բռույց չի տալիս դիտարկել հայկական տարածքներից գորքերի դրւումը, որպես փոխառուություն Ռուսական կայսրության այս կամ այն հատվածի համար: Քանի որ մենք արդեն մեր գորքերը դրւու ենք բերում Պարսկաստանից, այդ նույն կերպով մենք դա կանենք՝ սկսելով Հայաստանից: Ի հարկե, մենք այդ մասին կիայտարարենք առավել պարզ և ժուրդիայի հետ հաշտության պայմանագրի տառին համապատասխան: (Միրիա պերեցօրություն..., 185-186)»:

Ժույլ տվեր հիշեցնել, որ այդ ժամանակ ոռուական գորքերը արդեն ազատազրել էին Մեծ Հայքի մեծ մասը և նրանց մնաւմ էր մի վճռական մարշով միանալ պաղեստինյան ճակատում գտնվող անզիկական գորքերին: Սակայն Տրոցկին պատրաստվում էր ուժասպառ ու անօգնական բուրքերին հանձնել ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանները: Ի՞նչ էր Տրոցկին ենթադրում «հատուկ տեսակետ» ասելով: Նույն օրը՝ փետրվարի 9-ին, կայսր Վիկտոր 2-րդը, հաշվի առնելով խորհրդային կողմի պատրաստականությունը, Ֆոն Կուլմանին կարգադրեց վերջնագիր ներկայացնել խորհրդային պատվիրակությանը՝ գրաված տարածքներից բացի գորքերը անհապաղ դրւու բերել նաև Լատվիայի և Էստոնիայի հարավային շրջաններից: Նույն օրը Ֆոն Կուլմանը հայտարարեց. «Մենք չենք կարող ընդունել անորոշ խաղաղության բանակցությունները, որոնք հաջող արդյունքների չեն բերում». նա ներկայացրեց որոշ հանգամանքներ, որոնք պետք է ընդունվեին որքան հնարավոր է շուտ: Օերնինը (Ավտորությունզարդիայի արտարին գործոց նախարարը, ծ. հեղինակի) հանդես եկավ նույնատիպ պահանջով: Դրանով փետրվարի 9-ի համագումարը փակվեց: Մեկ այլ հետաքրքրաշարժ տվյալ Օերնինի հետ հանդիպման ժամանակ Տրոցկու

հետ էր նաև Կարախանը (Խորհրդային կառավարության մեկ այլ անդամ): Տրոցկին Կարախանին ասել է, որ նա հաշտություն չի կնքի գերմանացիների հետ, թեկուզ դա հանգեցնի Ռուսաստանում ստեղծված նոր ռեժիմի տապալմանը: Փետրվարի 10-ի համագումարին գերմանական գեներալ Հռիմանը բողոքեց Ֆրիդլանդիայի տարածքում խորհրդային գործերի ավելացման դեմ: Այնուհետև Ֆոն Կուլմանը հանդես եկավ Խորհրդային կառավարության և զինվորական դեկավարության դեմ մերայլանքով, որ վերջիններս գերմանացի զինվորներին հրահրում են իրենց սպաների և գեներալների դեմ: Վերջապես Ֆոն Կուլմանը առաջարկեց դադարեցնել բանավեճը և քննարկել միայն այն կետերը, որոնց շուրջ կարելի է հասնել որոշակի և կոնկրետ արդյունքների: Այս բոլորը ասվել է վճռականորեն և վերջնագրի ոճով: Այնուհետև Տրոցկին հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Ռուսաստանի Դաշնային Հանրապետության կառավարության-ժողովրդական կոմիսարների խորհրդի անունից տեղեկացնում եմ մեզ հետ պատերազմի մեջ զտնվող, ինչպես նաև չեղող և դաշնակից պետությունների ժողովուրդներին և կառավարություններին, որ մերժելով ստորագրել միացման համաձայնագիրը, Ռուսաստանը հայտարարում է իր կողմից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի հետ պատերազմական վիճակը դադարեցված: Միաժամանակ ռուսական զորքերին կարգադրվում է ճակատի ամրուղ երկարությամբ գորացրվել: Լ. Տրոցկի, Ա. Յոնչեկ, Ա. Պոկրովսկի, Ա. Բիցենկո, Վ. Կարելին»: (Ю. - Կլուಚնիկով և Ա. Սաբանին. Մеждународная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. М. 1926, ч. II, 112-114): Պատվիրակության քարտուղար Կարախանի ստորագրությունը բացակայում է: Նա հրաժարվել է ստորագրել այդ հայտարարությունը:

### Տրոցկի եվ Թալեար փաշա:

Մեծ Վեզիր Թալեար փաշան հասուկ զնացրով ժամանեց Բրեստ Լիտովսկ՝ Տրոցկու հետ հանդիպելու համար: 1918թ. հունվարի 8-ին Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Զերնինը իր օրագրում գրում է. «Անցած գիշեր Թուրքիայի մեծ վեզիր Թալեար փաշան ժամանեց: Նա այցելեց ինձ: Թալեար փաշան ըստ երևույթին բուրք պաշտոնյաներից ամենաշնորհաշատն ու եռանդրն է» (Օ. Չերնին. "В дни мировой войны". М.-Л. 1923, 251):

Տրոցկու խորքերով Հայկական հարցը «Մեծ դեր խաղաց թուրքա-

կան պատվիրակության հետ բանակցություններին՝ նախքան Ամանորյա ընդմիջումը» և որ այս հարցը «Նորույթուն չէ բանակցությունների այս փուլում» (Միրիու պերեցօրու... 63): Այնիայտ է, որ Հայկական հարցը ըննարկվել է Յոփֆեի և Հարքի փաշայի միջև և բանակցությունների ընթացքում մշտապես ունեցել է «մեծ դեր», բայց ոչ որոշիչ դեր: Իսկ ո՞րմ էր զիսավոր հարցը:

Գուշակելու կարիք չկա. դա թուրք-հրեական հարաբերություններին վերաբերող հարցերն էին: Լոնդոնում դաշնակիցները որոշել են, ինչպես ԱՄՆ նախագահ Վիլսոնն է ասել, «Պաղեստինում դնել հրեական ինքնավարության հիմքերը»: Այժմ անհրաժեշտ էր, որ Թուրքիան նրանց հանձնի տվյալ տարածաշրջանի կառավարումը: Եթե Թուրքիան համաձայներ, սփոնհստների հաջողությունը երաշխավորված էր:

Բանակցությունները թվում էր, թէ լինելու էին բավական բարդ: Նախորդ գիզումները Թալեարի համար բավական չէին: Նա պահանջում էր նաև Հայաստանի արևելյան շրջանները՝ Կարսը, Արդահանը, Վրացական Բարումի նավահանգիստը, ինչպես նաև Հարավային Կովկասի որոշ շրջանները: (Հետաքրքիր է, որ ըստ Յոփֆեի Թալեարը անընդհատ հիշեցնում էր Տրոցկուն, որ ինքը և հեղափոխական է):

Այնուհանդերձ դեռևս բավական գործ կար անելու այնպիսի համակարգ ստեղծելու համար, որի մեջ կմտնեն այս բոլոր ի նորիները: Սակայն գերմանացիները ակնհայտորեն արհամարում էին թուրքական շահերը և ուստեղից չէին պահանջում ազատել թուրքական տարածքները: «Համաժողովներին փաստորեն բուրքերն ու բուղարացիները չէին խոսում. նրանց շահերն արտահայտում էր գերմանական կողմը» (История дипломатии, т. 3, 75): Դրա բացատրությունը կարելի է գտնել գերմանական զինված ուժերի ընդհանուր կայանապես Լույինորդի՝ 1918թ. նոյեմբերի 2-ին Բունդեսբազում ունեցած մի ելույթում, որտեղ նա նշում է. «Զինվորական տեսակետից մենք Ավստրո-Հունգարիայի կարիքը չունենք, Բուլղարիայի օգտակարությունը չնշին է, իսկ Թուրքիան այժմ բեռ է, բայց նա արդեն մեծ գործ է կատարել» (Советско-германские отношения..., 177):

Գերմանիան գգտում էր միայն մի բանի՝ Ռուսաստանի հետ հաշտության և այդ նպատակին համար արհամարիում էր Թուրքիայի շահերը:

Տրոցկու և Թալեարի միջև կայացած բանակցություններից հետո

համակարգվեցին ազատազրած տարածքներից ուսական զորքերը դուրս բերելու, ինչպես նաև Վարչը, Արդահանը և Բարումը բուրքերին հանձնելու պայմանները:

Ահա թե ինչ է գրում Մեծ Բրիտանիայի Վարչապետ Լոյդ Ջորջը. «1918թ. հունվարին Մեծ Վեզիր Թալեարը ... տվեց... անորոշ խոստումներ օրենք ընդունելու, որի համաձայն հրեաների օրինական երազանքները Պաղեստինի մասին կարող են իրականանալ» (Ոլոյդ Ջորջ. Սոշ., 303):

Թալեարը սիոնիստներին աղոտ խոստումներ է տվել նաև 1916թ. հունվարին և 1917թ. նոյեմբերի 7-ին: Նրա գլխավորած ուղղմական գերատեսչությունը հաստատել է հրեական Ազգային Շարժման հետ կնքված ուղղմա-քաղաքական համաձայնագիրը:

Թալեարի և Տրոցկու միջև բանակցությունների առեղջածածյին ըուղ փոքր-ինչ քարձրացրեց Հարքի փաշան՝ Բրեստի խաղաղության համաձայնագրի ստորագրման վերջնական փուլում: «Նրա մասին կիսուներ ավելի ուշ: Այժմ կիսունը 1918թ. փետրվարի 10-ին Տրոցկու կատարած ներկայացման մասին, որտեղ նա բոլորին զարմացրեց իր «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» հայտարարությունով: Հաջորդ օրը՝ փետրվարի 11-ին, Գերմանիայի ույսիկանցիները հետևյալ հեռագիրն ուղարկեց Վիլհելմ 2-րդ կայսերը. «Ես կարծում եմ, որ Տրոցկու հայտարարությունը վիժեցրել է բանակցությունները և փաստորն դա զինադադարի մերժում է: Այնպես որ մենք կարիք չունենք չեղյալ հայտարարել զինադադարը... հետևաբար մենք իրավունք ունենք կատարելու մեր հետազա քայլերը»: 1918թ. փետրվարի 13-ին Համբուրգում կայացած հանդիպմանը, որին ներկա էին Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-ը, կանցլեր Գերլիխը, մարածախտ Հինդենբուրգը, գեներալ Լյուդենդորֆը և այլք, կայսրը չափազանց վրդոված հայտարարեց. «Մենք չենք ստացել Տրոցկու ստորագրությունը և այդ պատճառով եթե մենք ուզում ենք խաղաղության համաձայնագիր, պետք է տապալենք բոլշևիկներին: Ուստի ժողովուրդը մնացել է քինապահ հրեաների ողորմածությանը, որոնք նիացած են աշխարհի բոլոր հրեաների և մասնների հետ» (Советско-германские отношения... 317-318, 327): Պարզ էր, որ գերմանական կայսրը գգուում էր հաշտության Ռուսաստանի հետ, որպեսզի իր զորքերը արևելքից ուղղեր դեպի արևմտյան ճակատը, սակայն այժմ նա հարկադրված էր կատարել հակադարձ զործողություն՝ արևմտյան զորքերը տեղափոխել արևելք: Ոչ միայն կայսրն ու իր գեներալնե-

րը, այլ նաև գերմանական քաղաքագետներն էին հասկանում, որ Տրոցկին պարզապես վիճացրել է հաշտության բանակցությունները՝ հօգուտ Բալթուրյան հոչակագիր:

Գերմանացիները արևմտյան ճակատից արևելյան ճակատ տեղափոխեցին 4 զորաքաժին և 1918թ. փետրվարի 18-ին վերսկսեցին զորիլ: 14 օրվա ընթացքում նրանք գրավեցին մի շաքր շրջաններ Բալթյան հանրապետություններից, Բելոռուսիայից, Ուկրաինայից և Ռուսաստանից: Փետրյուրադր հայտնվեց փունզգի առաջ և մայրաքաղաքը բոլշևիկները տեղափոխեցին Մոսկվա:

Փետրվարի 18-ին կայացած բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեի համագումարում Լենինը առաջարկում է անհապաղ ստորագրել հաշտության պայմանագիրը: Այդ առաջարկությունը անցնում է 8 կողմ և 5 դեմ-ով: Հեռագիր է ուղարկվում Գերմանացիների պատասխանը հասավ փետրվարի 23-ին և ուներ չափազանց կոշտ բնույթ: Կազմվում է պատվիրակություն՝ բանակցությունները վարելու համար և դրա նեկավար է նշանակվում Գ. Յ. Սոկոլնիկովը: Լենինը նրան հանձնարարում է բանակցությունների ընթացքում փափկեցնել գերմանական չոր ուղիմատումը: Սոկոլնիկովը համաձայնում է դրան՝ ասելով, որ մի ստորագրության համար ամբողջ պատվիրակություն չարժե ուղարկել և որ ինքը կաշխատի որոշ արդյունքների հասնել (VII էռ տրեհին տևզ, 271): Դա խոսում է այն փաստի օգտին, որ Սոկոլնիկովը տեղյակ չէր Տրոցկու և Թալեարի միջև կայացած գաղտնի բանակցություններից: Թե ինչպես վարկեց Սոկոլնիկովը Յովիթի հետ անհատական խորհրդակցությունից հետո, կտևսներ հաջորդիվ:

#### Վերջին արարը:

Գերմանական վերջնագրի համաձայն ստվետական պատվիրակությունը պայմանագիրը կնքելու համար Բրեստ Լիտովսկ ժամանելուց հետո միայն երեք օր ուներ: Մարտի 1-ին Ֆոն Ռուգենբերգի նախագահությանը անցկացվեց միացյալ համաժողով: Նա կարդաց փետրվարի 21-ին գերմանացիների ներկայացրած վերջնագրի 10 պայմանները: Հասնելով իմնգերորդ կետին՝ «Արևելյան Անատոլիայի տարածքներից գործերի դրւու բերմանը», նա կատարում է հետևյալ հավելումը. «Ներառյալ Կարսի, Արդահանի և Բարումի շրջանները: Սակայն մենք չենք պնդում նշված տարածքներից ուսական զորքերի անհապաղ դրւու բերմանը՝ ծգուելով

խուսափել հավելյալ մեղադրանքներից»(Мирные переговоры... 219):

Ֆոն Ռուսենբերգի հետո նույը է ունենում Հարքի փաշան: Նա խոսում է «քուրք-ռուսական հասուկ բանակցությունների» մասին, անդրադառնալով այն հարցին, որ ինքը «պատիվ է ունեցել այդ ժամանակ ռուսական պատվիրակության դեկանար պարոն Յոֆֆեին ներկայացնել առաջին քուրք-ռուսական ծրագիրը», իսկ Յոֆֆեի մեկնումից հետո նա «պատիվ է ունեցել Տրոցկուն հանձնել նշված ծրագրի առավել ավարտուն տարրերակը, այդ պատճառով այժմ ռուսական պատվիրակության մոտ կա համաձայնագրի երկու տարրերակ»:

Հարքի փաշայի այս բացատրությունից հետո արդեն պարզ է դասում. առաջին, որ քուրքերը առաջնորդվում էին Տրոցկու և Յոֆֆեի հետ ունեցած զաղտմի բանակցություններով: Տրոցկուն ներկայացրած առաջարկում կարծես թե ներառված էր Արևելյան Անատոլիան մաքրելու քուրքերի պահանջը: Այսուամենայնիվ այդ պահանջը ներառված չէր փետրվարի 9-ի ռուս-գերմանական համաձայնագրում: Բայց բանակցությունների ճախողումից հետո այդ պահանջը գերմանացիները ընդորկեցին 1918թ. փետրվարի 21-ի վերջնագրում:

Երկրորդ, երրորդ փետրվարի 9-10-ի ընթացքում Տրոցկին ժամանեց Բրևստ Լիտովսկ, քուրքերը «Տրոցկուն ներկայացրին օսմանյան պատվիրակությանը ծեռնոտու առավել ավարտուն պայմանագրի տարրերակ», որտեղ ընդորկված էր Կարսի, Արդահանի և Բարումի նվատմանը պահանջները: Նույնիսկ այդ ժամանակ գերմանացիները հաշվի չին առնում այդ պահանջները: Այսուեւ հարց է առաջանում. ե՞րբ է գերմանական կողմը իր վերջնագրի մեջ ընդունել քուրքական նշված պահանջները: Այս պահանջները ընդորկվել են փետրվարի 21-ին կազմված վերջնագրում և Պետերբուրգ է հասցել փետրվարի 23-ին առավոտյան: Այսուհանդերձ գերմանական պատվիրակությունը Կարսի, Արդահանի և Բարումի շրջանները մաքրելու մասին իիշատակել է միայն մարտի 1-ի բանակցություններին՝ այս էլ ճիշճանակորեն հայտարարելով, որ չեն պնդում, որ այդ տարածքներից ռուսական գորքերը անհապաղ դուրս բերվեն:

Ակնհայտ է, որ գերմանացիները բավարարաշափ տեղեկացված չին ռուս-քուրքական հատուկ բանակցություններից (Հարքի փաշա-Յոֆֆե և Տրոցկի-Շտալեար): Այլապես Սոկոլնիկովի պահկածը նրանց մեջ չէր առաջացնի շփորություն, ինչը կտևնենք թիջ հետո:

Երրորդ, հասկանալի է դառնում դեռևս զինադադարի առաջին օրե-

ից և նոյնիսկ բանակցություններից առաջ Տրոցկու կողմից Հարավային Կովկասից գորքերի դուրս բերման զաղափարը ընդունելու երևոյթը: 1918թ. հունվարի 28-ի իր ելույթում Տրոցկին «պարզ և հասկանալի կերպով» հայտարարեց, որ արդեն որոշված է ռուսական գորքերի դուրս բերման խնդիրը և որ ինքը «ռուսական գորքերի դուրս բերման նկատմամբ ունի լուրջ սկզբունքային հայցըներ... որոնք նրան թույլ չեն տալիս հայկական տարածքներից գորքերի դուրս բերումը համարել գորքերի դուրս բերմանը փոխարինող արարը»:

Եկեւ այնուամենայնիվ անդրադառնանը Սոկոլնիկովի գործուներթյանը: Հարց է առաջանում, թե նա ինչպես է արձագանքել Ֆոն Ռոգենբերգի և Հարքի փաշայի հայտարարություններին: Յոֆֆեի հետ խորհրդակցությունից հետո նա պատրաստ էր և արտահայտեց այն միտքը, թե ինքը ցանկանում է ամենալարձ ժամկետում, թեկուց հենց հաջորդ օրը ստորագրել հաշտության պայմանագիրը: Նա ցանկություն է արտահայտում արդեն սկսել պայմանագրի նշակման պլոտեսը (նոյն տեղը, 186,221,224):

Խորհրդային պատվիրակության դեկանարի այսպիսի դիքըրոշումը զարմացրեց նոյնիսկ գերմանացիներին: Գեներալ Հոֆմանը իր նորերում գրում է. «Այս անգամ բանակցությունները բավական անսովոր են: Հենց առաջին հանդիպմանը գեներալ Ֆոն Ռոգենբերգը առաջարկեց ըննարկել գերմանական կողմի առաջարկած պայմանագրի պայմանները՝ հատված առ հատված: Սակայն Սոկոլնիկովը առաջարկեց կարդալ պայմանագիրը ամրողությամբ: Եվ երբ պայմանագիրը ընթացվեց, Սոկոլնիկովը հայտարարեց, որ ինքը իրաժարվում է պայմանագիրը ըննարկել հատված առ հատված և պատրաստ է այն ստորագրել անմիջապես»: (Գոֆման Մ. Զապиски և դնեւնիք 1914-1918 թ., Լ., 1929, 136):

Միայն բանակցությունների երրորդ օրը՝ մարտի երեքին, երբ արդեն պետք է ստորագրվեր հաշտության պայմանագիրը, Սոկոլնիկովը ցանկություն հայտնեց մի հայտարարություն անելու, որը նա արտաբերեց Տրոցկու ոճով: Նա իիշեցրեց, որ «Գերմանական կայսերական պաշտությունը թույլ չի տալիս հեղափոխական պրոպագանդան տարածել» ընդուն Գերմանիայի ու գերմանական գինվորական դեկանացիրյան, և որ «Կովկասի վերաբերյալ գերմանական կառավարության կազմած վերջնագիրը բացահայտ բռնության ակտ է, քանի որ Գերմանիան այս տարածաշրջանները կտրել և կցել է Թուրքիային, ինչը չի համապա-

տասխանում Կարսի, Արդահանի և Բարումի բնկաչության իրական կամքին»: «Հմանականում նա գերմանացիներին մեղադրում էր այն բանում, որ վերջիններս ցանկանում էին ոռուական զորքերի դուրս բերում՝ ասելով թե «չեն պնդում» դրանում:

Համագումարի նախագահ և Ավստրո-Հունգարիայի պատվիրակության նախագահ դոկտոր Գարցը ի պատասխան նկատեց, որ երեք օրը բավական էր «պայմանագիրը հատված առ հատված քննարկելու համար», և որ խորհրդային պատվիրակությունը «հնարավորություն ուներ չնդունելու այս կամ այն կետը: Ուստական պատվիրակությունը զերադասեց շրնչարկել պայմանագիրի կետերը, այլ ընդունեց պայմանագիրը իր ամբողջության մեջ: Այդ պատճառով էլ նրանք լիակատար պատասխանատվություն են կրում դրա համար»:

Այսուհետև Ելույր ունեցավ Հարքի փաշան՝ ասելով. «Ես կխնդրեի, որ ոռուական պատվիրակության անդամները իմ Ելույրում որևէ անհան ակնարկ չկարծեն իրենց հասցեին: Եթե նույնիսկ Ուստաստանը ինչ-ինչ հանգամանքներում անցյալում վիրավորել է մեզ, մենք հասկանում ենք, որ այսօր ուրիշ Ուստաստանի հետ ենք բանակցում»:

Պնդելով Կարսի, Արդահանի և Բարումի շրջանների նկատմամբ բուրքերի «փրավունքի» մասին, նա ասաց. «Այստեղ չկան հաղթողներ և պարտփողներ. այստեղ բոլոր էլ հաղթող ենք»: (Միրնի պերեցօրու... 230, 234): Նրա ասածը կարելի է մեկնարանել որպես «մենք իրեններս հաղթող ենք», քանի որ և Երիտրուքերը և Խորհրդային դեկավարները իրեններ էին:

Ահա այսպես Տրոցկու և Թալեարի պլանը իր վերջնական հաստատումն ստացավ փաստարդի տեսքով՝ այս երեք շրջանները բուրքերին հանձնելու Սոլյունիկովի որոշմամբ:

Բրեստ Լիտովսկի պայմանագիրը ստորագրվեց հենց նույն օրը՝ 1918թ. մարտի 3-ին: Երկու տարի անց, եթե Սոլյունիկովը հրատարակեց «Բրեստի հաշտությունը» աշխատությունը, նա, նկարագրելով այստեղ իր ունեցած գործունեությունը, հպարտությամբ մեջ է բերում Հարքի փաշանի հետևյալ խորը, թե «Բրեստում չկային հաղթողներ և պարտփողներ. այստեղ բոլոր էլ հաղթող ենք»:

Բալֆուրի հոչակագրի հրատարակումից հետո Լոնդոնի Հրեական ազգային շարժման առաջնորդները ոռուաստանի սինդիստներին հանձնարարեցին հաստատելու նոր մերողներ և ծեր՝ Անգլիայի նոր նպատակներին համապատասխան:

Սինդիստական կազմակերպության կենտրոնական կոմիտեի անդամներից մեկի՝ Ա. Դ. Խելստոնի գաղտնի գեկույցում, որը խուզարկության ընթացքում հայտնաբերել են Խորհրդային դեկավարները, պարզվում է, որ սինդիստները Անգլիային խոստանում են «Խորհրդային հանգարգում ընդգրկված իրեա աշխատակիցների միջոցով ճնշում քանի ուղարկելու ի նպաստ պատերազմը շարունակելուն»: Ի՞նչ աշխատակիցների միջոցով հարցին արձանագրության մեջ ազդու կերպով գրված էր «զիրապարակել» (ՄГԱ, ԻՄԼ, ֆ. 445, օլ. 1, դ. 22, լ. 35):

Ամփոփենք Գերմանիայի դեմ պատերազմում Ուստաստանի արևելյան ճակատում ծավալված դեպքերը:

Եթե 1918թ. փետրվարի 10-ի համաժողովին Տրոցկին հրաժարվեց ստորագրել Բրեստ Լիտովսկի դաշնագիրը, նա հնարավորություն ստացավ շրջանցելու այնպիսի պայմանագիր, որում ներառված չէր Արևմտյան Հայաստանից ոռուական զորքերի դուրս բերման պահանջ:

Եթե Տրոցկին ստորագրեր փետրվարի 10-ին նրան առաջարկված պայմանագիրը, ապա Ուստաստանը զորքերը դուրս կբերեր միայն 150 հազար քառակուսի կիլոմետր տարածքից: Սակայն կատարելով միանգանայն հակադիր քայլ՝ Ուստաստանը կորցրեց մոտ մեկ միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ ահուի մարդկային և նյութ կան զոհերով: Այդ արարքը պետք չէ մեկնարանել Վիճուրոն Շերջիլի պես, որն ասում է, թե «Ուստաստանը իր ճակատում գրադարած պահեց գերմանական զորաբժինների համարյա կեսը՝ տալով այնպիսի մարդկային կորուստեր, ինչպիսիք չտվեցին բոլոր դաշնակիցները միասին վերցրած»: Դա միայն Արևմտյան ճակատում: Խսկ ի՞նչ եղավ հարավային ճակատում: 1917թ. վերջնամասում ոռուական զորքերը լրեցին հարավային ճակատը և միաժամանակ Խորհրդային կառավարությունը Հարավային Կովկասի բանակները հանձնեց բուրքերին՝ ստորագրելով վերանայված Բրեստ Լիտովսկի պայմանագիրը: Դա Թուրքիային կանաչ լոյս տվեց գրոհ սկսելու տարածաշրջանի դեմ: Վ. Թերջիլը գրում է, որ Բրեստ Լիտովսկի պայմանագիրը «ծառայեց որպես սկիզբ բուրքերի լայնամասշտար հարձակմանը դեսպի արևելք» (Վ. Թերջիլ, Համաշխարհային ճգնաժամ):

Տրոցկու և Թալեարի միջև կնքված գաղտնի համաձայնագիրը մինքը ողբերգական էց բացեց 20-րդ դարի հայոց պատմության մեջ: Սուստաֆա Քենաչի Լենինին ուղղված նամակից և ոռու-թուրքական «Եղբայրության և բարեկամության» պայմանագիրի ստորագրումից հետո Թալեարի ու Տրոցկու միությունը առավել պաշտոնական ու դիվա-

նագիտական կարգավիճակ ձեռք բերեց:

Ռուսաստանի խորհրդայնացումը, Բրեստի պայմանագիրն ու Արարտ լրպ-Լենին համաձայնագիրը լրջորեն փոխեց Ռուսաստանի ավանդական դիրքորոշումը արևելքի նկատմամբ: Այն նաև մեծագոյն հարված էր ռուս-հայկական դարավոր քարեկամությանը: «Բրեստի պայմանագիր» անվանված ծաղրն ու «քարեկամության և եղբայրության պայմանագիր» մինչև օրս ամրողությամբ շնորհակացված: Պատմարանները պետք է ջանան մերկացնել «Բրեստ Լիտովսկի» պայմանագրի խարդախությունները, որպեսզի ճշմարտությունը ամրողությամբ հայտնի դառնա:

**Մեկնարամուրյամներով խմբագրել է Արտավազդ Ավագյանը:**

Ռուսերենից քարզմանել է Կարեն Թովմասյանը, «Գոլոս Արմենիի» 2004թ. մարտի 2:

Պետք է շեշտվի, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրում Ռուսաստանի բոլշևիկ առաջնորդների և Թուրքիայի Երիտրուրք դեկավարների միջև զաղունի համաձայնության է եղել: Այս երկու կուսակցությունների առաջնորդների մեծագոյն մասը հրեաներ են: Եվ դա մի հրաշալի հմարավորություն էր զավթելու Պատմական Հայաստանի հողերի մեծ մասը՝ ռուսական զորքերը դուրս բերելով տարածաշրջանից՝ Էրզրումից, Սալարիայից, Վանից, Արդահանից, Կարսից, Իգդիրից և Արդինից և հաստատել դա «Բրեստ Լիտովսկի» պայմանագրով:

ԱՄԵՆ ՈՐ ՊԵՏՔ Է ԽՄԱՆԱ

ԱՐՄԱՔԻՆ ՂԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐՈՒ ՄԱՍԻՆ

Կան բա զում մարդիկ, որոնք գտնում են, որ գոյություն ունի առավել կազմակերպված մի գերակա ուժ, որն ուղղորդում է Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքական ուղղություններն ու նպատակները, ինչպես նաև Հանրապետական ու Դեմոկրատական կուսակցություններին՝ երկիրը կառավարելու նպատակով: Այս գրքով կը նպատակ ունի մատնանշել այդպիսի կազմակերպություններից մեկը: Դա մոտավորապես 3 հազար անդամներ ունեցող «Արտարին Հարաբերությունների Խորհուրդ» հորջորջվող կազմակերպությունն է: Դա առավել քիչ հայտնի կազմակերպություններից մեկն է, ինչը պայմանավորված է ամերիկյան ժողովրդի քիչ տեղեկացվածությամբ:

Այն կազմակերպվել է 1921թ. հունիսի 29-ին մի խումբ «Ստավրականների» կողմից, որոնք գտնում էին, որ կարիք կա ստեղծելու ազգային դիմագծից զուրկ համաշխարհային մի կառավարություն՝ չնայած որ ամերիկյան ժողովուրդը պատրաստ չէր որան:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը ամերիկացիները հետևում էին իրենց նախազահ Զորջ Վաշինգտոնի 1796թ. սեպտեմբերին ժողովրդին ուղղած հրամեցուի խսորում արտահայտած խելամբատ խորհրդին: Նա ասել է. «Մեր ճիշտ քաղաքակամությունն այն է, որ մենք գերծ մնանք արտաքին աշխարհի ցանկացած հատվածի հետ մշտական դաշինքներից: Հանուն ինչի մենք պետք է մեր նպատակները միահյուսենք Եվրոպայի այս կամ այն հատվածի հետ, մեր խաղաղությունն ու քարեկեցությունը խառնենք Եվրոպայի պատվախնդրության, մրցակցության, շահերի, ցանկությունների և քմահաճույքների քակարդին»: Վաշինգտոնը գիտակցում էր, որ այլ պետությունների ներքին գործերին միջամտելով միաժամանակ թշնամիներ ու ատելություն կստեղծի Ամերիկյան հանդեպ:

Վույրո Վիլսոնի կառավարության անդամներից շատերը, այդ թվում պետական քարտուղար Վիլյամ Չեննինզու Բրայնը, ուղղակիութեան մերժելով Վաշինգտոնի պատգամը, նպաստեցին ԱՄՆ-ի մասնակցությանը 1-ին համաշխարհային պատերազմին՝ այլ երկրների ներքին գործերին միջամտելու նպատակով: Առաջին համաշխարհային պատերազմը նպաստավոր հնարավորություն տվեց նորաստեղծ Արտարին Հարաբերությունների խորհրդին բարձրացնելու համաշխարհա-

յին կառավարություն ստեղծելու հարցը, որպես աշխարհի խնդիրների լուծման լավագույն եղանակ: Մինույն ժամանակ ԱՀ-ի քույր կազմակերպությունն ստեղծվեց Սև Բրիտանիայում, որն անվանվեց «Արտաքին հարաբերությունների ռազմավորական ինստիտուտ»:

#### Պատմական դավաճանություն:

1925թ.-ին Ջանգ Կայ-Շեկը ստեղծեց առաջին Զինական սահմանադրական համապետությունը: 1937թ. օգոստոսին ճապոնացիները ներխուժեցին Չինաստան: Այդ նույն ժամանակ Չինաստանի կոմոնիստները կազմակերպվում էին Ջանգի դեմ: Հուսահատված Ջանգը օգնության դիմեց ԱՍՆ-ին՝ իր ազգային դրամը կայունացնելու համար նրանից 250 միլիոն դրար փոխանոնելով: Այն մարդը, որին վստահված էր ամերիկյան կոնգրեսի կողմից հաստատված դրամական օգնությունը տեղ հասցնել, խախտեց օրենքը՝ չտեղափոխելով գումարը: Այդ մարդը պետական գանձատան քարտուղարի տեղակալ Հարրի Ներսոնը Ռայք էր, որը միաժամանակ նաև խորհրդային գործակալ էր ու Արտաքին Հարաբերությունների Խորհրդի (այսուհետև՝ ԱՀ) անդամ: 1946թ. գեներալ Ջորջ Մարշալ (ԱՀ) հայտարարեց: «Երբեք շտաբի դեկավար եւ զինել են հակակոմոնիստական 39 զորաքամբներ. այժմ գրչի մեկ հարվածով եւ նրանց կզիմաքափեն»: Արդյունք եղավ կոմոնիստներ Չոկի և Մարի կողմից մոտ 64 միլիոն չինացիների մահը՝ ըստ դատական հանձնաժողովի:

ԱՀ-ի անդամ պետքարտուղար Դեն Էյրոնը (1945-1953) դավաճանեց հակակոմոնիստ Ջանգ Կայ-Շեկին՝ հօգուտ չինական կոմոնիստների:

ԱՀ-ի անդամ Դեն Ռասը (1961-1963) կազմակերպեց Հյուսային Կորեայի պատերազմը (որը այդպես էլ հաղթող չունեցավ) և գեներալ Մար Արքուրի հեռացումը, քանի որ վերջին Հ. Կորեայի և Չինաստանի կոմոնիստներին արդեն հաղթելու եղրին էր:

ԱՀ-ի անդամ Դոն Ֆուրեր Դալզը և Ալեն Դալզը, ԱՀ-ի մեկ այլ անդամ Դուայը Էյզենհաուերի կառավարությունում գրադեցնելով քարձր պաշտոններ, 1956թ.-ին դավաճանեցին Հունգարիայի ազատության մարտիկներին և գիտակցարար աջակցեցին կոմոնիստ Ֆիլետ Կաստորյին 1958-1959թթ. իշխանության գալու Կուրայում:

ԱՀ - անդամներ էին նաև նախագահներ Նիքունը, Ջերալդ Ֆորդը, Դեն Ռասը, Ուորեր Մար Նամարան, Հենրի Քերոր Լոդը և Հենրի

Չիսինջերը, որը կազմակերպեց Վիետնամի ամօգուտ, պատերազմը, ինչին զի գնացին մոտ 55.000 ամերիկացի զինվորներ:

ԱՀ -ի անդամներ նախագահ Չիմի Քարթերը, Հենրի Չիսինջերը և Սոլ Լինովիչը 1978թ.-ին ճեղնարկեցին Պանամայի ռազմավարական նշանակություն ունեցող ջրանցքի, ինչպես նաև անհատույց 400 միլիոն դրար հանձնումը Պանամայի Մարքսիստական դիկտատուրային:

ԱՀ -ի անդամներ ազգային անվտանգության խորհրդական Զրիգ-ին Քրթեզինսկին, պետական փոխքարտուղար Ռուրեն Քրիստոֆերը և Հենրի Չիսինջերը տապալեցին Ամերիկանետ Անաստոսին Սոմոզային Նիկարագուայում և Շահին՝ Պարսկաստանում, որոնց փոխարինեցին կոմոնիստամետ դեկավարությունը Նիկարագուայում և կրոնական ֆանատիկների կառավարությունը Իրանում, որոնք ատելություն են տածում Ամերիկայի նկատմամբ:

Արտաքին Հայ արերությունների Խորհրդի անդամ Ջորջ Բուշը և իր կառավարությունը աներկայորեն մասնակցել են Հարավային Աֆրիկայում պատմականորեն ծևագործած համակարգված ու տնտեսապես առաջատար հասարակության անկանոն գործընթացին՝ իշխանության բերելու համար ճանաչված մարքսիստ և հիշյալ հասարակության դեմ ավերիչ բռնություններ կիրառելու համար դատված մի անհատի: ԱՀ -ի անդամներ գեներալ Ջոլին Փաուելը, Բրենը Սրուուրոֆը, Լուուրեն Էգլուուրգերը և ԱՀ -ին հակած տեղեկատվական մամուլը նոյնիսկ այժմ գովարանում են Հարավային Աֆրիկայում քառուի պատճառ հանդիսացող մարքսիստ Բիշուպ Տուտուին:

Նախագահ Բուշը, արհամարենով ԱՍՆ կոնգրեսը, դիմեց ԱԱԿ-ին՝ Իրաքի դեմ պատերազմ սկսելու թույլատվության համար՝ Ամերիկայի սահմանների փոխարեն պաշտպանելու Քուվեյթի սահմանները: Պատերազմը արդարացնելու համար ամերիկյան ԶԼՄ-ները հիստերիկ աղմուկ քարձրացրեցին Սահամի քափած արյան կապակցությամբ, որի մասին նախկինում շէնի էլ լսել: Խսկ Բուշը բացերաց հայտարարեց, որ իր նպատակը «համաշխարհային նոր կազմեր» ստեղծելն է:

1972թ. մայիսի 18-ին Նիքունի կառավարությունում կառավարման և բյուջեի ներկայացուցիչ Ռոյ Մ. Նեշը հայտարարեց համաշխարհային կառավարության կայացման ժամկետի իր կանխատեսումները, ըստ որի: «Մոտ երկու տասնամյակից (ըստ երևույթին նոտավորապես 1992թ.) համաշխարհային տնտեսական համայնքի կառուցվարային հիմքը կայացած կլինի»: Ռոյ Մ. Նեշի կանխատեսումները իրականա-

ցան: «Համաշխարհային նոր կարգերի» կողմից Ամերիկայի կապիտուլացիայի ակներև օրինակ կարելի է դիտարկել ԱՄԿ-ի քույլատրած պատերազմները, որոնցում օգտագործվում են ԱՄՆ զինված ուժերն ու ֆինանսները: Ամերիկայի սահմանադրության, Կոնգրեսի և ժողովրդի փոխարեն ԱՄԿ-ի քույլատրությունն է որոշում պատերազմ սկսելը:

Քարտագույն խնդիր է աշխարհի ժողովուրժներին համոզել հրաժարվել իրենց ինքնիշխան պետություններից և միանալ համաշխարհային կառավարության գաղափարի շորք: Այնուամենայնիվ դրա ծրագրությունները այն համարում են իրականանալի: Այդ խնդիրը կանխատեսողներից մեկը տվել է նաև դրա լուծումը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախագահ դր. Բրոր Քիսումը այդ առիթով հայտարարել է. «Որպեսզի իրականացվի Համաշխարհային կառավարության գաղափարը, անհրաժեշտ է նարդկանց նորերից հանել անհատականությունը, ընտանեկան ավանդույթներին հավատարիմ մնալը, հայրենասիրությունը և կրոնական դրգմատիզմը. այն բարոյական իմքերը, որոնց շնորհիվ Ամերիկայի հանրապետությունը իր գոյր լրյան առաջին 150 տարում այդպիսի հաջողությունների հասավ»:

Ո-որդելերների հիմնադրամի նախագահ Ջոն Նոուլսը իր ամենամյա գեկույցում հայտարարեց. «Քանի որ առավել քարեկեցիկ ազգերը՝ վարժվել են խնայողաբար օգտագործել իրենց կարողությունը, ապա նրանցից կարելի է վերցնել ավելորդ հարստությունը և տալ ավելի կարիքավոր երկրներին»: Հենց այդ հարստության բաժանման մերողն է կոչվեց «Նոր համաշխարհային տնտեսական կարգեր» (այս տերմինը առաջին անգամ կիրառել է ԱՀ -ի անդամ, սենատոր Չարլզ Փերսին):

### Սոլոսկող բռնապետություն:

Ամերիկացիները միշտ կարծել են, թե իրենց երկրում հնարավոր չեն բռնապետություն հաստատել, քանի որ ամերիկյան սահմանադրությունը ունի վերահսկողության ու հավասարակշուրջան իրանակի համակարգ: Կառավարության երեք ճյուղերից յուրաքանչյուրը իրավունք ունի վերահսկելու մնացած երկուսի գործունեությունը: Սահմանադրության մեջ այս դրույթը պատահականորեն չի ներառվել: Դաշնային թղթերում Զեյմս Սելիստնը գրում է. «Օրենսդիր, գործադիր և դատական ամրող իշխանության կենտրոնացումը նույն ձեռքում՝ լինի դա մեկ անհատ, մի քանի հոգի թե քաղում մարդիկ, կամ լինի դա ժառանգական, ինքնանշանակ թե ընտրովի, միանշանակորեն կհան-

գեցնի բռնապետության»: Սակայն Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը իր անդամների միջոցով կենտրոնացնում է հենց այնպիսի բռնապետական ուժ, ինչից որ վախենում էր Սելիստնը:

### Վերահսկվող ՁԼՄ-ներ:

Որն է պատճառը, որ ամերիկացիները այդքան նվազ տեղեկություններ ունեն ԱՀ -ի անձն հսկայական գործունեության որուր ունեցող կազմակերպության մասին: Ինչպես է հնարավոր, որ ամերիկյան համակարգը ոչնչացնելի ծգոտող և Ամերիկան դեպի մարքսիստական մղձավանց առաջնորդող կազմակերպությունը ծեռք բերի այդպիսի մեծ վերահսկողական ազդեցությունը՝ առանց ժողովրդի իմացության: Եվ ինչու՞ կարծեցյալ «խիզգախ» լրատվամիջոցները չեն լրարանել այս խնդիրը:

Պատասխանը հետևյալն է. ուղեն լվացող ՁԼՄ-ները միայն հազվադեպ են հաղորդում որևէ նյութ՝ կապված ԱՀ -ի հետ, որովհետև լրատվամիջոցների հարյուրավոր լրագրողների անուններ գտնվում են ԱՀ -ի անդամների ցուցակներում:

Ներկայացնում ենք այդ ցուցակներից հայտնիներին:

### Տպագիր մամուլ

Վաշինգտոն Փոստ.

Չերքին Գրահամ-սեփականատեր,

Ռիչարդ Սմիթ-փոխտնօրեն,

Ո-որերտ Չեյզեր-գլխավոր խմբագիր:

### Նյու Յորք Թայմս.

Ռիչարդ Գելբ- վարչության անդամ,

Զոգեֆ Լելիվելդ-գործադիր խմբագիր,

Չեք Ռոգենբալ- օժանդակ խմբագիր:

Նյու Յորք Փոստ, Բուքրոն Գլոր, Լու Անջելես Թայմս, Յու Էս Նյույ և Ուորդ Ռեփորտ, Թայմ, Նյույուիք, Ամերիկան Սփերքաթոր, Դոու Ջոնս և Ուոլթ Սքրիփ Զուրնալ:

## Յերուսալեմություն

CBS, NBC, ABC, CNN, Թայմ Ուորներ, Հանրային հեռարձակման ընկերակցություն, Ուոլք Դիսնեյ ընկ.:

## Յերուսալեմությին հաղորդավարներ

Թոմ Բրոքոն, Դայան Սոյեր, Բարբարա Ուոլքերս, Ջեյմս Լեիրեր, Ուիլյամ Բարլի կրտսեր, Մորրոն Քոնդրեյր, Զերալդին Ֆերրարո, Ջես Չերսոն, Բենարդ Ջալը, Բիլ Շնայդեր, Ֆրենք Սեսն, Դեն Ռաքեր, Թոնի Սնոու, Դեյվիդ Բրինըին:

## Կառավարություն

### Գործադիր.

Բիլ Ջինըոն, Սալլեն Օլբրայր, Սքրոք Թելլոր, Ռոբերը Ռութին, գեներալ Բարի Մար Քեֆրի, Դոննա Շալարա, Բրյուս Բերբիր, Բորիս Մայսներ, Ալան Գրինսփան, Ալիս Ռիվլին:

### Օրենսդիր. ծերակույտ (սենատ)

Ջրիս Դոդդ, Բոր Գրահամ, Ջոն Քերրի, Ջո Լիբերման, Դանիել Սոյնհիհան, Չարլզ Ռոք, Ջոն Ռոբերթսը, Ուիլյամ Ռոք, Չարլզ Շումեր, Օլիմպիա Սնոու, Բոր Տորիչելի, Չար Հեգը:

### Սպիտակ Տուն.

Ռիչարդ Գեֆարդ, Հոուարդ Բերման, Բերնի Ֆրենք, Սեմ Գեջենսոն, Ջիմ Լիչ, Սյուզան Մոլինարի, Չարլզ Ռենչել, Լուիս Սրոուր:

### Դատական իշխանություն (Գերազուն Դատարան).

Սանդրա Դեյ Օքննոր, Ռոք Բադեր Գինսբուրգ, Սքիվեն Գ. Բրեյեր:

## Զինված Ուժեր

Ուիլյամ Քոհեն – պաշտպանության քարտուղար գեներալ Ուևսի Քլարք  
Փոլ Սթեփն-ուազմաօլյային ուժերի ակադեմիա

## Հանրային ոստիկանական կազմակերպություններ

Չորջ Շուլց, Ալեքսանդր Հեյզ, Քոյին Փաուել, Դեյվիդ Գերգին, Դիք Չեյնի, Իրվինգ Ռ. Լեվայն, Էնդրյու Յանգ, Բիլ Ջրիսթոլ, Ջեյն Քիրք Վիարդիք, Ջրիգնիս Բժեզինսկի:

### Գաղտնիությունը:

Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը այսօր ամերիկյան ժողովրդի համար առեղծված ու չբացահայտված գաղտնի ուժ է ննում նաև այն պատճառով, որ այդ կազմակերպության կանոնադրության մեջ (կանոնադրության երկրորդ հոդվածը) ամրագրված է գաղտնիության սկզբունքը: Այդ սկզբունքի համաձայն Արտաքին Հարաբերությունների Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է գաղտնի պահել կազմակերպության ժողովներին վերաբերվող տվյալները: Յուրաքանչյուր ոք, ով կխախտի նշված պայմանը, ենթակա է անհապաղ վտարումի:

Արտաքին Հարաբերությունների Խորհրդի պաշտոնական տպագիր օրգանը համարվում է «Արտաքին Գործեր» անվանումով պարբերականը: Այն չի տպագրվում համապատասխան սպառման համար, այլ կազմակերպության կիսազարտնի անդամների, ինչպես նաև ակադեմիական ու գիտական շրջանակների համար: Այդ փաստը այնուամենայնիվ հնարավոր է դարձնում նշված պարբերականի հետ ծանոքանալը:

### Գաղտնի դեկավարությունը:

Կազմակերպության դեկավարությունը պարբերաբար հայտարարում է, թե այն չի մասնակցում մեր երկրի (Ամերիկայի) արտաքին քաղաքանության ուղղորդման գործընթացին: Սակայն դեռ այն ժամանակ, եթե քննարկվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքանության փոփոխման միտունները, Արտաքին Հարաբերությունների Խորհրդի խոսնակ Փիթեր Գ. Պետերսոնը կազմակերպության 1989թ.-ի ամենամյա գեկույցում հայտարարեց. «Արտաքին

Հարաբերությունների Խորհուրդը պետք է մասնակցություն ունենա Ամերիկայի Միացյալ Նահանգների նոր արտարին քաղաքականության օրակարգային ուղղված որոշելու գործընթացին»:

Հարց է ծագում, եթե Արտարին Հարաբերությունների Խորհուրդը իրոք արտարին քաղաքականությունը համակարգելու ժամկետը չունի, ինչպես է պատրաստվում մասնակցել դրա ուղղված որոշելու գործընթացին: «Պատասխան՝ դա հնարավոր չէ: Արտարին Հարաբերությունների Խորհրդի կողմից ցանկացած պնդում այն կապակցությամբ, թե իրենց կազմակերպությունը ընդամենը բաց խորհրդը է ցանկացած զաղափարի քննարկման համար, պարզապես ցնդարձնություն է: Վաշինգտոնի Փոստի թրավկից Ռիչարդ Հարվուդը իր մի հոդվածում թվարկել է մի շարք ԱՀ -ի անդամ լրագրողների, որոնք իր ծևակերպմանը «ոչ թե միայն մեկնարանում ու վերլուծում են արտարին քաղաքականությունը, այլ ուղղակի կերպով օժանդակում են դրա իրականացմանը»:

Արտարին Հարաբերությունների Խորհրդի գործունեությանը իրենց մասնակցությունն են թերում նախագահի աշխատակազմի աշխատակիցներ, կոնգրեսականներ, քարդարաստիճան գիմփորականներ և կառավարության այլ անդամներ: Մի ինչ որ մասնավոր կազմակերպության շահերի պաշտպանության համար տեղի ունեցող այդպիսի զաղտնի հավաքույթները, այն էլ այնպիսի մի կազմակերպության, որի հիմնադիրը Վուդր Վիլսոնի գիտակոր խորհրդական Եղուարդ Մանդելն էր (որի երազանքը «Կարլ Մարքսի փափազած սոցիալիզմի կառուցման» էր) լիովին հակամետ է ազատ երկրի քաղաքացիներին վայել վարքագին:

Արտարին Հարաբերությունների Խորհրդի յուրաքանչյուր անդամի հրահանգված է ծերազատված լինել ցանկացած որոշակի հայացքներ կրելուց: Փոխարենը կառավարության անդամները և հանրահայտ լրագրողները կուտակում են անհրաժեշտ հեղինակություն՝ պետք եղած պահին իրենց հակառակ տեսակետի նկատմամբ ժխտողականության ու արմամարհանքի զանազան մակարդակները ցուցաբերելու համար: Փառանդ քաղաքական գործիչները, լրագրողները, իշխանական կազմակերպությունները, մտավորականները և այլ անպատճախանակություն կերպով ստանձնում են իրենց համար պատրաստված դիրքեց՝ հաճախ տեղյակ չլինելով նույնիսկ, թե ո՞ն կեցվածքն են կրկնօրինակում: Այս կերպով է, որ օրակարգը իրոք կայացել է և քաղաքականությունները հաստատվել:

Հիմնական զաղափարների անշան կերպով փոփոխված տարբե-

րակները որպես կանոն ողջունվում ու խրախուսվում են, սակայն գյուղություն ունեն որոշակի խստորեն ամրագրված սահմաններ, որոնցից որու եկող զաղափարների նկատմամբ սկսվում է արհամարհանքի ու ծաղրի աննախադեպ արշավ: Օրինակ, ԱՄՆ-ի կողմից ՍՍԿ-ին կամ այլ միջազգային օժանդակող կազմակերպություններին տրվող օգնության շափերի նվազեցման կամ ավելացման վերաբերյալ քննարկումներն ու քանակեցները հանդուրժվում և նույնիսկ խրախուսվում են: Սակայն եթե որևէ մեկը փորձի հարց բարձրացնել աշխարհի «մարմնից» Ամերիկային են քաշելու, կամ այլ երկրներին տրվող նյութական օգնությունները դադարեցնելու մասին, ապա նա ժողովրդի ամենահեղինակավոր անձանց առաջ լրցորեն կվտանգի իր վարկանիշը: Դրանք այն անձինք են, որոնք գրադաւում են ուժի, իշխանության աճուրդով, կամ ավելի ծիշտ կլինի ասել՝ «քրոնկերությամբ»: Ժողովրդի աշջում այս կամ այն անհատին բարձրացնելը կամ վարկարեկելը հիմնականում այդպիսի մարդկանց ծեռքն է:

Այս մարդիկ, ովքեր կարում են Արտարին Հարաբերությունների Խորհրդի կողմից հրատարակված պարբերականները կամ տեղեկանում նրա կողմից վերահսկվող ինֆորմացիոն միջոցների առաջնային հաղորդումներին, հաստատապես տեղյակ են, թե որոնք են ԱՀ -ի կողմից առավել ընդունված դիրքորոշումները: Արտարին Հարաբերությունների Խորհրդը և դրա կարգի այլ կազմակերպությունները ըստ ամենային առաջ են քաշում և պաշտպանում են հետևյալ պետական-քաղաքական կեցվածքները. Կնքել առավելագույն քանակությամբ դաշնագրեր, պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնք կվարկարեկեն ԱՄՆ-ի ինքնիշխանությունը, շարունակել ՍՍԿ-ի անընդհատ գովարանությունը և խորացնել վստահությունը նրա նկատմամբ, աստիճանաբար ՍՍԿ-ի վերահսկողության տակ տեղափոխել ԱՄՆ-ի գինված ուժերը, արդյականացնել ԱՄՆ-ի կողմից տրվող միջազգային օգնությունները և ծրագրել նորերը, ասպարեցից հեռացնել և մեկուսացնել յուրաքանչյուր ազգային մտածելակերպով քաղաքական գործչի, որը հակված չի սոցիալիզմի և «Համաշխարհային նոր կարգեր» հասկացության ներքո համաշխարհային կառավարության մեջ մտնելու զաղափարին, հնազանդեպել էկոլոգիական ծայրահեղականությանը, մարդու իրավունքների առաջամարտիկներին ու բնակչության պլանավորման գործակալություններին, որոնց առաջ քաշած զաղափարները երեք չեն բավարարվի քանի դեռ ԱՄՆ-ն չի վերականգնել իր ազատությունն ու անկախությունը:

Այս քաղաքական կուրսին հետևող մարդիկ աներկայորեն օժանդա-

կում են Կարլ Մարքսի և Արտարին Հարաբերությունների Խորհրդի հիմնադիմությունը և նպատակների իրագործմանը: Բայց ներկա քաղաքական դաշտում առկա այն գործիչները, ովքեր ընդդիմանում են հիշյալ քաղաքական ուղղություն, հիմնականում ինքնակոչ ածինք են, որոնց նպատակը միայն վերընտրվելու ու կարիերայում առաջխաղացումն է: Նրանք շատ էլ մտահոգված չեն Սահմանադրությունով կամ ժողովրդի ապագայով ու ընդհանրապես ազատությամբ:

Ամերիկայի Միացյալ Նահանգները Արտարին Հարաբերությունների Խորհրդի հիմնադրությունը առաջ դիտարկվում էր որպես «քարի» երկիր: Ամերիկայի կողմից այլ երկների ներքին գործերին միջամտելը նրան ոչինչ չտվեց, բացի իր հանդեպ աշխարհի օրեցօր աճող ատելությունը:

1919թ. իր սկզբնավորման օրից Արտարին Հարաբերությունների Խորհրդը աննկատելիորեն իրականացնում է Ամերիկայի վերափոխումը դեպի մի հսկայական գործիքի՝ նրա ինքնիշխանությունը ծառայեցնելով համաշխարհային կառավարության գաղափարի իրականացման օգուին:

Փաստորեն երկրորդ համաշխարհային պատերազմից սկսած Ամերիկայի Միացյալ Նահանգները բռն տեղի ունեցող նախազահական ընտրարշավներում ընդգրկված նախազահները, նրանց տեղակամերն ու աշխատակազմի մեծ մասը Արտարին Հարաբերությունների Խորհրդի անդամներ են լինում: Դա վերաբերվում է նաև 2000թ.-ի նախազահական ընտրություններին:

Ըստ Էռյան Արտարին Հարաբերությունների Խորհրդուր հանդիսանում է ճիշտ կրկնօրինակը 1900-ական թվականների սկզբներին ՚ի հայտ եկած մարքսիստական գաղափարները պրոպագանդող շարժումների, որոնք աշխարհի բարեփոխման լավագույն ծրագրային տարրերակ էին համարում Մարքսիզմը: Նրանք նվազ քանակությամբ էին, սակայն ի շնորհիվ լավ ծրագրված խարեւության ու համակարգվածության, 1917 շատերին համոզեցին տապալել ցարական կարգերը Ռուսաստանում: Այդ ուժերը հեղափոխության ընթացքում սպանեցին ոչ միայն ցարին ու նրա ընտանիքը, այլ նաև միլիոնավոր անմեղ մարդկանց, որոնք իրենց հայցըներով հակադրվում էին մարքսիստական գաղափարախոսությանը: «Հեղափոխականները» առաջ քաշեցին աշխարհում մինչ այդ լսված մի տնտեսական համակարգ՝ տցիալիզմ, որը ի վերջո տապալվեց շոնդակի կերպով՝ իր հետևի բոլնելով միլիոնավոր թշվառ, տառապայալ ու հուսահատ քաղմություններ, որոնք դաստիարակվել էին հենց այդ սիստեմի կողմից շահարկվող հավասարության ու արդարության սկզբունքներով:

Այլ խոսքերով մարքսիզմի առաջամարտիկները կարծեցյալ չարիքը փոխարինեցին իրենց սեփական շարիքով:

Գոյություն ունեն նաև այլ համանման կազմակերպություններ, որոնք նպատակաուղղված են «Համաշխարհային կառավարության» գաղափարի իրականացմանը: Դրանցից են «Եռակողմ հանձնաժողով» անվանյալ կազմակերպությունը, որը հիմնադրել են 1972թ. հուլիսի 23-ին Դեյվիդ Ռոքֆելլերը և «Քիլթերքերգներ» կազմակերպությունը (հիմնադրվել է Հոլլանդիայի արքայազն Բերնհարդի կողմից 1954թ.-ին):

Այս հողվածի նպատակն է ամերիկյան ժողովրդի առաջ մերկացնել Արտարին Հարաբերությունների Խորհրդի գործունեությունը, որպեսզի հնարավոր լինի կանխել Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրապետության ինքնիշխանության կորուսը, հանրապետության, որի հիմնադրի հայրերը այնքան խնաճրով ու իմաստությամբ են դրել նրա հիմնքերը:

## ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային կառավարության գաղափարը մարդու դարավոր երազանքներից մեկն է: Եթ դրա իրականացման գործընթացը սկիզբ առավ 1889թ. մի ճմեռային առավոտ, երբ երեք հարգարժան պարունայք Լոնդոնում՝ Անգլիայում, մի կարևորագույն գրույի բռնվեցին: Հավաքածների առաջնորդը Սեսիլ Ռոդեսն էր, որը կարևորագույն անձնավորություն էր Հարավային Աֆրիկայում: Երկրորդը հանրահայտ լրագրող Ուլիյամ Թ. Սթեղն էր, իսկ երրորդը Ռեժինալ Բալիու Բրեթն էր, որը հետազույն հայտնի դարձավ որպես Լորդ Էշեր: Վերջինս Վիկտորիա թագուհու ընկերն ու վստահելի անձն էր և հետազույն դարձավ նաև թագավորներ Էդուարդ 7-րդի և Գ-րորդ 5-րդի ամենաազդեցիկ խորհրդատուն: Այդ խոսակցության հետևանքները մեծ ազդեցություն էին ունենալու Բրիտանական կայսրության և ամբողջ աշխարհի ապագայի վրա:

Սեսիլ Ռոդեսը առասպելական հարստության տեր անձնավորություն էր: Նա կառավարում էր Հարավային Աֆրիկան՝ անգրութն հարստահարելով տեղացի սևամորքներին ու օգտագործելով նրանց հողերը: Սևամորք ազգաբնակչությունը միայն տեսականորեն էր կանգնած երկրի գլուխ, իսկ փաստացիորեն այդ պետությունը կառավարվում էր երոպական ու ամերիկյան էլիտան: Դրանք երկրի կառավարումը իրականացնում էին իրենց կողմից նշանակված խամաճիկ նախագահների միջոցով: Հարավային Աֆրիկային անկախությունը փաստորեն խարուսիկ էր:

Սեսիլ Ռոդեսը անդամագրված էր Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների քարձրաշխարհիկ շրջանավարտների կողմից հիմնված մի խմբակի: Նրանք հանդիսանում էին ուլուրա սոցիալիստական հայցըների տեր պրոֆեսոր Ջոն Ռուկինի հետևորդները: Վերջինիս հետ էլ հիշյալ խմբակը կազմակերպեց այսպես կոչված «Գաղտնի հասարակություն», որը վերջնականապես ձևավորվեց 1902թ.-ին՝ Սեսիլ Ռոդեսի մահվանից հետո: Իր՝ «Համընդհանուր Հայացքի» իրականացմանը ուղղված Ռոդեսի հիմնական քայլերից մեկը աշխարհի տարրեր մասնից հավաքագրված շնորհալի երտասարդներին Օքսֆորդի համալսարանում կրթություն ստանալու հնարավորության տրամադրումն էր: Այդ քայլի նպատակը Համաշխարհային կառավարության Ռոդեսի երազանքի սերմանումն էր նրանց մեջ: Նա ընդունում էր, որ իր ծրագի-

րը համայն աշխարհի կառավարության ստեղծելու դավադրություն էր: Ռոդեսը նախատեսում էր ստեղծել աշխարհի կառավարման մի մարմնին, որն իր ծեռորում կունենար անհաղթահարելի գիված ուժեր:

Ռոդեսի կտակով իր հսկայական կարողությունը խնամակալությամբ հանձնվում էր Ֆրանկմասոն Նարան Ռոտչիլդին՝ պայմանով, որ այդ միջոցները կուղղվեն ամբողջ աշխարհով մեկ օժանդակելու Ռոդեսի հետևորդներին, որոնք կպայքարեն իր ծրագրերի իրականացման համար: Ռոդեսի ցանկությամբ Նարան Ռոտչիլդը գաղտնի հասարակության դեկավար է կարգում Ֆրանկմասոն Ալֆրեդ Սիլմերին:

Իր նշանակումից հետո Սիլմերը Օքսֆորդից և Թոնիից Հոլից հայքագրում է երիտասարդ կաղըեր, որպես օժանդակ ուժեր նոր հասարակության կառուցման համար: Բոլոր նորակոչիկներն էլ անխտիր անգլիական Ֆրանկմասոններ էին: Դրանցից էին Արքուր Բալֆուրը, Ռուդյարդ Լիփիմզը, Լորդ Ռոտչիլդը և ուրիշներ, որոնց ժամանակին անվանում էին «Սիլմերի մանկապարտեզ»: Հենց այդ խումբն էր, որ մի քանի այլ անգլիական մաստների հետ 1909թ. հիմնեց «Կլոր սեղան» կազմակերպությունը, որը հանդիսացավ մի շարք այլ անգլիական մաստնական կազմակերպությունների նախահայրը: «Կլոր սեղանից» առաջացած երեք հիմնական ճյուղերն են.

ա. Արտաքին գործոց քագավորական ինստիտուտը, որը կազմակորվել է 1919թ. Լոնդոնում,

բ. Արտաքին հարաբերությունների խորհուրդը՝ կազմավորված 1921թ. Նյու Յորքում,

գ. Խաղաղօվկիանոսյան հարաբերությունների ինստիտուտ, որը կազմավորվել է 1925թ. տասներկու երկրների ներգրավմանը, որի պատճառով կոչվեց նաև խաղաղօվկիանոսյան եզերը:

Նշանակած կազմակերպությունների նպատակը Անգլիայի ու Ամերիկայի արտաքին քաղաքականություններին որոշակի ուղղորդում տալն էր, որի վերջնանապատակներն էին.

ստեղծել և իրենց դեկավարության ներք հաստատել մեկ աշխարհական մի կառավարություն՝ մի միասնական եկեղեցով և դրամական համակարգով,

հիմնովին վերացնել ազգային ինքնազիտակցության ու ազգային հպարտության երևոյթները, դա առաջնային պայման կարելի է համարել համաշխարհային կառավարության գաղափարը իրագործելու համար, նախաձեռնել առկա կրոնների՝ մասնավորապես քրիստոնեության

վերացումը՝ բացառությամբ կրոնի իրենց ներկայացրած տարրերակի:

Զանգվածային լրատվական միջոցների օգնությամբ նրբուն իրենց ազդեցությանը ենթարկել յուրաքանչյուր անհատի:

Խրախոսել և աստիճանաբար օրինակնացնել քմրադեղերի օգտագործումը և պոռնոգրաֆիան որպես «արվեստի ձև» ընկալումը և հասարակության համար սրանք ընկալելի դարձնել որպես սովորական երևույթ:

Թուլացնել ազգերի բարոյական ջիղը, գործադումների միջոցով բարյալել և իրենց աշխատանքային կարգից զրկել բանվորներին՝ դրանով իսկ նրանց դրեխով ակնողությունը ու քմրանյութերի օգտագործմանը: Թմրադեղերի ու ոռք երաժշտության միջոցով խրախոսել աշխարհի երիտասարդությանը ընդվելու հասարակության դեմ՝ դրանով իսկ բայրայելով ընտանիքը:

Թափանցել աշխարհի բոլոր կառավարությունների մեջ՝ քայլայելով ժողովուրդների ազգային ամբողջականությունը և ազատության ու անկախության ձգումները: Ազգայնականությունը և հայրենասիրությունը համարվում են նրանց զվարկոր թշնամիները:

1796թ. սեպտեմբերի 17-ին Զորջ Վաշինգտոնը ժողովրդին ուղղված իր հրաժեշտի ելույթում հայտարա թեց. «Մեր ճիշտ քաղաքականությունը պահանջում է խոսափել արտաքին աշխարհի ցանկացած հատվածի մշտական դաշնակիցը լինելուց»: Դրանով նա ամերիկյան ժողովրդին զգուշացնում էր խոսափել Երոպայի գործերին միջամտելուց: Նա հասկանում էր, որ Ամերիկան այլ երկրների ներքին գործերին միջամրտելու դեպքում անպայմանորեն ծեռք կրելի բազմաթիվ թշնամիներ:

Սակայն 1914թ.-ին կատարվեց այդ խորհրդին հակառակ քայլ: Ռուսի հետևորդներն արդեն թափանցել էին աշխարհի տարրեր երկրների կառավարությունների մեջ և նրանց ծանրացրել Ռուսի մեջ աշխարհական կառավարության գաղափարին:

Մինչև 1914թ. առաջին համաշխարհային պատերազմը Ամերիկան պահպանում էր իր չեզորությունը համաշխարհային խոչըր սկանդալներում:

Առաջին անգամ «համընդիանուր անվտանգության» սկզբունքի շուրջ համաշխարհային մի մարմնի ստեղծման գաղափարը առաջ եկավ առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919թ.-ին, երբ նախագահ Վոլոր Վիլսոնը հոչակեց «Ազգերի լիգայի» ստեղծման մասին: Սակայն այդ ժամանակ Ամերիկան դեռևս պատրաստ չէր հրա-

ժարվել իր ինքնիշխանությունից և վտանգել իր սահմանդրությունը:

Միացյալ Նահանգների ծերակույտը առաջին համաշխարհային պատերազմից հետո չհամաձայնեց վավերացնել Ազգերի Լիգայի ստեղծման մասին համաձայնագիրը: Ամերիկյան ժողովուրդը կասկածով էր վերաբերում մշտական խարդավանքների մեջ գունդող երոպական ուժերի գործերին միջամտելուն և գերտերության կարգավիճակ ձեռք բերելուն: Նրանք պարզուեն տեսնում էին «խաղաղության» գայթակից ու բարդ համաձայնագրերի իրական բնույթը: Ամերիկացիները հասկանում էին, որ ցանկացած լիգա, որը կունենա այնքան ուժ, որ կկարողանա «պարտադրել» խաղաղությունը, չի կարող իր առջև չունենալ համաշխարհային բռնասիրության հաստատման հեռանկար: Եւ որ այնուհետև ոչ մի ուժ չի կարող սահմանափակել դրա գործունեությունը:

Հարժելով Վաշինգտոնի տված խորհրդի ուղիղ հակադիր ուղով, Վոլոր Վիլսոնի կառավարության անդամները, նաևնավորապես պետական քարտուղար Ռիչարդ Ֆրայնը, Ամերիկան ներքաշեցին Առաջին համաշխարհային պատերազմի հորձանուտները: Դա նորաստեծ «Արտաքին Հարաբերությունների Խորհրդի» համար իրաշալի առիթ էր՝ առաջ քաշելու համաշխարհային կառավարության գաղափարը որպես աշխարհում առկա հակամարտությունների լուծման լավագույն տարբերակ: Արտաքին հարաբերությունների խորհուրդը կազմավորել են 1921թ. հունիսի 29-ին մի խումբ «մտավորականներ», որոնք գտնում էին, որ անհրաժեշտություն է առաջացել ստեղծել ազգային բնույթ չունեցող համաշխարհային մի կառավարություն: Սակայն Ամերիկան պատրաստ չէր դրան: Քանի որ Արտաքին Հարաբերությունների Խորհուրդը կիսագաղտնի կազմակերպություն էր, ամերիկյան ժողովուրդը ի վիճակի չէր հետևել համաշխարհային կառավարության հաստատմանն ուղղված դրա նրբին ու դաշտայի բայլերին:

Դժվարացույն խնդիր էր աշխարհի ժողովուրդներին համոզել իրաժարվելու իրենց ինքնիշխանությունից և ընդունել համաշխարհային կառավարության գերիշխանությունը: Այնուամենայնիվ այդ գործը ծրագրողները այն չէին համարում անհրականանալի: Այդ հարցը առաջ քաշողներից մեկը առաջարկել է նաև դրա լուծումը: Դա Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության նախագահ դոկտոր Բրոք Քիսոլմն է, որը հայտարարել է. «Որպեսզի համաշխարհային կառավարության մտահղացումը ի կատար ածվի, անհրաժեշտ

է մարդկանց մոտ վերացնել նրանց անհատականությունը, հայրենասիրությունը, ընտանիքի ավանդույթներին նվիրվածությունը, կրոնական դոգմաները. մի խոսքով այն բոլոր գործոնները, որոնք իր գոյության առաջին 150 տարում Ամերիկան դարձրեցին ծաղկող ու բարգավաճ»:

Բոլոր նրանք, ովքեր կարդում են Արտաքին Հարաբերությունների Խորհրդի եռամսյա օրգան «Արտաքին գործերը» կամ ծանոթանում են ԱՀ -ի կողմից վերահսկվող ամերիկյան ՉԼՍ-ների հաղորդումներին, անպայման կիմանան, թե որոնք են այդ կազմակերպության կողմից ընդունելի և քարոզվող քաղաքական հայացքները։ Այդ հայացքները մոտավորապես հետևյալներն են։

Հնարավորինս ավելի շատ կնքել ԱՄՆ-ի ինքնիշխանությունը շեզոքացնող համաձայնագրերու ու պայմանագրերու։

Շարունակել գովարանել ՍԱԿ-ը՝ նրա նկատմամբ փստահության ավելացման նպատակով։

ԱՄՆ զիված ուժերը հատված առ հատված հանձնել ՍԱԿ-ի հսկողությանն ու հրամանատարությանը։

Ավելացնել ԱՄՆ-ի կողմից այլ երկուներին տրվող օգնությունները (կաշառակերությունը) և հավելել նորերը։

Շեզոքացնել ու մեկուսացնել բոլոր այն ազգային առաջնորդներին, ովքեր կողմնակից չեն համաշխարհային նոր կարգերի ներքո համաշխարհային կառավարության գաղափարին։

Ենթարկվել ծայրահեղական բնապահպանների, բնակչության պլանավորման գործակալությունների, մարդու իրավունքների պաշտպանների արմատական պահանջմներին, որոնց վերջնանպատակը Ամերիկայի՝ որպես ազատ ու անկախ պետության, վերացումն է։

### Միացյալ ազգերի կազմակերպություն։

Միացյալ ազգերի կազմակերպությունը գոյություն ունի արդեն կես դար, սակայն նրա արմատներն ու նպատակները դեռևս շատ քիչ են հասկանալի։

Ներկայացված միայն թերևակիորեն շոշափում է ՍԱԿ-ի իրական համակարգը և նպատակները։

ՍԱԿ-ի կազմակերպման սկզբնական ծրագրերը առաջ են քաշվել 1943թ.-ին Սան Ֆրանցիսկոյում ՍԱԿ-ի հիմնադիր համագումարի ժամանակ՝ ԱՄՆ նախագահ Ռուզվելտի պետքարտուղար Քորդի Հալլի

նախաձեռնած կառավարական գաղտնի մի կազմակերպության՝ ոչ պաշտոնական օրակարգային խմբի (Informal Agenda Group) կողմից։

Փաստորեն հիմնադիր համգումարի բոլոր 43 անդամները միաժամանակ Արտաքին Հարաբերությունների Խորհրդի անդամներ էին։ Ավելին, զիսավոր քարտուղարի պաշտոնին ներկայացված Ալջեր Հալլը նաև ընդհատակյա Մարքսիստ էր և խորհրդային գործակալ։ Հենց վերջինն էլ ներկայացրեց ՍԱԿ-ի կանոնադրությունը։

Չոն Ֆոստեր Դալլը, որը Արտաքին Հարաբերությունների Խորհրդի հիմնադիր անդամներից էր և կանգնած էր նաև ՍԱԿ-ի կազմավորման գործի ակունքներում, 1953թ. դարձավ ԱՄՆ նախագահ Այզենհաուերի պետական քարտուղարը։ Նա մասնակից անդամ է եղել նաև 1919թ. ապրիլի 29-ին Փարիզում կայացած Ազգերի լիգայի համաժողովին, որտեղ նրա զաղափարների նկատմամբ համաժողովով ազգային մտածելակերպով անդամների ատելությունն էլ պատճառ դարձավ Ազգերի լիգայի նկատմամբ ժիտական վերաբերմունքի առաջացմանը։ Այնտեղից ուղենորդվելով Օքսֆորդ, նա հայտնվեց միանգամայն այլ մքնուղրտում։ Այստեղ նա Սեսիլ Ռոդեսի զաղափարների ազդեցությամբ եկավ այն եզրակացության, որ քրիստոնեական հավատը կարող է լրաց խոչնդու հանդիսանալ համաշխարհային կառավարության զաղափարի իրականացման համար։

Քրիստոնեությունը ոչ մի իրական դեր չի ունեցել Չոն Ֆոստեր Դալլի կյանքում։ Սակայն նա հանգում է այն նորին, որ «Համաշխարհային խաղաղության» դիմակի տակ կարելի է քրիստոնեական նկեղեցիները օգտագործել ի նպաստ մեկ աշխարհական կառավարության վերջնանպատակի։ Հենց այդ գաղափարից նոյնական նա ծեռանուխ է լինում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Ազգային նկեղեցիների խորհրդի ստեղծմանը։ Դալլը երկի թե ամենանշանավոր գործականներից է, ովքեր սկսեցին իրական քրիստոնեական հավատքի վերափոխման գործընթացը՝ այն դարձնելով գործիք՝ մեկ աշխարհական սորեկալան համակարգին ուղղված հասարակական վերափոխմանը քարոզելու համար։ Դալլը ծայրահետ ազատական հակառագիստրունեական մի խմբի՝ Եկեղեցիների դաշնային խորհրդի առաջնորդն էր։ Հենց այդ կազմակերպությունն էլ հիմք հանդիսացավ Եկեղեցիների ազգային խորհրդի (National Council of Churches) ստեղծման համար։ Դալլը, զգտելով Եկեղեցին տարանջատել Աստվածաշնչից, զգուում էր նույն փիլիսոփայությունը ներմուծել նաև ամերիկյան դիվա-

նագիտուրյան մեջ:

ՍԱԿ-ի այժմ գործող բոլոր գործակալությունները թվելը չափազանց դժվար գործ կլինի, այդ պատճառով եկեք միայն անդրադառնանք դրանցից մի քանիսի գործունեությանը:

Միացյալ ազգերի կազմակերպության երեխաների հիմնադրամ (UNISEF):

Միացյալ ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակութային կազմակերպություն (UNESCO):

UNISEF-ի երեխաների հարցերով հետարրբության բուն պատճառը կարող է անակընկալ լինել բազմաթիվ մարդկանց համար: Եթե UNISEF-ը և UNESCO-ն, որոնք հանդիսանում են ՍԱԿ-ի ամենաազդեցիկ կազմակերպություններից, իրենց պատմության ընթացքում երեխաներին բաղաքական նպատակներով շահագործելով՝ բազմաթիվ դեպքեր ունեն: Ցուցադրական բարեգրության տակ ՍԱԿ-ը բարցնում է իր իրական հայացքները երեխաների նկատմամբ, որոնց այդ կազմակերպությունը իրականում ընդունում է որպես պետական սեփականություն: ՍԱԿ-ի պաշտոնյանները ընտանիքները համարում են կառավարություններին մրցակից կառույցներ, որոնց մրցակցության առարկան երեխաների վստահությունն ու հավատարմությունն է: ՍԱԿ-ի հիմնական գործելառներից է երեխաների մեջ զորայիշտական գործընթացներից կախվածութ ուն ներշնչելը՝ միաժամանակ չենորացնելով նրանց բնական կապվածությունը ընտանիքին, հայրենիքին և ազատության ու ավանդական բարոյականության այլ սկզբունքներին:

ՍԱԿ-ը մեծապես հովանափորում է շարունակվող «սեռական հեղափոխության» խոտոր գաղափարները դպրոցական անմեղ երեխաների հոգեբանության մեջ ներմուծելու գործընթացը: Ավելին, UNISEF-ը մաս է կազմում մանկական պոռնոգրաֆիայի այլանդակ ցանցերին, որոնք, օգտվելով ՍԱԿ-ի վավերացրած անցարդերից, հնարավորություն են ստանում իրենց նողկալի բիզնեսի համար նոր զոհեր ճանկել: 1987թ.-ին Բելգիայի UNISEF-ի գրասենյակի ղեկավար Զոգեֆ Վերբեքը և UNISEF-ի կամավոր Միշել Ֆետուն ծերրակալվեցին Բրյուսելում՝ մեղադրվելով այն բանում, որ չարաշահելով իրենց գրասենյակի հնարավորությունները, զրադկել են մանկական պոռնոգրաֆիայի բիզնեսով: Նրանց միջազգային կազմակերպությունը կոչվում էր «Երեխաների և սերտության հետազոտության և տեղեկատվության կենտրոն» և նրանք հանդես էին գալիս UNISEF-ի նշանաբանով՝ «Ամեն երեխա մեր

երեխան է»:

ՍԱԿ-ի ամենաազդեցիկ մարմինը Անվտանգության խորհուրդն է: Այն կազմված է ՍԱԿ-ի 15 անդամ երկրներից, որոնցից 5-ը՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Չինաստան, Ռուսաստան և Սեծ Բրիտանիա, հանդիսանում են Անվտանգության խորհրդի նշտական անդամներ, մինչդեռ մասացած 10 անդամները ՍԱԿ-ի անդամ երկրներից ընտրվում են երկու տարի ժամկետով: ՍԱԿ-ի կանոնադրությամբ Անվտանգության խորհուրդը օժտված է և օրենսդիր և գործադիր իշխանությամբ: Խորհուրդը իրավունք ունի նաև քննարկելու ու հաստատելու որոշումներ, որոնք ըստ ՍԱԿ-ի տեսակետի օրենքի ուժ ունեն և պարտադիր են ՍԱԿ-ի անդամ բոլոր երկրների համար: Եթե որևէ պետություն չի ընդունում Անվտանգության խորհրդի հաստատած որոշումները և մերժում է կատարել դրանցով սահմանված պարտականությունները, Խորհուրդը, ըստ ՍԱԿ-ի կանոնադրության 41 և 42-րդ հոդվածների, իրավունք է ստանում ամեն տեսակի պատժամիջոցներ կիրառել օրենքը զանց առնողի դիմ՝ ընդունակ մինչև պատերազմ սանձազերծելու սարսափի տակ տվյալ երկրին պարտադիր ընդունելու նշված որոշումը:

Այլ խոսրով Անվտանգության խորհուրդը, ՍԱԿ-ի կանոնադրության համաձայն, վերջնական որոշողի իրավունք ունի ամեն կարգի միջազգային հակամարտությունների, ինչպես նաև ներքին տարածայնությունների նկատմամբ, եթե այն նշված դեպքերը համարում է «ապանիալիք խաղաղության համար», «փաղադրությունը խախտելու ուղղված քայլ», «ազբեսիա»: Անվտանգության խորհուրդը իրավասու է իր կանքը պարտադիրություն համար պատերազմ իրահրել՝ մեկ այլ պատերազմ կանխելու համար: Սա ուղարկի ծիծաղալի է հնչում մի կազմակերպության համար, որի նպատակն է խաղաղության պահպանումը:

ՆԱՏՕ-ն որպես ՍԱԿ-ի ռազմական ուժ:

ՍԱԿ-ի կանոնադրության 52-54-րդ հոդվածներում խոսվում է տարածաշրջանային կազմակերպություններ ստեղծելու մասին, ինեն այն պիսիք, ինչպիսին է ՆԱՏՕ-ն (The North Atlantic Treaty Organization): Այն ամերիկյան ժողովուրին ներկայացվում էր որպես ռազմական դաշինք, որը կազմակերպվել է խորհրդային զորքերի կողմից արևմտյան ուղղությամբ հնարավոր առաջադացումները արգելելու համար: ԱՄՆ ծերակույտը անմիջապես հավանության արժանացրեց ՆԱՏՕ-ի գաղափարը: Խորհրդային միության հավանական բայցայումից հե-

տո ՆԱՏՕ-ն նույնպես պետք է կազմալուծվեր, սակայն դրա հիմն դիրքների ծրագրերն այլ են:

1949թ. մարտի 19-ին ԱՄՆ պետքարտուղար Դեն Էյրսոնը (Արտիքին Հարաբերությունների Խորհրդի անդամ), հայտարարեց, որ պաշտամքիրը «ծրագրվել է, որպեսզի ամրացնի ՍԱԿ-ի հիմքերը», և այն «հավելյալ միջոց է ՍԱԿ-ի հզորացման համար»:

2002թ. ՆԱՏՕ-ին անդամագրվեցին ևս 7 պետուրյուններ, որով պահամների թիվը հասավ 26-ի: Փոքր պետուրյունները մտնում են ՆԱՏՕ-ի մեջ առավել ապահով լինելու համար: Սակայն նրանք չեն տակցում, որ ներկայում շատ թիշ ազգեր կան, որոնք ի վիճակի են մազրավել ՆԱՏՕ-ի հզորությանը: Իրականում այդ փոքր ազգերին մահկան դատավճռում են սոորագործ այնպես, ինչպես քունյա Սերբիան: Այսպես շարունակվելու դեպքում ՍԱԿ-ին անհրժեշտ կլինի առավել թիշ թվով ազգությունների ներգրավմամբ ստեղծվի իր սեփական ուազմական միավորումը:

1996թ. աշնանը Գերմանիայի նախկին արտգործնախարար Հան Դիտրիխ Գեները Վաշինգտոն Թայմզում տված հարցազրույցում հայտարարեց. «Բոսնիա զորք ուղարկելու ՆԱՏՕ-ի վճռը, որը հիմնված է ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի որշան վրա, կարելի է միայն ջունել»: Այդ օրվանից ՆԱՏՕ-ն ստանձնեց ՍԱԿ-ի ուազմական միավորի պարտականությունը և մինչև օրս էլ շարունակում է պահպանել պարզավիճակը:

ՆԱՏՕ-ի իրականացրած համընդիանուր ահարեկչության փառագործեն երևում է Սերբական պատերազմի ընթացքում տեղ գտնելով փաստերից:

Փիքսրուգի համալսարանի Ռուսաստանի և Արևելյան Եվրոպական ներքների հետազոտությունների կենտրոնի տօնքըն Ռոբերտ Հայրապետ ասում է, թե «պաշտոնական փաստարդերում շատ հաճախ հանդիպում էին քյուր տվյաներ»: Անդրադառնալով 100.000-500.000-ի հանդիպում ալբանացիներին կոտորելու հարցին, նա հայտարարում է, թե առ տվյալներն ուղղակի ծիծաղելի են: Մեկ այլ մասնագետ, Մասսաշուսեթսի տեխնոլոգիական համալսարանի քաղաքավիճության պրոֆեսորի Փոուլենը, որը մասնագիտացել է պատերազմների ուսումնական մեջ, ասում է, թե «անկախ վերահսկողության պակասի պահումը ՆԱՏՕ-ի ներկայացրած պատմություններում շատ հաճախ կոպտորեն խեղաքայութված է իրականությունը»: Նրա խոսքերով

SO-ն արդարանալու համար մեծ օգուտ է քաղում պատերազմի քատերաբեմը նկարագրող լուսանկարներից, որոնցում ներկայացվում են ողբերգական իրավիճակներ ու մարդիկ և դրա նպատակը իրենց սանձազերծած պատերազմի արդարացումն է»:

Հիշյալ պատերազմը հանգեցրեց ՆԱՏՕ-ի կողմից քրիստոնյա Սերբիայի ոչնչացմանը: Այսպես կոչված Կոտովյի ազատագրության բանակը (ԿԱԲ) սերտորեն համագործակցում էր ալբանական մարքսիստական նարկո-մաֆիայի ահարեկիչների հետ: Ամերիկայի Սիաջյալ Նահանգների ուազմավարական հիմնահարցերի ուսումնասիրման կենտերոնի (SIRIUS) նախագահ Քեն Ուորքսի խոսքերով. «Կոտովյի ազատագրության բանակի (ԿԱԲ) խալանական ուղղվածությունը հնարավորություն է տալիս բացատրել այդ կազմակերպության կապերը սառույան միլիոնատեր Օսամա թին Լայենի հետ: Կասկած չի կարող լինել այն հարցում, որ թին Լայենի գինակիցները եղել են Կոտովյուն և մս սնակցել են բուրք ալբանացիների կազմակորած ԿԱԲ-ի մարտիկներին գինելու, հանդերձավորելու և փարժեցնելու գործերին»:

Հարավսլավիայի ղեմ ՆԱՏՕ-ի իրականացրած պատերազմը իրականում ահարեկչական գործունեություն էր, որտեղ ՆԱՏՕ-ն բացահայտեց իր ամբողջատիրական նկրտումները: ԱՄՆ նախագահ Ջինընից սկսած ՆԱՏՕ-ի կողմից Սերբական ուղղիութեատության շենքի պարբերական օդային ուժահարումների փաստը իրենից ներկայացնում է ամբողջատիրության հիմնական սկզբունքներից մեկը. կառավարությունը, այս դեպքում ՆԱՏՕ-ի ղեկավար էլիտան, իրեն է վերապահում մարդկանց մտածողությունը որոշելու և բույլատրելու իրավունքը և պատժում է նրանց, ովքեր «Մորի ոճիր» են կատարում՝ այսինքն մտածում են այլ կերպ: Բելգրադում «Լոնդոն ինդրիենդենք» թերթի թղթակից Ռոբերտ Ֆիսը անդրադառնալով այս խնդրին, ասում է. «Այն, սերբական հեռուստատեսությունը կարող է լինել ատելի, վատ, սխալ, այն սեփականաշնորհվել է կառավարության կողմից: Սակայն եթե դր մարդկանց կոտորում ես միայն այն բանի համար, որ չես հավանում նրանց ասածները, ապա դու խախտում ես պատերազմի օրենքները»:

Պատերազմը քրիստոնյա Սերբիայի ծրագրած ոչնչացում էր և ըստ Քեն Ուորքսի, Կոտովյի ազատագրության բանակը սերտորեն կապված էր ալբանական նարկոմաֆիայի հետ:

## Բնապահպանություն:

1992թ. Բրազիլիայում (Ոյն դե Ժամեյրոյս) կայացած ՄԱԿ-ի բնապահպանության և զարգացման կամաժողովի (UNCED), կամ այսպես կոչված Երկրի Գագարաժողովի ընթացքում հոչակավոր գիտնական դր. Դիրսի Լի Ռեյը վճռականապես բննադատեց բնապահպան ծայրահեղականների անտրամարանական պահանջներն ու փունգավոր առաջարկները: Որպես կենդանաբանության հոչակավոր պրոֆեսոր ու մեկնարան, Վաշինգտոն նահանգի նահանգապետ, Աստոմային ենթքետիկայի հանձնաժողովի նախագահ և քաջմարիվ գիտական պարզեներ ունեցող, Դիրսի Լի Ռեյը առաջ քաշեց և բացահայտեց ՄԱԿ-ի զագարաժողովում տեղ գտած մի քանի փունգավոր առաջարկներ: Նա նախագուշացրեց համընդհանուր կանաչ օրակարգի փունգների նախն: Եր Բնապահպանական շարաշահումներ անվանումով մի հրապարակման մեջ նա գրում է. «Նախ և առաջ մենք պետք է հասկանանք, որ բնապահպանական շարժումները համահունչ չեն փաստերին կամ տրամարանությանը: Արդեն ավելի ու ավելի է պարզ դառնում, որ նշված շարժումները ՄԱԿ-ի գերիշխանության ներքո «Համաշխարհային նոր կարգեր» կամ համաշխարհային կառավարություն ծրագրողների կողմից որպես միջոց են ծառայում՝ կազմակերպելու ինքիշխան ազգությունները և վերադասավորելու համաշխարհային ուժի կենտրոնները»:

Ներկայացնում ենք նաև Ուիլյամ Յեսփերի «ՄԱԿ-ի փունգը» աշխատությունից Մորիս Սքրոնդի վերաբերող հետևյալ հատվածը.

Համաշխարհային բնապահպանական շարժումների հովանավորն ու կազմակերպիչը կանադացի միլիարդատեր Մորիս Սքրոնդն է: Նա արդյունաբերող է, ծայրահեղական բնապահպան, Նոր Դարաշրջանի նվիրյալ, ՄԱԿ-ի պլոտուկրատ, ջերմեռանդ Մեկ աշխարհական տողիալիստ, վճռականորեն տրամադրված գլոբալիստ, Խորայի մեծ բարեկամ ու հովանավոր, Դավիդ Ռոքֆելլերի ու Միհայել Գորքաչովի մոտ ընկեր:

1990թ. կանադացի լրագրող Դենիել Վուլլ Մորիս Սքրոնդից հարցազրոյց վերցրեց Կոլորադոյում գտնվող վերջինիս ընդարձակ կալվածքում: Հարցազրոյցի ընթացքում Մորինգը լրագրողին տեղեկացրեց, թե պատրաստվում է մի ընդարձակ վեա գրել: Դա դնելու եր այս մասին, թե ինչպես են աշխարհի մի քանի աղեցիկ անհատներ որոշում, որ երկրագունդը բնապահպանական աղետից փրկելու միակ ուժին երկրի արյունաբերապես հզոր պետությունների տնտեսությունները խորտակելն է: Նովելի սյուժեն նկարագրելու ընթացքում Մորիս Սքրոնդը

դի արդյունաբերապես հզոր պետությունների տնտեսությունները խորտակելն է: Նովելի սյուժեն նկարագրելու ընթացքում Մորիս Սքրոնդը անդրադառնում է Համաշխարհային տնտեսական ֆորմմին, որը գումարվում է ամեն տարի շվեցարական Դավոս քաղաքում: Այստեղ ամեն տարի վետրվար ամսին հավաքվում են քաջմարիվ երկրների ֆինանսների նախարարներ, վարչապետներ, հանրահայտ ակադեմիկոսներ, գիտնականներ՝ բննարկելու առաջիկա տարվա տնտեսական օրակարգերը: Այս կապայցությամբ Մորիսը ասում է. «Փոս ի՞նչ կլինի, եթե այստեղ(Դավոսում) հավաքած պետությունների դեկավարների մի փորրիկ խոմք հանգեցն այն եզրակացության, որ մեր մոլորակի համար հիմնական փունգը զայխ է զարգացած պետությունների գործունեություններից: Եւ երկիրը փրկելու միակ ճանապարհը այն է, որ այդ պետությունները ստորագրեն համաձայնագիր՝ նվազեցնելու իրենց վճասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Արդյո՞ք հիշյալ մեծ պետությունները կատարեն այդ պայմանը: ումբը որոշում է, որ երկիրը վերահս բնապահպանական աղետից փրկելու համար միանշանակորեն անհրաժշտ է կործանել զարգացած արյունաբերական քաղաքակրթությունները: Արդյո՞ք մենք պարտավոր չենք այդպես գործել», - վերջում հավելում է Մորիս Սքրոնդը՝ այդ պահը արտահայտելով ձեռքի այնպիսի թերև շարժումով՝ կարծեն թե պատուհանից դուրս է նետում ծխախտուր, գրում է լրագրող Վուլլը: Այդ ժամանք նշանակում է, թե միլիոննավոր, նոյնիսկ միլիարդավոր մարդկանց ճակատագրին կարելի է վերջ տալ մատների թերև շարժումով, վերջ դնել նրանց ապրուստին, կյանքի ապահովագրմանը, նրանց բիզնեսին, տներին ու երազանքներին՝ այս բոլորը կատարելով հանուն բարի մտադրությունների (փրկելու համար մոլորակը): Վուլլը շարունակում է. «Ես նրան խում էի հափշտակված, որովհետև այդ ամենը ասում էր ոչ թե մի ինչ-որ գրող, այլ Մորիս Սքրոնդը, որը անձնապես ճանաչում է այս աշխարհի առաջնորդներին, փաստուն Համաշխարհային տնտեսական ֆորումի փոխնախագահն է և գտնվում է հոգրության բարձրակետում: Նա ի վիճակի է դա կատարել»:

Հավանաբար կարևոր է այս հանգամանքը, որ ինչքան մենք ծանոք ենք հարգարժան Մորիս Սքրոնդի գործունեությանը, նա լրցորեն հակված է իրականացնելու իր մտադրությունները: Մորիս Սքրոնդը գլորալ-լիտայի տիպիկ ներկայացուցիչ է, գերհարուստ համայնավար և, լինե-

փոխարեն իրականացնելու իրենց ուսուվիական ծրագրերը: Պետք է նկատել, որ 1917թ. Տրոցկին նույնպես կարծում էր, թե իրենց առաջ քաշադրության մեջ զաղափարները բարենպաստ են լինելու Ռուսաստանի համար:

### Դեղատոմս բռնատիրության համար

ՍԱԿ-ի բազում կողմնակիցներ անկեղծորեն հավատում են, որ համախարհային կառավարության հաստատման դեպքում աշխարհում կրդարեն պատերազմները և կիարատների խաղաղությունը: Սակայն իրակում այս ուսուվիական տեսակետները առաջ են քաշում գլորալիզացիայի ջատագովները՝ բարցնելու համար դաժան իրականությունը: Այսինքն եթե մի կառավարություն ի վիճակի է պարտադրել համաշխարհային խաղաղություն, ապա նույն հաջողությամբ այն ի վիճակի կլինի պարտադրենակ իր համաշխարհային գերիշխանությունը: Այդ պարագայում, եթե գոյություն չի ունենա որևէ ուժ, որը կապարարի իշխանության շարաշահման դեմ, ՍԱԿ-ը կերածվի պատերազմ իրակրող նեխանիզմի, որը ուղղված կլինի նարդկանցից խելու իրենց իրավունքները: աղաղության դիմակի տակ կիաստատվի համաշխարհային բռնատիրություն:

ՍԱԿ-ի գերակայության ներքո համաշխարհային ֆեղերացիա ստեղծելու ծրագիրը հիմնված է սխալ սկզբունքների վրա, քանի որ նախատեսվում է, որ օրենքները պետք է տրվեն կառավարության կողմից: Դրանից հետևում է, որ եթե մեր օրենքները հաստատում է կառավարությունը, ապա այն ցանկացած պահի կարող է դրանք վերափոխել, սահմանափակել կամ վերացնել:

ՍԱԿ-ը համարում է, որ կառավարությունը շնորհում է օրենքները: Սակայն կառավարությունների գերը նարդկանց բնական օրենքները նվիրելը չէ, այլ այդ օրենքների իրագործումը ապահովելը և պաշտպանելը: Ֆրանսիացի տնտեսագետ Ֆրեդերիկ Բաստիեն ներկայացնելով 1850թ. գրած իր «Օրենքի» հիմնական սկզբունքները, ասում է: «Կյանքը, ազատությունը և սեփականությունը գոյություն չունեն, որովհետև մարդը ստեղծեց օրենքը»: Սակայն Բաստիեն նկատում է: «Ե պարադոք է, որ դրանք գոյություն ունեն նախօրոք և հենց այլ հանգամանքն էլ մարդուն ստիպեց հնարել օրենքը»: Իր ասածները պարզաբանելու համար Բաստիեն օրինակ է քերում Ամերիկայի միացյալ նահանգները՝ ասելով, «Նայեցեք Ամերիկային. այն աշխարհի միակ պետությունն է, որտեղ օրենքը կիրառվում է իր բուն նպատակով՝ պաշտպանելու յուրաքանչյուր անհատի ազատությունը և սեփա-

կանությունը»: Բաստիեն կարող էր այս փաստը նկատի առնել, քանի որ Ամերիկայի հիմնադիր հայրերը ոչ միայն կարողացան անկախության հոչակազրի իդեալները նյութականացնել իրենց կազմած կառավարության մեջ, այլ նաև ապահովեցին դրանց շարունակելությունը:

ՍԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովները նույնպես խոստանում են հասարակական բարեկեցություն՝ սահմանելով մարդու այնավիպ «իրավունքները», ինչպիսիք են աշխատանքի իրավունք, կըր-բության կամ բուժվելու իրավունքներ և այլն: Սակայն խնդիրն այն է, որ այդ իրավունքները կարող են ապահովել միայն սոցիալիստական կառավարության վերահսկողության պայմաններում: Օրենքի այսպիսի այլամերումը կարող է ՍԱԿ-ի միջոցով կազմակերպված համաշխարհային կառավարությունը վերածել անարդարության գործիքի: Բաստիեն նկատում է, թե օրենքը պետք է լինի արդարացի՝ որպեսզի պաշտպանի մարդկանց իրավունքները: Ցանկացած օրենքը, որը խախտում է մարդու հիմնական բնական իրավունքները, միանշանակ անարդարացի է: Մատնանշելով այդպիսի օրենքները, Բաստիեն նշում է. «Այդ օրենքները կարելի է ճանաչել այսպիս. եթե նրանք վերցնում են այն, ինչը պատկանում է մի անձի և տալիս են մեկ այլ անձի այն, ինչը իրեն չի պատկանում, ապա դա հենց հիշատակված անարդարացի օրենքն է»:

Հարստությունը բաշխելու սոցիալիստական անարդարացի գաղափարը գործնականում մարդու աշխատանքով ստեղծած հարստության վերահսկման ծրագիր է: Հարստությունը վերաբաշխելու համար նախ անհրաժեշտ է այն բռնագրավել: Եկեք պատկերացնենք, թե գոյություն ունի մի կառավարություն, որը այնքան հզորություն ունի, որ կարողանում է, ենթադրենք, հարկահանման խիստ համակարգով բռնագանձել հարստությունները: Ապա այդ պարագայում որտեղից պետք է հանդէս գա այն ուժը, որը տվյալ կառավարությանը կպարտադրի վերաբաշխել իր բռնագանձած հարստությունը:

ՍԱԿ-ի ստեղծած համաշխարհային կառավարության կողմից անարդարացի օրենքի հարկադրման համար անհրաժեշտություն պիտի առաջանա ստեղծել նաև մի կուռ ոստիկանական համակարգ, որը պետք է ճնշի այդ բռնության դեմ ցանկացած ընդգում: Եթե ՍԱԿ-ը հաջողության հասնի համաշխարհային կառավարության ստեղծման գործում, ապա նրան այլևս հարկավոր չի լինի ունենալ իր ընդհանուր բանկը, որպես ճնշամիջոցների իրականացման գործիք: Ազգերի գինաթափումը, որը իր մեջ ներառում է նաև մարդկանց գինաթափում, ազգե-

րին կզրկի միմյանց դեմ պատերազմելու հնարավորությունից, սակայն դրա փոխարեն կտտեղծվի պատերազմի մի նոր տեսակ. ՄԱԿ-ի կողմից իրականացվող պատերազմ աշխարհի՝ այլև անորոշ բճակչության դեմ: Իսկ ՄԱԿ-ի մշտական բանակը կծառայի որպես «ֆաշադուրյունը պահպանող» ուժ: Այն ոնենալով հսկայական մարդկային ու տեխնիկական հնարավորություն, ցանկացած ազգի կամ անհատի կզրկի իրենց նկատմամբ իրականացվող ազթեսիայից պաշտպանվելու հնարավորությունից: Համաշխարհային կառավարությունը, դադարեցնելով միջազգային պատերազմները, պատճառ կդառնա մի եզակի պատերազմի՝ համայն մարդկության վարած պատերազմի: Իսկ վերջին հաշվով աշխարհում կտիրի ՄԱԿ-ի ամբողջատիրական իշխանությունը:

### Դրամական խարեւորյուն

(Արիվ Բոնբայի «ՄԱԿ-ի ներսում» աշխատությունից):

1944թ. կայացած Դումբարքոն Օքսի համաժողովից մեկ ամիս առաջ փակ հավաքույթ է տեղի ունեցել Նյու Համփշիրի Բրեքբոն Վլուդ քաղաքի Մասոնք Վաշինգտոն հյուրանոցում: Հավաքույթը պաշտոնական կոչվեց ՄԱԿ-ի դրամական և տնտեսական համաժողով: Այդ համաժողովի նայատակ համաշխարհային դրամական հսկողության սահմանում էր, որը էլ ավելի պես է ամրապնդեր ՄԱԿ-ի քաղաքական ու ռազմական վերահսկողությունը:

Բրեքբոն Վլուդում տեղի ունեցած դեպքերի մեծ մասը դեռևս անհայտ է մնում: Համաժողովից պահպանվել են միայն կցկոտոր ծայնազրություններ ու փաստարդերի պատճենները: Համաժողովում Միացյալ Նահանգները ներկայացնում էին Հարքի Դերսեր Ռուայրը, որը ԱՄՆ նախագահ Ռուզվելտի զանձատան քարտուղարն էր (հետագայում դիմակազերծվեց որպես խորհրդային գործակա), պատվիրակության մյուս անդամը Ռայմոնդ Մայքսեն էր, որը համառոտ հուշագրություններ գրեց կայացած համաժողովի վերաբերյալ: Դերսեր Ռուայրը ինքն էր որոշում իր անելիքը և ԱՄՆ-ի որևէ այլ գերական մարմնի առջև հաշվեռու չել:

Բրեքբոն Վլուդում Ռուայրը ներկայացրեց մի ընդարձակ ծրագիր, որով առաջարկում էր ստեղծել մի մարմին, որը կվերահսկի համաշխարհային տնտեսությունը, կվերացնի պետությունների ֆինանսական անկախությունը և հարուստ երկրներից զանձելով նրանց հարստությունը՝ կրաշի աղքատ երկրների միջև: Դերսեր Ռուայրը իր նախագիծը անվանեց Արժույթի միջազգային հիմնադրամ(International Monetary

Fund): Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետև ԱՄՀ) ներկայացվում էր իրեն համաշխարհային խաղաղություն հաստատելու գործիք, իսկ իրականում այն կարելի է առանց չափազանցության համարել համաշխարհային սոցիալիզմի գործիք: Բրեքբոն Վլուդում կապելով խաղաղության շարժման հետ, ԱՄՀ-ի գանձատան աշխատակազմը հնարավորություն ստացավ ամերիկյան ժողովրդին համոզելու օժանդակել Արժույթի միջազգային հիմնադրամի կազմակերպմանը:

Արժույթի միջազգային հիմնադրամը ամերիկյան կոնգրեսին ու ժողովրդին ներկայացվեց որպես միջազգային առևտուրը և տարադրամային փոխարժենները «հավասարակշռող» կառույց և ժողովուրդն ընդունեց, որ կայունությունն ու հավասարակշռությունը այդ քառային օրերին շափազանց տեղին ու անհրաժեշտ են: Իսկ իրականությունն այն է, որ ԱՄՀ-ն միտված էր աշխարհում հաստատել մշտական անկայունության իրավիճակ՝ աղքատ պետություններին իրենցից կախվածության մեջ զցելով, փոխառությունները տրամադրելով, իսկ հարուստ երկրների մասնավորապես ԱՄՆ-ի տնտեսությունը բոլոցնելով: Այդիսի քայրայիշ գործունեության շնորհիվ Արժույթի միջազգային հիմնադրամը համաշխարհային մասշտարկվ ստեղծված անկայունությունը պիտի գործածեր թե հարուստ և թե աղքատ պետությունները մի միասնական տնտեսական համակարգի մեջ ներգրավելու համար: ԱՄՀ-ի տրամադրած փոխառությունները վարկառ երկրին անմիջական կախվածության մեջ են գցում ԱՄՀ-ից: Դրանից քաջի վարկառ երկրի առաջ դրվում են ահավոր պայմաններ, ինչպիսիք են հարկերի բարձրացումը, անհատ ձեռներեցության նկատմամբ ճնշումների ավելացումը, կրթական համակարգի վերաբերյալ:

Կառավարության (Ամերիկյան) կողմից այլ երկրներին տրվող օգնությունները բարոյապես դատապարտելի են, որքան էլ որ դրա կողմանիցները փորձեն այն գովարանել: Արտաքին օգնությունները բարեգործության ակտեր չեն՝ շնայծ հենց այդ համատեքստում են ներկայացվում: Բարեգործությունը այն է, եթե կամովին օգնություն է ցույց տրվում նրան, ով իրականում կարիք ունի օգնության: Իսկ ամերիկյան կառավարության կողմից տրվող արտաքին օգնության գումարը գոյանում է ամերիկյան հարկատուներից համապատասխան բռնի գանձուներ կատարելով, և այդ օգնությունը տրվում է աղքատ պետությունների ամենաքիչ կարիքավոր զանգվածին՝ կոռումպացված իշխանություններին, որոնք այդ գումարների միջոցով շարունակում են

զավրած պահել իրենց կառավարական արողությունները: Այդ օգնությունները նպաստում են միայն այն անձանց շահերին, ովքեր ամենից շատ են պատասխանատու իրենց երկրների քայլաված վիճակի համար: «Նա խրախուսում է՝ կաշուակերությունը և իիշյալ ծրագիրը մտահղացողներից ցանկությամբ երկիրը ընկնում է կախվածության մեջ:

Չնայած այն հանգամանքին, որ Արժույթի միջազգային իիմնադրամը և Համաշխարհային բանկը ստեղծվել են որպես ՍԱԿ-ից անջատ կազմակերպություններ, սակայն դրանք երկուսն էլ հետազայտում մտցվել են ՍԱԿ-ի համակարգի մեջ, որպես դրա մասնաճյուղեր: Համաշխարհային ֆինանսական միասնական համակարգի ստեղծումը, որի մեջ մտնում են նաև համաշխարհային կենտրոնական բանկը և համաշխարհային միասնական տարադրամը, քրեքոն Կուտքում հավաքվածների հիմնական նպատակն էր: Այդ նպատակին հասնելու համար նշված ուժերը մշակել են երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, որով նախատեսում էին աշխարհը բաժանել մի քանի տնտեսական տարածաշրջանների՝ իրենց կենտրոնական բանկերով ու տարածաշրջանային տարադրամներով, որոնք ապագայում կմիանալիք են մեկ ընդհանուր համաշխարհային համակարգի մեջ: Իրենց վերջնանպատակին հասնելու ճանապարհին այս ծրագրի հեղինակներն արդեն ունեն որոշակի ձեռքբուրումներ: Իրենց գործունեությունը Եվրոպայում նրանք սկսեցին 1950-ական թվականներին՝ Ընդհանուր Շուկայի ծնակորման գործընթացով: Որոշ Եվրոպական երկրներ մտավախություն հայտնեցին, թե այդ կազմակերպությունը կարող է բացասաբար ազդել իրենց ինքնիշխանության վրա, սակայն Ընդհանուր Շուկայի հիմնադիրները նրանց հավաստիացրեցին, թե իրենց իիմնած կառույցը ընդամենը «ազատ առևտրի կազմակերպություն» է: Սակայն մի քանի տարի անց, երբ այդ կառույցին միացան ավելի շատ երկրներ, այն սկսեց ավելի շատ նմանվել տարածաշրջանային կառավարության: Այն փոխեց իր անվանումը՝ նախ կոչվելով Եվրոպական Տնտեսական Համայնք (*European Economic Community*), ապա Եվրոպական Համայնք, իսկ վերջում՝ Եվրոպական միություն (*European Union*): Ապա այդ կառույցն սկսեց շարունակարար հավակնություններ ցուցաբերել՝ տիրանալու իշխանության այլ լծակների: 1998թ. Ֆրանկֆորտում (Գերմանիա)ստեղծվեց նաև Եվրոպական կենտրոնական բանկը, իսկ 2002թ.-ին՝ Եվրոպական միասնական տարադրամ՝ «Եվրոն»:

Այժմ Եվրամիության բարձրաստիճան պաշտոնյաները ծրագրում են իրենց կողմից որպես «ներգրավում» ներկայացվող գործընթացի հաջորդ

փուլը, որը պետք է լինի նախկինում Եվրոպական անկախ ազգությունների ինքնիշխանության մնացորդների վերացումը: Մշակվում է նաև Եվրոպական սահմանադրությունը, որը օրենքի ուժ կտա արդեն գոյություն ունեցող Եվրոպական խորհրդարանի և Եվրոպատարանների վճիռներին:

Այդ ծրագրերն իրականացնող ուժերը նախագծել են Եվրոպայի օրինակով աշխարհի մնացած հատվածներում ևս ստեղծել տարածաշրջանային տնտեսական գոտիներ, որոնք հիմք կհանդիսանան ապագա տարածաշրջանային կառավարությունների համար, իսկ դրանց կազմակուրումից հետո ստեղծված տարածաշրջանային միավորները պետք է համախմբվեն մեկ համակարգի մեջ:

